


ԱՇԽԱՏԱՆՔ  
ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

ՄԱՐՏՈՒՆԱԿԱՆ


1928



# ԱՇԽԱՏԱՆՔԸ

## ԼԵՆԻՆՑԱՆ ԱՆԿՑՈՒՆՈՒՄ

Հ 25201



---

Հրատարակություն Հայկական Հռածիք Գիվիգիայի  
Քաղաքական Բաժնի

---

ՄԱՐՏՈՒՆԱԿԱՆ

1928



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ ՄԱՐՏՈՆԱԿԱՆԻ ՏՊԱՐԱՆ

Պատուի № 585.

Տերառ 1000.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ե՞նչ և լենինյան անկյունը. վորոն և նրա տեղը քաղաքական աշխատանքի ընդհանուր սիստեմում, վորոն և նրա նշանակությունը և վորոնք են նրա խնդիրները:

Այդ հարցին կարող են արվել զանազան պատասխաններ: Կարմիր բանակայինի հայեցակետից—լենինյան անկյունը այն վայրն ե, վորտեղ կարելի յե նստել, հանգստանալ, թերթ և գիրք կարգավ, իրեն հետաքրքրող հարցի մասին տեղեկություններ ստանալ, վորտեղ կազմակերպվում են խաղեր, մրցակցություններ և յերեկույթներ, վորտեղ աշխատում են խմբակներ, վորոնց մեջ լենինով կարելի յե սովորել քաղաքական և ընդհանուր զբաղացություն, ավելի խորն ուսումնասիրել ռազմական զործը:

Վաշարի քաղղեկի համար—լենինյան անկյան աշխատանքը—ամենից առաջ վաշտում տարվող ուղղման քաղաքական աշխատանքի բնագավառներից մեկն ե, կարմիր բանակայինի ուղղմաքաղաքական դաստիարակության և պատրաստության միջոցներից մեկը:

Կուսակցական քջիջի և կուսակցության աջակցող խմբակի համար,—լենինյան անկյունը,—այն Ծանկներից մեկն ե, վորոնց միջոցով նրանք իրականացնում են իրենց ազգեցությունը կարմիր բանակայինների վրա, համախմբում նրանց իրենց շուրջը, աշխատանք են տանում կոմյերիտականների, կարմիր բանակային ակտիվի, կարմիր բանակային լայն մասսայի կոմունիստական դաստիարակության ուղղությամբ:

Վերջապես, յեթե լենինյան անկյունը քնններ կարմիր բանակում տարվող քաղաքական աշխատանքի ընդհանուր սիստեմի մեջ, ապա նրա աշխատանքը պետք ե զասվի քաղաքական աշխատանքի այն բնագավառին, վորը կրում է արտադպրոցական անունը: Այդ առումով լենինյան անկյունը—արտադպրոցական կազմակերպություններից մեկն ե, վորի մեջ լենինյան անկյունից բացի, մանում են նաև կարմիր բանակային ակումբը և կարմիր բանակի տունը:

# ԼԵՆԻՆՑԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Փորձենք լենինյան անկյան այդ բոլոր բնորոշումները ընդհանրացնել և շտկել:

Ամենից առաջ պետք է պարզ լինի, վոր լենինյան անկյան աշխատանքը բաղաբական ամբողջ աշխատանքի անքակտելի մի մասն է: Այդ ուղղությամբ վոչ մի կասկած լինել չի կարող:

Այդ նշանակում է, թե խոսել լենինյան անկյան խնդիրների մասին—միենույն է, թե խոսել քաղաքական աշխատանքի ընդհանուր խնդիրների մասին: Քաղաքական աշխատանքի խընդիրներից զատ, լենինյան անկյունը, աշխատանքի հատուկ խնդիրներ չունի:

Սակայն, սխալ կլիներ ասել թե լենինյան անկյան խընդիրները չեն տարբերվում քաղաքական աշխատանքի ընդհանուր խնդիրներից և մասնավորապես քաղաքարտապետների խնդիրներից և վերջակետ դնել Քաղաքական աշխատանքի ամբողջ սխաեմում լենինյան անկյունը, վորպես արտապլոցական կազմակերպություն, կատարում և հատուկ քաղաքական աշխատանքի մյուս բնագավառների ֆունկցիաներից տարբերվող փունկցիաներ:

Իսկ ի՞նչ և արտադպրոցական աշխատանքը: Բգեք արտադպրոցական աշխատանքի շուրջը գումարված խորհրդակցության բանաձելը հետեւյալ պատասխանն և տալիս այդ հարցին—«արտադպրոցական աշխատանքը կարմիր բանակում տարվող քաղաքական աշխատանքի այն մասն է, վորի անմիջական նշանակությունն և կազմակերպել զինվորական ծառայողների աղասի ժամանակը՝ ուղմիկ քաղաքացի զաստիարակելու և կարմիր բանակի մարտունակության ամրապնդման ընդհանուր նպատակներով»: Այդ նույն՝ այսինքն կարմիր բանակի հաճգիւտը կազմակերպելու նպատակն և հետապնդում լենինյան անկյունը:

Այդ բնորոշումից իր ամբողջ պարզությամբ բղիսում են լենինյան անկյան անելիքները և վորոշում և նրա տեղը վաշտային աշխատանքի ընդհանուր պլանում: Կարմիր բանակայինը պարտավոր է վորոշ ժամերին ներկա գտնվել քաղաքական և ուղմական պարապմունքներին: Բացի դրանից, նա կատարում է մի շարք պարտադիր աշխատանքներ—հերթապահություն, որավորակ և այլն: Մնացած ժամանակ, նա պարտադիր աշխատանքից ազատ է և կարող է կարգադրել ժամանակն իր ցան-

կացած ձեռվ (ի հարկե, զոյություն ունեցող կանոնագրքերով  
սահմանված ըրջանակներում), Պարզ ե վոր քաղաքարատի և  
կուսակցական կազմակերպությունների ռուաջ ծառանում և կա-  
րենոր խնդիր—ողտագործել կարմիր բանակայինի դաստիարա-  
կության համար վոչ միայն ուսուցման ժամերը, այլ և ուսու-  
ցումից դուրս ընկնող ժամանակը, կարմիր բանակայինին բաց  
չթողնել իր ազդեցությունից և հանգստի ժամերին: Այսաեղ ել  
սկսվում ե արտադպրոցական կազմակերպությունների, և առա-  
ջին հերթին լենինյան անկյան աշխատանքը: Կազմակերպելով  
կամավոր, հետաքրքիր, զրադեցուցիչ, այլև միաժամանակ ոգ-  
տակար աշխատանք, բավարարելով կարմիր բանակայինի գանա-  
զուն պահանջները, արտադպրոցական կազմակերպությունները,  
դրանց թվում և լենինյան անկյունը հնարավորություն են տա-  
լիս շաղկապելու կարմիր բանակայինի հանգստի պահանջը  
ուսումագաղաքական դաստիարակության խնդիրներին և դրանով  
իսկ նպատակահարմար կազմակերպելու և ընդդրկելու կարմիր  
բանակայինի հանգիստը:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Լենինյան անկյան գլխավոր հատկությունը, արտադպրո-  
ցական կազմակերպությունների հետ համեմատած, կայանում է  
նրանում, վոր նրա աշխատանքը ծավալվում և կարմիր բանա-  
կային հանրակացարանում, զորանոցում: Իր աշխատանքով լե-  
նինյան անկյունը կարող է ընդգրկել կարմիր բանակայինին  
ամենին ականորեն՝ ամենորյա զորանոցային կենցաղում: Այստե-  
ղից ել բղխում և լենինյան անկյան, վորպիս արտադպրոցական  
ստորին կազմակերպության ակրող նշանակությունը: Փորձը  
ցույց ե տվել, վոր բոլոր կարմիր բանակայիններն ակումբ, իսկ  
առավել ևս կարմիր բանակի տուն չեն հաճախում, վորովհետեւ  
դրանք վաշտից դուրս են տիղավորված:

Այդ հաստատությունները հաճախում են ավելի զարգացած,  
ավելի ակտիվ կարմիր բանակայինները, վորոնց չի բավարարում  
վաշտային աշխատանքը, զրանք են միամյակները, հին կարմիր  
բանակայինը, կոմյերիտականը և կրտսեր հրամանատարը: Ավե-  
լի պակաս ակտիվ, ավելի պակաս զարգացած, ավելի պակաս  
զրագետ կարմիր բանակայինը կանոնավոր չի հաճախում ակումբ,  
շարունակ չի մասնակցում նրա աշխատանքին: Այն ինչ, լենին-

յան անկյունը, վորն աշխատանքը ծավալում և հենց զորանուցում, զրավում և նույնիսկ քիչ զարգացած կարմիր բանակայինին, հենց թեկուղ նրա համար, վոր լենինյան անկյունը ավելի լուսավոր և, քան զորանոցի մյուս անկյունները, վոր այնտեղ կան խաղեր, թերթ, և զրավիչ զրգույի: Այսպիսով այն ժամանակ, յերբ զնդային ակումբը հիմնականում հավասարվում և զարգացած բանակայինին, լենինյան անկյունը կոչված և սպասարկելու շարքային պակաս չափով ակտիվ և զրագետ կարմիր բանակայինին: Յեթև զրա հետ միասին հաշվի առնենք այնու վոր ակտիվ կարմիր բանակայինները կարմիր բանակային ամբողջ մասսայի մեջ փոքրամասնություն են կազմում, ապա պարզ կլինի, վոր լենինյան անկյան բաժին և ընկնում վասեի հսկայական մեծամասնության սպասարկելը: Այս թե ինչու արտադպրոցական բոլոր կազմակերպությունների մեջ լենինյան անկյան աշխատանքը բացառիկ կարեոր նշանակություն և ձեռքբերում:

## ԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԸ — ԲԶԻՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԶԱ ՅԵ

Լենինյան անկյունը, քաղաքական պարապմունքներին հավասար, հանդիսանում և քաղղեկի՝ վորպես վաշտի ամբողջ քաղաշխատանքի կաշմակերպչի և ղեկավարի աշխատանքի անբաժն մասը: Միենալու ժամանակ, լենինյան անկյունը լայն բազա յետուայում վաշտային բջիջի և աջակցության խմբակի աշխատանքի համար:

Մի կողմից կուսակցության անդամներին ու կոմյերի տականներին մասնակից գարձնելով լենինյան անկյան աշխատանքին, բջիջն ու աջակցության խմբակը կարող են շատ շատ շվագի կարմիր բանակայիններին, նրանց հանգստի ժամանակ, իրականացնել իրենց ամենորյա ազգեցությունը կարմիր բանակային մասսայի վրա, և համախմբել նրանց իրենց շուրջը: Մյուս կողմից, լենինյան անկյունը կուսակցական բջիջի համար միջոց և հանդիսանում կուսակցության անդամներին, կոմյերի տականներին և անկուսակցական կարմիր բանակային ակտիվին հասարակական աշխատանքում գործնական դաստիարակություն տալու գործում: Վերջապես վաշտային արտադպրոցական աշխատանքը վորոշ աստիճան կարող և աջակցել կուսակցության յերիտասարդ անդամների, կոմյերի տականների և կուսակցության

մոտ կանգնած կարմիր բանակայինների ռազմա-քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Այդպիսով—լենինյան անկյունը—արտազարցական ռազմի կազմի կերպություն է: 'Երա անմիջական անելիքն և՝ կազմակերպել կարմիր բանակայինի հանգիստը՝ ռազմիկ բաղակացի զատիքարակելու յեվ կարմիր բանակի մարտունակությունը քառարացնելու ընդհանուր նախակեներով: 'Նա ռազմական յեվ ռազմա-քաղաքական աշխատանքը ծավալում և անմիջապես զուրոցում յեվ ընդգրկում է վաստի կարմիր բանակայինների եթուկայական մեծամասնությունը յեվ բազա ծառայում բարձր յեվ կուսակցության աջակցող կոմյերիտական խմբակի աշխատանքի համար:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆԵՐԸ

Արտադպրոցական աշխատանքը—քաղաքական աշխատանքի հատուկ բնագավառ է: Այդ ամենից առաջ նշանակում է, թե արտադպրոցական կազմակերպությունները և զրանց թվում լենինյան անկյունը վարում են, կարմիր բանակայինի ռազմաքաղաքական ուսուցման գործը հատուկ ձևերով, այլ կերպ, քան քաղաքական աշխատանքի մնացած բնագավառները: Արտադպրոցական աշխատանքի առանձնահատկությունները,—ասկած և բարեկարգ արտադպրոցական աշխատանքի շուրջը գումարված խորհրդակցության բանաձևում,—կայանում և նրանում, վորոշության վրա և կամավորական սկզբունքների վրա, լայն ինքնազորենեյության վրա, նրա մասնակիցների հասարակականությունների հանգանական պահանջման մասնակիցների առնելի զինվորական ծառայողի հանգստի պահանջը և լիովին ապահովի այդ հանգիստը:

## ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան լենինյան անկյան աշխատանքը հանդիսանում է կարմիր բանակային հանգիստը կազմակերպելու մի միջոց, ապա այնքան նա պետք է կառուցվի կարմիր բանակայինների անպայման կամավորականության սկզբունքներով: Դրանումն է արտադպրոցական աշխատանքի առաջին և հիմնական տարրերությունը պարտագիր ծառայությունից: Քաղաքական և ռազմական պարագմունքներում կարմիր բանակայինը պարտավոր է ներկա գոտին զինվորական կարգապահության կարգով: Լե-

նինյան անկյան աշխատանքին նա մասնակցում է միսիացն իր ցանկությամբ։ ստիպել նրան զրանում, անթույլատրելի յեւ Ամեն մի ստիպունք լինինյան անկյունում, ինչ ձեռվ կը նա ուզում է արտահայտվի, կարմիր բանակայինի հանգստի կոպիտ խախտում կլինի։ Իր ազատ ժամանակը կարմիր բանակայինը կարող է ոգտագործել իր սեփական հայեցողությամբ, իսկ արտադրողական աշխատանքի անելիքն ել հենց կայանում է այդ ժամանակի ոգտակար և խելացի կազմակերպման միջ, սաւկայն կազմակերպել այն, չխախտելով կարմիր բանակային կումայրուականությունը, առանց աննշան վարչավորման և ստիպման։

Կոմմավորականության հարցը չափազանց ակտուալ հարց է հանդիսանում։ Բանն այն է, զոր լինինյան անկյան աշխատանքում հաճախ հանդիպում ենք կամավորականության սկըզբունքի խախտման։ Ճիշտ է, մեծ մասամբ այդ խախտմանը բողոքում են—կարծեն թե ուղղակի հրաման չի տրված լինինյան անկյունը գնալու համար, բայց այդ հրամանին փոխարինում է կամ հրամանատարի չափազանց համառ առաջարկը, զորից կարմիր բանակայինը չի կարող հրամարվել, կամ թե չե կարմիր բանակայինը լինանկյունն է կանչվում վաշտի որպահնի միջոցով և այն։ Նույնիսկ կասկածներ են հայտնում այն մասին, թե լինինյան անկյան աշխատանքը կարելի յեւ կառուցել լիսկատար կամավորականության հիման վրա Նման կառկածների դեմ, այլ և բոլոր տեսակի «կամավոր-ստիպողական» մեթոդների դեմ պետք է վճռական պայքար տանել, հիշելով, զոր առանց կամավորականության արտադրողական աշխատանքը կուտարի արտադրաբար տարադրուցական աշխատարք լինելուց, կը կորցնի իր բնույթը, զորպես կարմիր բանակային հանդիսատր կազմակերպելու մի միջոց։

## ՊԵՏԾ Ե ՀԵՏԱՄՐՄԵՑՆԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻՆ

Իսկ ինչպես կարելի յեւ հասնել նրան, զորպեսդի առանց ստիպողական մեթոդներ զործադրելու կարմիր բանակային կամավոր կերպով մասնակցի լինանկյան աշխատանքին։ Այդ հարցի պատասխանը միայն մեկը կարող է լինել Կարմիր բանակայինը աշխատանքում կամավոր մասնակցություն ցույց կտա միայն այն դեպքում, յերբ նա զրանում շահագրգռված լինի։ Վորքան լինինյան անկյունը հրամարվում է ստիպողա-

կանությունից, այնքան նրա հիմնական անելիքն և կառուցելի իր աշխատանքն այնպես, վորաբեզզի կարմիր բանակայինը նըրանով հստաքքրդիվ նշելով իր աշխատանքի բովանդակությունը, ընտրելով նրա ձեւը, լենինյան անկյունը պեսք և շարունակ եաւ հասվի ճօսի իր կարմիր բանակայինի հարցումների հետ, նրա պահանջների հետ և բավարարի նրանց կարմիր բանակայինների պահանջների և հարցումների բավարարման հարցը իր ամբողջ հասակով ժառանում և և քաղաքական աշխատանքի մյուս բնագավառների առաջ (մասնավորապես, քաղաքարապեմունքների առաջ, վորտեղ կարմիր բանակայինի ներկայությունը պարտադիր և): Առավել ևս լենինյան անկյան համար նա գրված և շատ սուր կերպով, Գործնականում թե վորքան ձիշտ և լիովին կլուծվի այդ խնդիրը, գրանից ել, ըստ եյության կանուգած և ամբողջ արտադրուցական աշխատանքի կենսունակությունը և հաջողությունը:

## ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնագործունեյությունը, կամավորականության հետ միասին, հանգիսանում և լենինյան անկյան աշխատանքի հիմնական սկզբունքը: Լենինյան անկյունը պետք և կառուցի իր աշխատանքն այնպես, վորաբեզզի կարմիր բանակայինը նըրան կամավոր կերպով ժամանակցելով, լինի վոչ թե պասիվ զիտող, ունկնդրող կամ հաճախորդ, այլ աշխատի այնտեղ—ինքնուրույն և ակտիվ կերպով, ինքը հայտաբերի իր նախաձեռնությունը, ձեռներեցությունը: Ընդունենք, որինակ, թե զորամասի տարեգարձի որը պետք է զարգարել լենինյան անկյունը: Այդ կարելի յե իրականացնել յերկու ճանապարհով: Նախ, կարելի յե այդ աշխատանքի իրագործումը հանձնարարել պարտադիր կատարման կարգով մի քանի կարմիր բանակայինների, հրամայելով նրանց այսինչ տեղում կախել այն նկարները, այսինչ պլակատը, զրոշակը և այլն: Կարելի յե վարվել և այլ կերպ: Նախորդք շահագրգուելով կարմիր բանակայինին կարելի յե նրանց իսկ առաջարկել մշակել լենինյան անկյան զարդարման պլանը: Քաղղեկի և հրամանատարի ղեկավարությամբ, նրանք իրենք կհայտարեն իրենց նախաձեռնությունը, ինքնագործնեյությունը, իրենք կնշեն զարդարման կարգը, իրենք իրենց մեջ կրաշինն պարտականությունները, իրենք կպատրաստեն և կկախեն նկարները, պլակատները, զրոշակները: Ցեղե առաջին դեպքում այդ

հանձնաբարությունը (լենինյան անկյան գարզարելը) կատարվել է հրամանի կարգով, ապա յերկրորդում նրա իրականացումը կատարվել է կարմիր բանակային իսկական ինքնազործնեյության հիմունքների վրա Պարզ և, վոր լենինյան անկյունը պետք է ընտրի յերկրորդ ճանապարհը և իր ամբողջ աշխատանքը տանի ինքնազործնեյության հիմունքներով, այսինքն, կարմիր բանակայինի ակտիվ, ինքնազործոն և նախաձեռնող աշխատանքի հիման վրա Այդ հանգամանքը շարունակ պետք է հաշվի առնի արտադպրոցական աշխատանքի կազմակերպիչներից և գեկավարներից յուրաքանչյուրը և միշտ նկատի ունենարդոր զլիավոր աշխատանքը կայանում և վոչ թե կարմիր բանակայինի «ժառայելու» մեջ, այլ նրանում, զորպեսզի կարգավորվի կարմիր բանակայինի ինքնուրույն աշխատանքը, զեկավարվի և ուղղություն տրվի նրան:

Զպետք ե, ի հարկե, մտածել, թե լենինյան անկյունը իր վրա յե վերցնում կարմիր բանակայինի ինքնազործնեյության մինաշնորհ իրավունքը, կարմիր բանակայինի ինքնազործնեյության զարգացման խնդիրը զրված է անգամ պարտապիր վարժական պարապմունքների հիմքում, հատկապես ներկա պայմաններում, յերբ կարմիր բանակային ակտիվությունն որեցոր աճում է: Բայց վարժական պարապմունքների համար այդ խնդիրը այնքան վճռական բնույթ չի կրում, զորքան կրում և լենինյան անկյան աշխատանքի նկատմամբ:

Լենինյան անկյունում տարած կարմիր բանակայինի ինքնազործոն աշխատանքը չափազանց զբական իմաստով և անզրագունում կարմիր բանակայինի մեջ նախաձեռնության, ակտիվության, շրջապատից ինքնուրույն կերպով զլուխ հանելու կարողության, հնարապիտության, և ժամանակակից մարտիկի չափազանց կարեւը մի շարք հատկություններ ձեռք բերելու վրա:

## ՀԱՍՏՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնազործնեյության հարցին անմիջականորեն կապվում է հաօարակայնության հարցը:

ԲԳԿԲ զորամասերի ակումբների և լենինյան անկյունների նորմալ կանոնազիրքը լենինյան անկյունը բնորոշում է վորպես լայն հասարակայնության սկզբունքներով կառուցվող մի կազմակերպություն: Դրանով նախ ընդգծվում է, թե լե-

Դինյան անկյունում՝ կարմիր բանակայինները աշխատում են վոչ միայն ինքնուրույն, այլ և Կոլեկտիվ կերպով, միատեղ ինչ ել վոր ձեռնարկի լենինյան անկյունը, լինի այդ յերեկույթ, կարմիր բանակայիններն հետաքրքրող մի վորե և հարց ուսումնասիրող խմբակ—այդ ձեռնարկումը մեծ մասսամբ կազմակերպվում է կարմիր բանակայինների և հրամանատարների միասնական քննիանուր ջանքերով։ Յերկուրգ, այդ նշանակում է, թե մասնակցելով լենինյան անկյան աշխատանքին, կարմիր բանակայինը ստանում է վոչ միայն գիտելիքների և սովորքների վորոշ գումար իր համար, այլ և հնարավորության սահմաններում մասնակից և արվում լենինյան անկյան վաշտում տարվող ընդհանուր աշխատանքին, այսինքն, ինչպես յերբեմն այդ ձեռակերպում են հասարակական ոգտակար աշխատանքի մեջ։ Լենինյան անկյունը պետք է ձգտի, որինակ, վորապեսզի այս կամ այն հարցը ուսումնասիրող կարմիր բանակայինների խմբակը վոչ միայն բավարարի իր պահանջները, այլև կիսի իր տեղեկությունները և նյութերը մյուս կարմիր բանակայինների հետ, կարմիր բանակային մասսայի մեջ փոխադրի իր ստացածը։ Յերրորդ՝ զրանով և վորոշվում լենինյան անկյան ղեկավարության հատուկ բնույթը, հատուկ սեփողները, Ընտրելով լենանկյան խորհուրդ, քննելով վերջինիս աշխատանքի ծրագրիը և այլն, կարմիր բանակայիններն իրենք մասնակցում են վաշտում արտադպրոցական աշխատանքը կազմակերպելու մեջ, իրենք մասնակից են լինում լենինյան անկյան ղեկավարությանը, վերջինս վաս հայտաբերվում է լենինյան անկյունը քաղաքական պարագմունքներին համագրելիս, պարագմունքներ, վորտեղ կարմիր բանակայինը չի մասնակցում և չի կարող մասնակցել ծրագրի, մեթոդների և աշխատանքի կազմակերպման հարցերի քննությանը։

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

Այդ անկյան տակ քնննենք և լենինյան անկյան ներքին կարգապահության բնույթի հարցը։ Արտադպրոցական աշխատանքի կամավոր և հասարակական բնույթը չի կարելի մեկնարանել այն իմաստով, թե լենինյան անկյան համար կարգապահության հարց չի գրվում։ Առանց ամուր, ներքին կազմակերպվածության և կարգապահության, լենինյան անկյունում աշխատանք տանելն անհնար և—հակառակ ղեպքում, լենինյան

անկյունը կազմակերպություն չի լինի։ Բայց կարգապահությունը լինին տնկյունում, իր բնույթով, պէտք և խիստ տարբերվի վարժական պարապմունքների կարգապահությունից վարժական պարապմունքներում կարմիր բանակայինը պարտավոր ե պահպանել կարգապությունը, անկյախ նրա ցանկությունից։ Աշխատելով լինինյան անկյան խմբակում, կարմիր բանակայինը պահպանում ե մի շարք կանոններ, վորոնք սահմանվել են կոլեկտիվ կերպով այդ խմբակի մասնակիցների կողմից, սակայն պահպանում ե նրա համար, վորովհետև կամավոր կերպով, սեփական ցանկությամբ հանձն ե առնում վորոշ պարտականություններ կատարել։ Լինինյան անկյան կարգապահությունը կրում ե վոչ թե զինվորական, այլ հասարակական կարգապահության բնույթ, այդ կարգապահությունը կոթմում ե վոչ թե ստիպողականության վրա, այլ «այն պատասխանատվության վրա, վոր կրում և յուրաքանչյուրն իր աշխատանքի համար կազմակերպության առաջ, այն կազմակերպության, վորի մեջ նա մտնում ե, այլ և ամրող կարմիր բանակային մասայի առաջ» (նորմալ կանոնազրություն)։ Այլ կերպ սասած, կամավորականության հարցը բնավ չի բացասում լինինյան անկյունում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունը, բայց տալիս ե այդ կարգապահությանը կամավոր, հասարակական բնույթը, ամենորյա աշխատանքի միջոցով խնդիր և դնում՝ յուրաքանչյուր կարմիր բանակայինի մեջ դաստիարակել հասարակական պատասխանատվության զգացում՝ ձեռնարկած աշխատանքի կատարման հանդեպ։

## ՀԱՍՏՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՐՏՈՒ- ՆՎԿՈՒԹՅՈՒՆԸ

Բայց կարող ե պատահի, վոր զինվորական կարգապահության ամրացման պայմաններում լինինյան անկյան կամավոր հասարակական բնույթը վնասակար կանդրադառնա զորամասի մարտունակության վրա միայն նրա հետեւանքով, վոր հրամանատարը աշխատելով լինինյան անկյունում, կարմիր բանակայինի հետ կողք-կողքի, «հավասար իրավունքներով», կկորցնի իր հեղինակությունը։ Այդպիսի կասկածները վորոշ հիմք կունենային, յեթե ինքնազործներության և հասարակակայնության զարգացման հարցի հետ միասին չդրվեր այդ հասարակայնությունը ճիշտ հունով տանելու հարցը։ Ճիշտ դեկազմակայնության

գեղքում հասարակայնությունը վոչ միայն չի անդրադառնա զորամասի մարտունակության ամրապնդման խնդիրների վրա, այլ հանդիսանա նրա ամրապնդման գլխավոր ճանապարհներին մելք: Հիշենք, վոր «ԲԳԿԲ դաշտային կանոնագիրքն առում և մի քանի անգամ, թե զորամասերի մարտունակության յերաշխիքը հանդիսանում է «ներքին զորումն ու կարգապահությունը», և «հրամանատարի անձնական շփումը յենթակա զորքերի հետ՝ լավագույն միջոցն ե զորքերի կառավարումը կենսունակ զարձնելու, փոխադարձ հասկացողություն, հայացքների ընդհանրություն մշակելու և փոխադարձ վատահություն սահմանելու զործում»: Կասկած չկա, վոր կարմիր բանակայինների սերը, կազմակերպված, կամավոր աշխատանքը լինինյան անկյունում, չտեսնված չափով նպաստում ե այդ խնդիրների իրականացմանը: Աշխատելով իր ընկերների հետ միատեղ, կազմակերպված, կարմիր բանակայինը զաստիարակվում ե ամուր մարտական միաձուլության վոզով: Աշխատելով հրամանատարի զեկվարությամբ, կարմիր բանակայինը վարժվում է նրա մեջ տեսնել վոչ միայն իր պետին, այլ և ավագ ընկերոջը, վորն անկասկած նպաստում ե կարմիր բանակայինների մեջ հրամանատարի հեղինակության բարձրացմանը: Այդպիսով հասարակայնությունը լինինյան անկյունում չի դիտվում, վորպես ինքնիշխող վոր և բան, այլ ամենից առաջ նա յենթարկված ե զորամասի մարտունակության ամրապնդման ընդհանուր խընդիրներին:

## ԻՆՖՆԱԳՈՐԾՆԵՅՈՒԹՅՈՒՆ. ՎՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴ

Աշխատանքի մեթոդիկայի տեսակետից—ինքնազործունեցությունը նույնպես միշտ ապահովում է ամենալավագույն արդյունքները: Այսպես, որինակ, խոսակցություններով և պատճություններ անելով կարմիր բանակայինին դիպուկ կրակել չես սովորեցնի: Դրան կրակելի յե հասնել, միայն նրան հնարավորություն տալով ինքնուրուց կերպով վարժվելու նշանացույցային հաստոցի վրա, կրակելու վորձ ձեռք բերելով և այլն: Ճիշտ նույնպես, ուրիշ վոր և աշխատանքում ես կարմիր բանակայինին պետք ե հնարավորություն տալ ինքնուրուց կերպով քննելու իրեն հետաքրքրող հարցը, կարդալու անհրաժեշտ նյութը համապատասխան դեկավարությամբ, ինքնուրուց կեր-

սուր հանգելու անհրաժեշտ յեղբակացության, և ենինյան անկյան գործնեյությունը կառուցելով կարմիր բանակայինի ինքնուրության աշխատանքի հիման վրա, մենք դրանով հնարավորություն կունենանք ավելի խորը ներգործելու կարմիր բանակայինի վրա, ավելի հաջողությամբ տիրելու նրա պահանջներին և տրամադրություններին:

## ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՃԵՎԵՐԸ

Արտադպրոցական աշխատանքի սկզբունքներն առաջար դրում են մի շարք պահանջներ գեպի այդ աշխատանքի ձևերն ու մեթոդները: Այդ գուհնիկ չի կարելի հասկանալ, այն իմաստով, թե կան ինչ վոր հատուկ արտադպրոցական ձևեր ու մեթոդներ: Աշխատանքի ձևերն ու մեթոդները, վորպես այդպիսին, միատեսակ են ինչպես քաղաքարապմունքների, այնպես ել լենինյան անկյան համար: Զետ վոչ մի եւ և մեթոդ, վորը կարող ե գործադրվել քաղաքարապմունքներում, բայց չի կարող ոպտագործվել լենինյան անկյունում և ընդհակառակը: Բայց գոյություն ունեցող բոլոր ձևերից արտադպրոցական աշխատանքի համար պետք է կարողանալ ընտրել նրանք, վորոնի ամենից ավելի համապատասխանում են արտադպրոցական աշխատանքի սկզբունքներին, այսինքն, առաջին հերթին նրանք, վորոնք ամենից շատ ապահովում են կարմիր բանակային ինքնազորձնեյության զարգացումը և կարմիր բանակայինի հանգիստը: Հատկապես այդ անկյան տակ պետք է մոտենալ արտադպրոցական աշխատանքի մեթոդիկայի հարցերի անալիգին:

Արտադպրոցական աշխատանքում գործադրվելիք ձևերը, այլ և բովանդակությունը—չափազանց քաղմազան են և բազմաթիվ: Զեր բազմազանության տեսակետից—արտադպրոցական աշխատանքը պետք է անվերջ ձկուն լինի, քան պարտադիր ուսուցումը, վորովհետև միայն այդ դեպքում նա կկարողանալ լայն չափով հայտարերել և ընդգրկել կարմիր բանակային մասսայի ամենալայն և տարբեր խավերին:

Ավելորդ չեր լինի հիշատակել և այն մասին, վոր կարմիր բանակային մասսային ընդգրկելու միջոցների տեսակետից, արտադպրոցական աշխատանքը սովորաբար բաժանում են տեսակների: Լենինյան անկյան համար այդ տեսակներից հիմնականները կհանգիստանան.—մասսայական աշխատանքը, վորը

պետք ե սպասարկի կարմիր բանակայինների լայն մասսաներին և խմբակների աշխատանքը, վորը պետք ե սպասարկի կարմիր բանակայինների առանձին խմբերին, և հետևաբար ավելի ապահովի խորացրած աշխատանքի հնարավորությունը, քան անում ե այդ մասսայականը:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Խոսելով լինինյան անկյան աշխատանքի կամագոր բնույթի մասին, կարմիր բանակայիննի ինքնազործնեյության զարգացման մասին, և կարմիր բանակային հանգստի կարիքները բավարարելու մասին, մենք ամբողջ ժամանակ հանգում եյինք մեկ հիմնական հարցի, կարմիր բանակայինի ռահագրգովածությանը: Այդ հարցը լինինյան անկյան համար բացառիկ կարենը հարց եւ Շահազրգոված չլինելով, կարմիր բանակայինը կամացոր կերպով լինինյան անկյուն չի գնա, վոչ մի ինքնազործնեյություն չի հայտաբերի, իր համար հանգստի այլ վայր և միջոցներ կփնտոր: Հաճախ զործնական աշխատանքում այդ հանգամանքը բավարար չափով հաշվի չի առնվում: Հենց այդտեղ ել պետք ե փնտուել արտադպրոցական աշխատանքի շատ անհաջողությունների պատճառները:

Կարմիր բանակայիններին գրավելու համար, իր ամեն մի աշխատանքը լինինյան անկյունը պեսէ ե սկսի՝ ինչ կարսիր բանակայինին հետաքրքրում ե սվայլ մոսենքից—ահա մի որենք, վորը պետք ե հաստատ հիշի արտադպրոցական աշխատանքի յուրաքանչյուր կազմակերպիչ ու ղեկավար: Սակայն այդ որենքը կարիք ե զգում մի շարք պարզաբանումների: Միանգամից հարց կարող ե ծագել այն մասին, վոր նման պահանջը հակասում ե արտադպրոցական աշխատանքի հիմնական անելիքներին, վորը մարտիկի զաստիարակության ձեերից մեկն ե, վորովհետև այդ անելիքներն ու կարմիր բանակայինների պահանջները միշտ չեն համապատասխանում միմիանց: — մենք ձգտում ենք կարմիր բանակայինից լավ հրաձիգ պատրաստել, իսկ նրան հաճախ զյուղատնտեսական հարցերն ավելի շատ են հետաքրքում, քան հրաձգային զործը. մենք ուզում ենք, վորպեսզի կարմիր բանակայինը ամենից առաջ քաղաքականապես զրագետ և զիտակից լինի, ընդհակառակը, կարմիր բանակայինը հաճախ մեծ ցան-

կություն և հայտնում պարագել թվաբանությունից և աշխարհագությունից, քան քաղաքական հարցերով զրադիմ և այլն:

Այստեղից կարծես թե ըլլում և միանգամայն անլուծելի մի հակասություն—կամ պետք և լենինյան անկյունը զրադիմ նրանով, ինչ հետաքրքրում և կարմիր բանակայինեն, այսինքն զյուղական տնտեսությամբ, թվաբանությամբ, աշխարհագործությամբ, բայց այդ գեղքում նրա աշխատանքը քիչ չափով կհամապատասխանի մարտիկի դաստիարակության և պատրաստության անելիքներին, կամ թե, ընդհակառակը, լենինյան անկյունում կտարվի այն աշխատանքը, վորն անմիջապես բղխում և այդ անելիքներից, բայց այն ժամանակ պետք և վերանա կարմիր բանակայինին շահազրպակելու հարցը (հետեւաբար և արտադրողական աշխատանքի կամավոր բնույթը), նրա պահանջների հետ պետք և հաշվի նստել այնքան, վորքան այդ հնարավոր կլինի:

Սակայն այդ հակասությունը անլուծելի յե թվում միայն առաջին հայտցքից: Ցեֆե մենք ասում ենք, թե լենինյան անկյունը պետք և սկսի իր աշխատանքը նրանից, ինչ տվյալ մոմենտին հետաքրքրում և կարմիր բանակայինին, ապա այդ բոլորովին չի նշանակում, թե լինինյան անկյունը պետք և քարշակայինի պոչից: Ակսելով նրանից, ինչ հետաքրքրում և կարմիր բանակայինի պոչից: Սկսելով նրանից, ինչ հետաքրքրում և այդ բանակայինի պահանջները, այլ շարունակ բավարարի կարմիր բանակայինի պահանջները, այս պետք և վոչ միայն բավարարի այդ պահանջները շահագրգոնի կարմիր բանակայինին նոր հարցերով, ընդլայնի նրան հետաքրքրով հարցերի շրջանը, նրա մեջ զարգացնի այնպիսի պահանջներ ու ձգտութիւններ, վորոնք կնպաստեն մարտիկի դաստիարակության ընդհանուր աշխատանքին, և ընդհակառակը դուրս կվանեն յեզ կվերացնեն այն պահանջներն ու արամազրությունները, վորոնք խանգարում և խոչնորու են հանդիսանում այդ աշխատանքին:

Պարզ է, վոր գեպի թվաբանությունն ու աշխարհագործությունը հայտարերած կարմիր բանակայինի արտակարգ ձգտութերը միշտ ուղղակի կապված չեն լինում զորամասի մարտունակության ամրապնդման խնդիրների հետ, բայց այդ բոլորովին չի նշանակում, թե թվաբանությամբ և աշխարհագործությամբ հետաքրքրվող կարմիր բանակայինը, վորոշ պայմաններում չի հետաքրքրվի հրաձգային գործով: Անհրաժեշտ և միայն ստեղծել այդ


ողայմանները, անհրաժեշտ է միայն համապատասխան աշխատանքի միջոցով հետաքրքրություն առաջ բերել կարմիր բանակայինի մեջ։ Հարցն այլ կերպ դնել, խոսել ինչ վոր անլուծելի հակասության մասին, հակասության, վոր գոյություն ունի մարտիկի զաստիարակության անելիքների և կարմիր բանակայինի ձգտումների ու պահանջների միջև, նշանակում և առհասարակ կասկածել, թե մենք մեր աշխատանքով կարող ենք կարմիր բանակայինի վրա զաստիարակչական ներգործություն կատարել Ահա թե ինչու կարմիր բանակայինների մեջ հետաքրքրություն առաջ բերելու խնդիրը վոչ մի հակասության մեջ չի գտնվում, այլ եշի կարող գտնվել լենինյան անկյան ընդհանուր անելիքների հետ։

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՌԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶ- ՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կարմիր բանակայինի ռւսութիւնիրությունը—լենինյան անկյան աշխատանքի հիմնաքարեն և Շարունակ տեղյակ չլինելով կարմիր բանակայինների պահանջներին ու ձգտումներին, չիմաստալով, թե կարմիր բանակայինն ինչով և ապրում և հետաքրքրվում, չի կարելի բավարարել կարմիր բանակայինի պահանջները, և հետեւարար, աշխատանք տանել նրա զաստիարակության համար։ Ուստի և վաշտային արտադպրոցական աշխատանքի կազմակերպիչներից և զեկավարներից յուրաքանչյուրը պետք և իմանա այն կարմիր բանակայիններին, վորոնց հետ նա աշխատում ե, իսկ դրա համար նա պետք և բանակայիններին մանրազնին և շարունակ ռւսումնասիրի։

Լենինյան անկյան աշխատանքի կազմակերպիչն ու ղեկավարը վոր կողմից պետք և իմանա կարմիր բանակայիններին, իր աշխատանքը ճիշտ դնելու համար։

Ամենից առաջ նա պետք ե հենվի իր զորամասի կազմը բնորոշող մի շարք որյեկտիվ տվյալների վրա։ Այդ կլինի նախ, զորամասի սոցիալական կազմը—պյուղացու պահանջներն այլ են, քան բանվորինը կամ ինտելիգենտներնը, և այդ հանգամանքը հաշվի չառնելը միշտ վատ և անգրադառնում աշխատանքի վրա։ յերկրորդ, վաշտի ազգային կազմը—այս կամ այն ազգային կազմը կապված և այս կամ այն սպեցիֆիկ տրամադրությունների և պահանջների գոյության հետ։ յերրորդ, կարմիր բանակայինների պահանջները անմիջական կապի մեջ են գտնվում



կարմիր բանակային մասսայի բաղաբական չեվ կուլտուրական մակարդակի հետ, վորքան բարձր և այդ մակարդակը, այնքան բարդ և բազմազան են պահանջները. չորորդ՝ անհրաժեշտ և հաշվի առնել և լերկրային հատկանիշները, այդ հնարավորություն և տալիս նրան ամենալավ կերպով կոնկրետացնել աշխատանքը, կառուցել այն կարմիր բանակայինին ծանոթ փաստերի և յերեվութների վրա:

Այդ ավյալները հնարավորություն են տալիս լենինյան անկյան զեկավար կազրերին ավելի լավ և հեշտ պարզելու կարմիր բանակայինների տեսակետը կամ վերաբերմունքը զեպի այս կամ այն հարցերը: Նախ քան աշխատանք ծավալելը, զեկավարները պետք ե մանրագննին ուսումնասիրեն այն հանդամանքը, թե կարմիր բանակայինն ինչպես և նայում այս կամ այն հարցին, կամ յերեսոյթին: Քաղղեկը, խմբակի զեկավարը և այլն, պետք ե սխոտեմատիկաբար տեղյակ լինեն, թե ինչպես ե զերաբերվում կարմիր բանակայինը կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականության հիմնական մի քանի հարցերին, Կարմիր բանակի շինարարությանը (տեղական իշխանություն, հարկ, կարգապահություն, զողում, կրօն, ընթացիկ անցքեր և այլն): Վերջապես կարենը և իմանալ, թե ինչով ե հետաքրքրում կարմիր բանակայինը, նա ինչ ե ուզում սովորել, ինչպիսի տրամադրություններ ունի նա, ինչ հարցերի շուրջն ե կամենում նա պարզաբանումներ լսել: Առանց զրան, մտածել անգամ չի կարելի, թե հնարավոր և բավարարել կարմիր բանակայինի կարիքներին ու պահանջներին, հետևաբար, անիմաստ և խոսել նրան ընդգրկելու մասին:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՅԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սկսենք պահանջների և տրամադրությունների հայտարերման հարցից:

Առաջին հերթին պետք ե նշել, թե կարմիր բանակայինի խոկան գեմքը, նրա պահանջներն ու տրամադրությունները հայտարերելը միշտ հեշտությամբ չի հաջողվում: Շատ և պատահում գոր վաշտային աշխատողը դեմ ե առնում փակուղու, հանգիստելով կարմիր բանակայինի այս կամ այն տրամադրություններին, վորոնք նրա խոսքերի համաձայն հայտարերվում են «հանկարծակի» և վորոնք «առաջ չեն նկատվել»: Իրականում

սուսպելիս պարզվում է, վոր այդտեղ «հանկարծակի» վաչենչ չկա: Պարզապես կարմիր բանակայինը ուսումնասիրփել և մակերսային դիտողություններով, այլ վոչ թե խորը և լուրջ: Ուստի, և առաջին կանոնը, վոր պետք ե զրգի կարմիր բանակայինի ուսումնասիրության հիմքում, հանդիսանում և ուսումնասիրության ամենուց յեվ խորացված բնույթը:

Յերկրորդ կանոնը կարելի յե ձեւակերպել այսպես, կարմիր բանակայինների պահանջների և տրամադրությունների հայտարկերումը պետք ե շարունակ ընթանա զործնական աշխատանքի պրոցեսում—պետք ե ուսումնասիրել աօֆատելով յեվ աօֆատել ուսումնասիրելով: Հատուկ և վոչ մի ձե, հարվածային մեթոդներ, ավելորդ գաղտնիություն և առասարակ աշխատանքի այնպիսի մեթոդներ, վորոնք կարող են շարժել կարմիր բանակայինի կասկածանքը— զործադրել պետք չե: Ուսումնասիրության զործից կարմիր բանակայինի համար գաղտնիքներ պատրաստել չարժեն, բայց միհնույն ժամանակ պետք չե աշխատանքը կառուցել այնպես, վորպեսզի կարմիր բանակայինը յուրաքանչյուր քայլափոխին զգա, վոր ինքն «ուսումնասիրության որյիկու» եւ կարմիր բանակայինին ուսումնասիրելու նյութեր բավականաչափ կան և ուսումնասիրությունը հատուկ կամպանիա չգարձնելով, պետք ե միայն լրիվ ոգտագործել զործնական աշխատանքի այդ ամրող հարուստ նյութը:

Հետեւյալը, վոր ոգտակար ե նշել, այդ այն ե, վոր անհրաժեշտ և ամեն կերպ անհատականություն մտցնել կարմիր բանակայինների գանազան խմբերի՝ գեռ ավելին՝ յուրաքանչյուր առանձին կարմիր բանակայինի (հատկապես կարմիր բանակային-ակտիվիստի) պահանջները հայտարելիս: Լենինյան անկյան համար այս հանդամանքը հատկապես ավելի կարենոր ե, վորովհետեւ ուսումնասիրության մեջ միան անհատականություն մտցնելու պայմանով նա կկարողանա հայտարելի և ոգտագործել իր ակտիվը, նախորոք հաշվի առնել այս կամ այն միջոցառութերի հաջողությունը, ճիշտ ջոկել և ժողովել կարմիր բանակայիններին մասնակից անել նրանց հետաքրքրող առանձին հանձնարարության կատարմանը և այլն:

Վերջապես, կարմիր բանակայինների տրամադրությունների հայտարերման ամրող սիստեմը պետք ե լինի հնարավորին չափ ճկուն, և շարժուն: Վորոշ զորամասերում զործադրվում

հն հաստ գրքեր և կարմիր բանակայինների «անձնական գործեր» պահելը, կարմիր բանակայիններին ստիպում են լցնել հսկայական, սակայն վոչինչ տվող անկետներ և այլն: Այդ ամենը վոչնչի չեն հանդի և հասարակ արդյունքներ չեն տա—միայն կծանրաբեռնեն և զեկավար աշխատողին և կարմիր բանակայինին միանգամայն ափելորդ աշխատանքով, իհարկե, ուսումնասիրության բոլոր նյութերը պետք և խնամքով հաշվի առնվին և հնարավորության սահմաններում զրի առնվին, իսկ հսկայական գրասենյակային աշխատանք այդ հարցի շուրջը ստեղծելը բոլորովին հարկավոր չեն:

### ՀԱՅՏԱԲԵՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կարմիր բանակայինի տրամադրությունների և պահանջների հայտարերման պրոցեսը պետք և ընթանա չափազանց բազմակողմանի, իրականացվի բազմազան ձևներով ու միջոցներով: Հիմնականում կարելի յե նշել կարմիր բանակայինի դեմքը վորոշելու հնարավորություն տվող նյութեր ստանալու յերեք միջոց:

**Ա. ուաշին միջոց:** Կարմիր բանակայինի ուսումնասիրությունը անմիջապես նրա հետ անձնական շփման միջոցով—ամենորյա շփման, խոսակցության, զրույցի միջոցով, քաղաքարապմունքներում, լենինյան անկյան խմբակներում, անհատական և խմբակային ազիտացիայի միջոցով, վոր տանում են կուսակցության և կոմյերիտամիության անդամները, կարմիր բանակայինների ընդհանուր ժողովի միջոցով և այլն: Կարմիր բանակայինի ուսումնասիրության այդ միջոցը հանդիսանում է ամենից գործոնը և կենդանին: Քաղզեկի և բջիջի կողմից հատկապես կարեօր և ճիշտ կազմակերպել կարմիր բանակայինի ուսումնասիրությունը առողյա աշխատանքի և շփման միջոցին, իսկ այդ նպատակով նրանք պետք և շարունակ հրահանգեն կուսակցականներին, կոմյերիտականներին, քաղաքարապմունքների խմբակավարներին և լենանկյան խմբակների դեկավարներին, կրտսեր հրամանատարական կազմին և առնասարակ, վաշտի ամբողջ ակտիվին, պահանջելով, վորպեսզի նրանք ուշադիր և մտածված վերաբերմունք ցույց տան այդ աշխատանքին: Անհրաժեշտ և սիստեմ դարձնել, վորպեսզի վաշտի աշխատակիցներից յուրաքանչյուրը կիսի իր գիտողությունները խորհրդակցություններում, իսկ պետք յեղած դեպքում, կազմակերպել

հասունէկ խորհրդակցություններ վաշտի ակտիվի, խմբակայինների և անհատականների հետ՝ կարմիր բանակայինների ուսումնասիրության հարցերի վերաբերյալ:

**Յերկրող միջոց.** կարմիր բանակայինի ուսումնասիրությունն այն նյութերով և փաստաթղթերով, վորոնց մեջ իրենք կարմիր բանակայինները հայտարերում են իրենց տրամադրությունները, պահանջները, ձգտումները—հարց ու պատասխանի տետրակների միջոցով, հարց ու պատասխանի յերեկոներին, ընդհանուր ժողովներին տրված հարցերի միջոցով, պատի լրագրի միջոցով, կարմիր բանակայինների զիմումների միջոցով, կապի կոմիսիային տրված խնդիրների և բողոքների միջոցով, շարային և տնտեսական մասին տված զիմումներով և այլն: Բոլոր այդ նյութերը պետք է խնամքով և շարունակ ուսումնասիրվեն, ի մի գումարքին, ընդարձակվեն և ողտազործվեն համապատասխան յեզրակացությունների համար:

**Յերեազ մաջող.** կարմիր բանակայինի ուսումնասիրությունը քաղաքական և շարային ապարատի կողմից արձանագրվող փաստերի և յերեւյթների հիման վրա—կարգապահական տուժերի և խրախուսանքների զրբի տվյալները ի մի գումարելու ձանապարհով, գրադարաննային վիճակազրության միջոցով, բուժաբան հաճախելու թվերը ուսումնասիրելով և այլն: Այդ նյութերն ի մի գումարելով կարելի յե նույնապես ստանալ մի ամբողջ շարք նախնական տեղեկություններ կարմիր բանակայինների մասին—նրանց սոցիալական ու ազգային կազմի մասին, հասարակական-քաղաքական աշխատանքի անցյալի մասնակցության մասին և այլն:

Հիշած միջոցներից յուրաքանչյուրն ունի իր արժեքավոր և պակաս կողմերը, ուսումնասիրության ամբողջության, ձգչիւմ լինելու և պարզության համար անհնաժեշտ և կիրառել այն՝ բարոր յերեք միջոցներով, համազրելով և ընդհանրացնելով ստացված տվյալները:

## ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՅԵՎ ԶԳՏՈՒՄ-ՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄԸ

Քաղաքական աշխատանքի ճիշտ ընթացքի համար դեռ քիչ ե կարմիր բանակային մասսայի այս կամ այն արամազրությունների ու պահանջների սոսկական արձանագրելը: Անհիմաժեշտ ե անպայման ընդհանրացնել փաստերը, զծել նրանց-

ընդհանուր և գլխավոր հատկանիօները, քննել այս կամ այն տրամադրություններն առաջ բերող պատճառները, հայտարերել այն ՏԵԽԳԵԿԵՐԸ, վոր ծածկվում և այդ տրամադրությունների յիշեռում և վերջին հաշվով գնահատել այն մարտիկի դաստիարակության և զորամասի մարտունակության ամրապնդման ընդհանուր խնդիրների անկյան տակ։ Կարմիր բանակայինների տրամադրությունների ընդհանրացնելը ավելի պակաս զբժշկար խնդիր չէ, քան նրանց հայտարերելը, այն ինչ, զորձնականում հաճախ նրան շատ քիչ ուշադրություն և հատկացվում, վորի հետեանքը հանդիսանում է կարմիր բանակայինների տրամադրություններին անդիսանել պատասխանելը։

Ընդհանրացնելով կարմիր բանակայինի պահանջներն ու ձգուումները, հատկապես կարենը և ա) պարզել այդ պահանջների բնույթը, բ) հաշվի առնել նրանց տևողությունը ժամանակի տեսակետից, գ) պարզել, թե ավյալ մոմենտում վոր տրամադրություններն ու պահանջներն են տիպիկ հանդիսանում վաշտում, — փորոշել, թե վորքան լայն ընդգրկում կարմիր բանակային մասսային այս կամ այն տրամադրությունը, կարմիր բանակայինի վոր խավերին և խմբերին են հատուկ այդ տրամադրությունները, և, վերջապես, ամենից գլխավորը դ) յուրաքանչյուր ավյալ տրամադրություն, պահանջ ու ձգուում գնահատել մարտիկի դաստիարակության ընդհանուր խնդիրների անկյան տակ և դրանով խել նշել պատասխանելու հիմնական մասապարհը։

## ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՌԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Գնահատել տրամադրություններն ու պահանջները նրանց բնույթի տեսակետից — այդ նշանակում և հայտարերել այդ տրամադրություններն ու պահանջները և նրանց յիշեռում թագնված տեղենցներն առաջ բերող պատճառները։ Վերջին մի քանի զորակոչների կարմիր բանակայինների ուսումնասիրության նյութերը վառ կերպով ցույց են տալիս կարմիր բանակային մասսայի մեջ տեղի ունեցող մի շարք տիպիկ տրամադրությունները, բանակային մասսա, վորի հետ շարունակ զործ հն ունենում քաղաքական աշխատանքի պրոցեսում։

Այդ տրամադրությունների թվին են պատկանում։ —

1) Տրամադրություններ, վորոնք կապված են այն վերաբերմունքի հետ, վոր ցույց են տալիս կարմիր բանակայինները

**Կարմիր Բանակին,** նրա մարտական խնդիրներին, և վորպես  
այդ բանակի մարտիկներ, իրենց անելիքներին: Որինակի հա-  
մար նշենք այսպես կոչվող «խաղաղ տրամադրությունները»:  
վոր բանակայինը բերում և իր հետ գյուղից: Այդ տրամադրու-  
թյունը արտահայտվում է նրանով, վոր բավականաչափ հաս-  
տառ չեն հասկանում Խորհրդային Միության միջազգային զը-  
րության հյությունը, բավականս չափ չեն զիտակցում կարմիր  
բանակի մարտական խնդիրները և այստեղից ել կարմիր բա-  
նակը զիտում, միայն վորպես կուլտուր-քաղաքական մի զըպ-  
րոց:

**2. Գյուղացիական երամագրություններ,** այսինքն տրամա-  
դրություններ, վոր հատուկ են կարմիր բանակայինին, վորպես  
զյուղացու: Այդ տրամադրությունները լինում են յերկու կար-  
գի, — քաղաքական՝ կապված բանվոր զասակարգի զեկավար զերի  
և գյուղի նկատմամբ վարած Խորհրդային իշխանության և կու-  
սակցության քաղաքականության հարցերի հետ և անտեսական՝  
կապված կարմիր բանակայինների կողմից դեպի զյուղատնե-  
սությունը, գեղի նրա ինտենսիվիկացիան և այլն հարցերը ցույց  
տված բարձր հետաքրքրության հետ: Գյուղի շիրոտավորման պրո-  
ցեսսի հետ միասին, շերտավորվում են և կարմիր բանակային  
մասսայի զյուղացիական տրամադրությունները: Այսպես, որի-  
նակ, հաճախ հայտարերվում են կարմիր բանակայինների չքավոր  
մասի հատուկ տրամադրություններ՝ կապված զյուղի չքավորու-  
թյան հետ, չքավորության նկատմամբ կուսակցության վարած  
քաղաքականության հետ:

Գյուղացիական տրամադրություններին զուգնթաց անհրա-  
ժեշտ են նշել և բանվորական տրամադրությունները, այսինքն  
տրամադրություններ, վորոնք հատուկ են կարմիր բանակային  
— բանվորների համար:

**3. «Կենցաղային» երամագրություններ,** այսինքն տրամա-  
դրություններ, վորոնք կապված են զորանոցի կենցաղի և տրն-  
տեսական — նյութական պայմանների հետ: Անհրաժեշտ են նշել,  
վոր կարմիր բանակայինների կենցաղային տրամադրություն-  
ները սովորաբար գյուղացիական տրամադրություններից մեկու-  
սացված չեն հայտնաբերվում և հաճախ զառնում են քաղաքա-  
կան բնույթ կրող տրամադրություններ: Կարմիր բանակային-  
ների նյութական — կենցաղային տրամադրությունների և նրանց  
աճող քաղաքական ակտիվության միջև գոյություն ունեցող այդ

կապը պետք է շարունակ հաշվի առնվի աշխատանքի ընթացքում:

4. Կուլտուրական պահանջներ, այսինքն յերբ կարմիր բանակայինները ուժեղ ձգում են բարձրացնել իրենց կուլտուրական մակարդակը, ուսումնասիրել ընդհանուր կրթական առարկաները, գյուղատնտեսական գիտելիքներ ձեռի բերել և այլն:

5. Ազգային տրամադրություններ, այսինքն տրամադրություններ, վորոնք հասուլ են տարրեր ազգությունների կարգը բանակայինների համար:

6. Տրամադրություններ, վորոնք կապված են դեպի Կրոնք ցույց տված վերաբերմունքի հետ և այլն:

Հասկանալի յե, բոլոր այդ տրամադրությունները լինում են ինչպես զրական, այնպես ել բացասական բնույթի: Այսպիս որինակ, կրոնի նկատմամբ շարունակ աճում և անսատվածությունը կարմիր բանակայինների մեջ, սակայն մենք հանդիպում ենք և կրոնական տրամադրությունների առանձին փաստերի: Ճիշտ այդպես ել, գյուղացիական տրամադրություններն են. գյուղացիության նկատմամբ պրոլետարիատի զեկավարար զերի ճիշտ զիտակցման զուգնթաց, ներս են սովում և պրոլետարական զեկավարության ուղղված առանձին տրամադրություններ և այլն: Այդպիսով, տրամադրությունների վերը ընթած խմբավորությունը շատ ընդհանուր ե և չի կարող վորոշել այն ճշգրիտ զիժը: Վորով պետք ե ընթանա այդ տրամադրություններին պատասխանելու: Սակայն գժվար չե տեսնել, վոր վերը հիշված տրամադրությունների խմբեց մեկի կամ մյուսի զոյությունը կամ գերակշռությունը վորոշում և վաշտում տանելիք քաղաքական և մասնավորապես լենինյան անկյան աշխատանքի ընդհանուր բնույթը, ընդհանուր տօնել:

## ԸՆԹԱՑԻԿ ՅԵՎ ՏԵՎԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Յեթե գնահատենք կարմիր բանակային հարցումներն ու տրամադրությունները նրանց ծագման պրոցեսի և տեսականության տեսակետից, ապա նրանց բոլորին կարելի յե բաժանել յերկու խմբի՝ տեվական յեվ քերացիկ տրամադրություններ և հարցումներ:

Տեսական հարցումների թվին մենք գասում ենք այնպիսի հարցումներ, վորոնք ժամանակավոր բնույթ չեն կրում և սովորաբար հանդիս են գալիս վորեն խորը սոցիալ-կենցաղային

պատճառներից, վորպես յերկրում, բանվոր գասակարգի և զյուղացիության մեջ տեղի ունեցող ընդհանուր պրոցեսների հետևանք։ Տեսական հարցումների շարքին են դասվում, որինակե, կուլտուրական հարցումները, գեղի պյուղատնտեսությունը ցույց տված հետաքրքրությունը, պյուղացիական և ազգային տրամադրություններից շատերը, կրոնական տրամադրությունները և այլն։ Ընթացիկ հարցումները — այդ այն հարցումներն են, վորհանգես են գալիս կարմիր բանակայինների մեջ ամենուր, ընթացիկ կյանքի աշխատանքի պրոցեսում։ Դրանցից են որինակ, գեղի այս կամ այն միջազգային յերկույթը, ուսուցման մոմենտը ցույց տված հետաքրքրությունը, վաշտային կենցաղի վորհե փաստի հետ կապված տրամադրությունը և այլն։

Ինչարկե, ընթացիկ և տեսական տրամադրությունների այդքաշումը բավականին պայմանական է։ Ընթացիկ տրամադրություններն ել կարող են տարբեր լինել ըստ իրենց տեսողության։ — այսպես, որինակ, վաշտային կենցաղի վորհ և փաստի հետ կապված տրամադրությունը կարող է շարունակվել մեկ յերկու որ, գեղի միջազգային քաղաքական գեպքը ցույց տված հետաքրքրությունը՝ մեկ յերկու ամիս, իսկ գեղի հրաձգային սպորտը հայտաբերած հետաքրքրությունը կարող է քիչ թե շատ կայուն ընույթ ստանալ։ Մյուս կողմից, տեսական տրամադրությունները նույնպես կարող են հայտաբերվել ընթացիկի տեսքով։ Այսպես որինակ, կարմիր բանակայինների կուլտուրական ձգումները կարող են յերեան գալ գեղի այս կամ այն դիտական նորությունը ցույց տված ժամանակավոր հետաքրքրության ձևով։ Ճիշտ այդպես ել, ազգային տրամադրությունները կարող են հանգես գալ՝ գեղի ազգային քաղաքականության ընազավառում կուսակցության և Խորհրդային իշխանության ընթացիկ միջոցառումը տածած հետաքրքրության ձևով։ Նման գեպքերում, տեսական հարցումներն ու տրամադրությունները պետք է գնահատվեն, վորպես ընթացիկ տրամադրություններ և ձգումներ։ Սակայն, տեսական և ընթացիկ տրամադրությունների բաժանումն ունի այն իմաստը, վորս սահմանում և այդ տրամադրությունների և հարցումների շուրջը տանելիք աշխատանքի բափե ու տեսականությունը, իսկ մյուս կողմից, ինչպես մենք կտեսնենք հետագայում, հնարավորություն և տալիս վորոշ աշխատանքի տարբեր ընազավառների միջև, մասնավորապես լինինյան անելյան և քաղաքաբազունքների միջև։

## ԱՆՀԱՏԱԿԱՆ, ԽՄԲԱԿԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀԱՐ- ՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթի կարմիր բանակային հարցումներն ու տրամադրու-  
թյունները ընդհանրացնենք բանակականի տեսակետից, ապա  
նրանց կարելի յե ստորաբաժանել անհատականի, խմբավիճի  
և վասարայականի: Անհատական հարցումն—այդ այն հարցումն  
է, վոր հատուկ ե առանձին կարմիր բանակայինների՝ վաշտում  
Մարկոսը հետաքրքիում ե յերկրաչափությունով. նրանից բա-  
ցի, վաշտում վոչ վոր յերկրաչափությամբ չի հետաքրքրվում:  
Դեպի յերկրաչափությունը տածած Մարկոսի հետաքրքրությու-  
նը—անհատական հետաքրքրություն է, անհատական ձգտում,  
հարցումն է: Խմբային հարցումը—այդ այն հարցումն է, վոր հա-  
տուկ ե և ընդհանուր կարմիր բանակայիններից մի քանիսի հա-  
մար—յեթե վաշտում կա կարմիր բանակայինների մի խումբ,  
վորը հատկապես շահազրգոված ե հրաձգային սպորտով, մի ու-  
րիշ խումբ, վորը հատուկ հետաքրքրություն ե ցույց տալիս դե-  
պի թվարանությունը և այլն: Տվյալ գեղագում վաշտը գործ ու-  
նի խմբային մի շարք առանձին հարցումների հետ: Վերջապես  
մասսայական հարցումը կամ տրամադրությունն—այդ այն տրա-  
մադրությունն է, վոր հատուկ ե վաշտի կարմիր բանակային  
ամբողջ մասսային կամ նրա ճնշող մեծամասնությանը: Այսպես  
որինակ, փորձը ցույց ե տվել, վոր ամբողջ վաշտի մասսայա-  
կան տրամադրությունը կամ հետաքրքրությունը իր շուրջն ե  
կենտրոնացնում ուսուցման այնպիսի շրջանը, ինչպիսին են  
հրաձգությունները, վոր գեղի թվարանությունը կամ զյուղա-  
տնտեսությունը տածած կարմիր բանակայինների հետաքրքրու-  
թյունը հաճախ նույնպես մասսայական բնույթ ե կրում և այլն:

Դժգար չե տեսնել, վոր կարմիր բանակայինների հարցում-  
ների և տրամադրությունների նման ընդհանրացումը, նրանց  
քանակի տեսակետից, իմաստ ունի միայն տվյալ զորամասի և  
տվյալ ժամանակաշրջանի համար: Վաշտում, վորտեղ կարմիր բա-  
նակայինների մեծամասնությունը զյուղացիներ են, իսկ փոք-  
րամասնությունը բանվորներ,—զյուղացիական տրամադրու-  
թյունները սովորաբար պեսք ե հայտնի բերքեն վորպես մասսա-  
յական տրամադրություններ, իսկ բանվորականը—վորպես խմբ-  
ային և նույնիսկ անհատական տրամադրություններ: Ընդհա-  
կառակը, բանվորական կազմով գերակշռող վաշտում մասսայա-

կան տրամադրությունները կլինիկան բանվորական տրամադրությունները՝ Նույնը և ժամանակի նկատմամբ—ձմեռը զեպիսպրոտը տածած հետաքրքրությունը նեղ բնույթ պիտի կրի, իսկ ամառը՝ մասսայական։ Համալրման կազմից կարող ե հայտարկվել ընդամենը մեկ-յերկու հոգի, գորոնք միանդամից կհետաքրքրվեն տակաթիկայի հարցերով, իսկ յերկու-յերեք ամիսաշխատելուց հետո հնարավոր ե, վոր տակաթիկայով կհետաքրքրվի կարմիր բանակային ամենալայն մասսան։

Հարցումների և տրամադրությունների գնահատականը, նրանց քանակի տեսակետից, հսկայական նշանակություն ունի, վորորհետ նա վորոշում ե լենինյան անկյան աշխատանքի ծավալն ու թափը։

## ԲԱՑԱՎԱԿԱՆ ՅԵՎ ԴՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայց ավելի կարեոր խնդիր ե հանդիսանում կարմիր բանակայինների հարցումների և տրամադրությունների ընդհանրացումը՝ աշխատանքի զաստիտրակչական հիմնական խնդիրների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների անկյան տակ։ Հարցումների միայն այդպիսի վորակական ընդհանրացումն ու գնահատականը հնարավորություն կտա նշելու աշխատանքի ճիշտ ուղղությունը, նրա բովանդակության շիտակ զիծը։ Վորակի նկատմամբ, այսինքն, զորամասի ընդհանուր զաստիտրակական խնդիրների և քաղաքարոյական կացության համապատասխանելու նկատմամբ, կարմիր բանակայինների հարցումների ու շահերը կարող են լինել բացասական, դրական և «չեզոք»։ Դրական հարցումներն, —այդ այն հարցումներն են, զորոնք տվյալ մոմենտին աջակցում են կարմիր բանակայինների հւտաքածակած մեր աշխատանքին։ այդպիսիների շարքն ե զասվում։ կարմիր բանակայինների հետաքրքրությունը զեպի միջազգային կացությունը, զեպի ուղղագրազարկան ուսուցումը, զեպի կուսակցության և կոմսոմոլի աշխատանքը և այլն։ Բացասական տրամադրությունները—այդ այն տրամադրություններն են, վորոնք խանգարում, խոչնդում են հանդիսանում մեր զաստիտրակական աշխատանքին, որինակ, բացակայում ե հետաքրքրությունը զեպի ուղղագրական ուսուցումը, կրոնական տրամադրությունները, աղդայնական տրամադրությունները և այլն։ «Զեղոք» հարցումներն ու տրամադրություններն—այդ այն

հարցումներն ու տրամադրություններն են, վորոնք վոչ բացուց բացասական են, վոչ ել բացորոշ դրական, այդպիսիք են, որինակի կուտուրական հարցումների մեծամասնությունը, մասնագիտական զորամասերում զեպի տեխնիքական հարցերի ու ռաւմասսիրությունը յերևան հանող ձգտումը: «Զեզոք» հարցումներն ունեն այն առանձնահատկությունը, վոր նրանք կարող են ուղղվել ինչպես զեպի մեր զաստիարակչական աշխատանքին աջակցելու կողմը, այնպես ել հտկառակ կողմը: Մասնագիտական զորամասերում զեպի տեխնիկան հայտարերփող հետաքրքրությունը յեթե ժամանակին չընդգրկվի, կարող ե զրավել կարմիր բանակայինների ուշազրությունը նրանց անմիջական խնդիրներից, վորպես կարմիր բանակի մարտիկներ, ուսպանական տեխնիկայի հարցերի ուսումնասիրությունից, ընդհակառակը, յեթե այդ հետաքրքրությունը առաջ տարվի անհրաժեշտ հունով, ապա նա կդառնա կարմիր բանական զաստիարակության հզոր շարժառիթ: Ուստի և, այդ հարցումները «չեզոք» կարող են կոչվել միայն պայմանականորեն, միայն այն իմաստով, վորինքնին նրանք վոչ բացարձակ բացասական տրամադրություններ են, վոչ ել բացարձակ զբական, սակայն տեսնդենց ունին զարգանալու զեպի բացասականը, յեթե նրանց ժամանակին չտիրեն և անհրաժեշտ հունի մեջ չառնեն, այսինքն, յերբ այդ չեզոք տրամադրությունները զբական ուղղությամբ ոպտագործելու միջոցներ ձեռք չառնեն:

Նորից ընդգծումնենք, թե հարցումի վորակի գնահատականը իմաստ ունի միայն ՏՎԱՅ մումենաթին, ՏՎԱՅ պարագայում: Դեպի սպորտը տածած կարմիր բանակայինի հետաքրքրությունը սովորաբար դիտվում է, վորպես զրական յերեւոյթ: Բայց յեթե այդ հետաքրքրությունը կուժեղանա այն աստիճանն, վոր կարմիր բանակայինի ուշազրությունը սազմաքաղաքական ուսուցումից իր վրա կգրավի, այդ հետաքրքրությունն արգեն դրական համարելը սխալ կլինի: Դեպի զյուղի աշխատանքի խնդիրները ցույց տված կարմիր բանակայինի հետաքրքրությունը կարծես թե չեզոք ե: Բայց յեթե այդ հետաքրքրությունը կդերակցի զեպի սազական զործը ցույց տված յերիտասարդ կարմիր բանակայինի հետաքրքրությունը—նա արդեն կնդունի բացասական ընույթ: Ընդհակառակը, կարմիր բանակայինին բանակից զորացրման նախապատրաստելու շրջանում զեպի զյու-

զական աշխատանքը տածած հետաքրքրությունը վրոշ չափով դրական լլինի, վորովհետև նա կհամապատասխանի քաղաքական աշխատանքի ընդհանուր խնդիրներին այդ շրջանում:

Վերջում նշենք, վոր կարմիր բանակայինների հարցումների և տրամադրությունների ընդհանրացումը—շատ պատասխանառու և բարդ խնդիր ե—վոր վաշտը միշտ ի վիճակի չի լինի կատարելու Ռւստի և այդ խնդրին պետք և մոտենալ զգույշ և խնամքով: Վաշտային բոլոր աշխատավորները պետք և լիովին և ուշադիր հաշվի առնեն այն զեկավար և ընդհանրացուցիչ զիւրազությունները կարմիր բանակայինների տրամադրությունների մասին, վոր տրվում են քաղմարմինների կողմից, և հայտարերված վաշտային նյութերին մոտենան վոչ թե մեկուսացած, այլ ամենից առաջ այդ հիմնական պայմանների անկյան տակ, ստուգելով, թե վաշտում ինչպես են բեկվում այն պրոցեսները, վորոնք հատուկ են ամբողջ կարմիր բանակին և յիրկին ամբողջովին, և ոգնելով այդ պրոցեսների հայտարերման:

### ՅԵՐԿՈՒ ՀԱՐՑ

Անցնելով նրան, թե լենինյան անկյունն ինչպես պետք եղատասխանի կարմիր բանակայինների հարցումներին և տրամադրություններին, կրկին հիշենք, վոր այդ տեսակետից լենինյան անկյան առաջ կանգնած հիմնական դժվարությունը կայանում է նրանում, վոր յենելով իր աշխատանքի բնույթից, նաստիկված և վոչ միայն հաշվի առնել այդ հարցումներն ու տրամադրությունները, այլ և անպայմանորեն բավարարել նրանց: Յերկուսը նրանցից հատկապես սուր են:

**Սռաջին հարց:** Կարմիր բանակայինների հարցումներն ու հետաքրքրությունները անսահման շատ են: Արդյոք լենինյան անկյունը կարմիր և բավարարել բոլոր հարցումներին և պետք են անձգությունը առաջ այդք: Յեթե վոչ, ապա հարցումներից նա վորոնց պետք և բավարարի և նա ինչպես պետք և անի այդ:

**Յերկուրդ հարց:** Գործնականում լենինյան անկյունն ինչպես պետք և իր առաջ դրված խնդիրները շաղկապի կարմիր բանակայինների հարցումների բավարարման հետ, յեթե այդ հարցումներն, ինչպես մենք տեսանք, լինում են վոչ միայն զբրական, այլ և բացորոշ բացասական կարգի: Նա ինչպես պետք և կարմիր բանակայինի մեջ հետաքրքրություն առաջանալ:

Փորձենք հերթով վերլուծել լենինյան անկյան աշխատանքի այդ յիրկու հիմնական հարցերը:

## ԱՄԵՆԻՑ ԱՐԱՋ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԽՄԲԱՅԻՆ ՏՐԱՄԱ- ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին հարցին ճիշտ պատասխանելու համար պետք է նորից հիշենք, զոր վաշտում, ինչպես ասվեց վերևում, յուրաքանչյուր տվյալ մոմենտին կարող են նկատվել մասսայական, խմբային և անհատական հարցումներ:

Պարզ ե, զոր լինինյան անկյան աշխատանքի բովանդակությունը չի կարող զորոշվել այն հարցումներով և տրամադրություններով, զորոնք հատուկ են միայն տրամաձին կարմիր բանակայինների, այսինքն անհատական հարցումներով և տրամադրություններով: Այն ինչ, մասսայական և խմբային հարցումները զոչ մի գեղքում չպետք ե վրիպեն լինինյան անկյան տեսազրությունից: Յեթե վաշտում կան մեկ կամ յերկու կարմիր բանակայիններ, զորոնք հետաքրքրվում են յերկրաչափությամբ, իսկ վաշտի մեծամասնությունը հետաքրքրվում ե հս բկերի հարցումներով, ապա բնական ե, զոր լինինյան անկյունը ակտով կերպով պետք ե անցնի Խորհրդային իշխանության հարկային քաղաքականության լուսաբանումը, այլ զոչ թե յերկրաչափության ուսումնասիրության խմբակներ կազմակերպի: Ճիշտ այդպես, յեթե վաշտում մեկ կամ յերկու կարմիր բանակայիններ չեն հետաքրքրվում հրաձգային գործով, ապա այդ յերեսությը զեր չի հանդիսանա լինինյան անկյան աշխատանքի հիմնական բովանդակությունը: Սակայն, յեթե հրաձգության մեջ կատարելագործվելու ցանկության բացակայությունը մասսայական չափեր ե ընդունում, լինինյան անկյունը պետք ե լայն աշխատանք ծավալի հրաձգային գործի շուրջը: Այդ չի նշանակում, թե լինինյան անկյունը չպետք ե առհասարակ մտահոգվի առանձին կարմիր բանակայինների հարցումներին բավարարություն տալու խնդրով:

Հսարավորության սահմաններում անհրաժեշտ ե զանազան միջոցներով բավարարել և անհատական հետաքրքրությունները: Բայց իր ամբողջ աշխատանքի մեջ լինինյան անկյունը պետք ե առաջնությունը տա այն հարցումներին, հետաքրքրություններին յեվ բնորոշ քամագրություններին, զորոնք հատուկ են զոչ թե առանձին կարմիր բանակայիններին, այլ կարսիր բանակայինների ամբողջ խմբերի յեվ ամբողջ կարմիր բանակային մասային լիովին:

# ԿԱԴՐԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Անինյան անկյան աշխատանքի բոլոր հարցերը վերջին հաշվով դեմ են առնում մի հիմնական հարցի—ով պետք ե կատարի այն: Վաշտի արտադպրոցական աշխատանքը կազմակերպելու և ճիշտ ղեկավարելու համար, քաղղեկն ու բջիջը պետք ե իրենց տրամադրության տակ ունենան մօսական յեզ ամուռ կոփած ապարատ, վորի վրա նրանք կկարողանան հենվել իրենց ձեռնարկումների ժամանակ: Առանց լենինյան անկյունում աշխատող կազմեր ստեղծելու և այդ կազմերն ամրացնելու, անհնար և մտածել այդ աշխատանքի պլանայնության և սիստեմատիկության մասին, այդ աշխատանքի մեջ կարմիր բանակային լայն մասսային ընդգրկելու մասին: Ահա թե ինչու ՔԳԿԲ արտադպրոցական աշխատանքի վերաբերյալ գումարված խորհրդակցությունը խիստ ընդգծել է, թե «արտադպրոցական աշխատանք տառողների կազմերի ընտրությունն ու պատրաստությունը» պետք ե համարել «կերտրոնական անելիքներից մեկը»:

## ԼԵՆԻՆՑԱՆ ԱՆԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱԿՏԻՎԸ

Ումից պետք ե կազմվի հասարակական այն ապարատը, զորը կազմակերպում և կիրառում և լենինյան անկյան ամբողջ աշխատանքը և վորի վրա հենվում բաղղեկն ու բջիջը:

Ամենից առաջ քաղղեկը պետք ե ջոկի ընդունակ և ակտիվ վասարի գրադարանապետի: Վաշտային գրադարանապետը—այդ լենինյան անկյան միակ «հաստիքավոր» անձնավորությունն է: Վաշտային գրադարանապետի աշխատանքի համար պետք ե առաջ քաշել զարգացած և լավ գրագետ կարմիր բանակայինի, իսկ ամենից լավն ե՝ կոմյերիտականի: Ամենից նըպատականարմար և վաշտային գրադարանապետին նշանակել աշնանը՝ մինչև նորեկների գալը՝ հին կարմիր բանակայիններից, այն հաշվով, զորպեսզի մինչև զորացրվելը մնա իր աշխատանքում և տարվա ընթացքում չփոխվի: Վաշտային գրադարանապետի հիմնական պարտականությունն ե՝ կազմակերպել գրադարանային աշխատանքը վաշտում: Դրա հետ միասին նրան կարելի յե սասնակից անել և լենինյան անկյան ընդհանուր աշխատանքին, սակայն պայմանով, վոր նա չծանրաբեռնվի կողմանի հանձնարարություններով, նրան հնարավորությունն տալով իր գլխավոր ուշադրությունը դարձնել իր հիմնական աշխատանքին:

Խմբակային աշխատանքը ճիշտ և ամբողջական կերպով ծագալիու համար, քաղղեկն ու լենինյան անկյան խորհուրդը պետք ե ստեղծեն Խմբակների ղեկավարների մօտական կազրեր (ըստ առանձին բնագավառների և հարցերի), վորոնց ցանկացած բոպեյին կարելի կլինի լենինյան անկյան կից ստեղծվող այս կամ այն խմբակի ղեկավարության գլուխ դնել: Խմբակների ղեկավարների կազրերի հետ միտուին, անհրաժեշտ է կազմակերպի և մասսայական աժխատանի կազմակերպիչների մօտական կազր—լրագրի ընթերցողներ, խաղերի կազմակերպիչներ և այլն:

Վերջապես, ցուցազրական պլրոպագանդ կազմակերպելու համար կարեոր և ջոկի տախտակների, ցուցահանդեսների, ցուցափեղերի և այլն «վարիչներ», վորոնց պարտականությունը կլինի լրացնել այս կամ այն տախտակի նյութերը, կազմակերպել այս կամ այն ցուցափեղելը և այլն:

## ՈՒՄՆԻՑ Ե ԿԱԶՄՎՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԱԿՏԻՎԸ

Ումնից ե կազմվում լենինյան անկյան այդ ամբողջ դեկավար ակտիվը:

Ա.Ա.Յից առաջ միջին պետկազմից:

Յերկրորդ՝ կուսակցության անդամներից ու թեկնածուներից:

Յերրորդ՝ կրտսեր պետկազմից: Կրտսեր հրամկազմը, վորը ավելի զարգացած ու ակտիվ ե, քան կարմիր բանակայինը, պետք ե լենինյան անկյունում ոգտագործվի ավելի բարդ աշխատանքի համար—վորպես խմբակի ղեկավար՝ վորպես լենինյան անկյան խորհրդի անդամ, վորպես մրցակցության և յերեկույթների կազմակերպիչ և այլն: Կարեոր հանգամանք և հիշել, վոր կրտսեր հրամանատարին լենինյան անկյունում ղեկավար և կազմակերպչական աշխատանքի քաշելով, պետք ե զրանով իսկ բարձրացնել նրա հեղինակությունը կարմիր բանակային վողջ մասսայի աշքում:

Չորրորդ՝ կոմյերիտականներից: Լենինյան անկյան աշխատանքում կոմյերիտականնեն բացառիկ կարեոր ղեր և պատկանում: Նա պետք ե լենի քաղղեկի և բջիջի ամենաառաջին ոգնականը վաշտային արտադպրոցական աշխատանքում, կարմիր բանակային ինքնագործնեյության նախաձեռնող և լենինյան անկյան բոլոր աշխատանքների սկսող: Կոմյերիտական աջակ-

ցության խմբակի ակտիվը՝ միջին պետկազմի և կուսակցական-ների հետ միասին պետք և մասնակից արվի լենինյան անկյան մեջ ամենապատասխանառու աշխատանք տանելուն:

**Հինգերորդ՝** հին կարմիր բանակայիններից Նրանց գերը աճում և նորեկի գալու առաջին շրջանում: Այդ շրջանում նրանք պետք և կազմեն լենինյան անկյան ակտիվիստների հիմնական կազրը, վորի միջոցով պետք և ինքնազործնեյության անցնի և յերիտասարդ կարմիր բանակայինը:

**Վեցերորդ՝** բոլոր ակտիվ կարմիր բանակայինների միջից, վորոնք հատկապես շահագրգոված են լենինյան անկյան աշխատանքով, ուրախությամբ արձագանքում են նրա ձեռնարկութիւններին, սշտական մասնակցություն են ցույց տալիս նրա աշխատանքին և ինքնազործնեյության մեջ են քաշում իրենց ընկերներին:

### ԿԱԴՐԵՐ ՍՏԵՂՆԵԼԻ ՊՐՈՑԵՍ

Լենինյան անկյունների կազրեր ստեղծելու պրոցեսը — թեթև գործ չե: Արտադպրոցական ղեկավար և կազմակերպիչ ակտիվ հայտարկերելն ու ամրապնդելը մի անգամից չի կարելի կատարել, այլ տեսկան, համառ և անխօնչ զաստիարակչական աշխատանքի հետեանքով: Այդ աշխատանքը պետք և տարվի կարմիր բանակային մասսայի ամենորյա և սիստեմատիկ ուսումնասիրության միջոցով, անհատական ընտրությամբ և նրանից ամենալավերի պատրաստման միջոցով:

Լենինյան անկյան համար կազրեր ընտրելը քաղղեկի և բջիջի կողմից պետք և տարվեն յերկու ժայրից: Մի կողմից, նըրանք պետք և նշեն և հայտարկերեն այն կարմիր բանակայիններին, վորոնք հատուկ ցանկությամբ և հետաքրքրությամբ են մասնակցում լենինյան անկյունում անցկացվող ձեռնարկումներին, արձագանքում են նրանց ավելի ակտիվ և կենդանի կերպով, քան մասցածները: Այդ ավելի ակտիվ կարմիր բանակայիններին անհրաժեշտ և աստիճանաբար և պլանային կարգով քաշել լենինյան անկյան աշխատանքի մեջ, և խիստ հաշվի առնելով նրանց անձնական պահանջներն ու ձգտութները, տաէ նրանց այս կամ այն հանձնարարություններն, առաջին շրջանում ավելի հասարակները և աստիճանաբար, բարդացնելով հանձնարարությունները, ավելի լայն չափով և սիստեմատիկորեն մասնակից դարձնել նրանց լենանկյան կազմակերպչական աշխատանքին:

**Մյուս կողմից՝** արտադպրոցական անմիջական աշխատանքի ընթացքում ակտիվիստի հայտաբերման հետ միասին, քաղաքական ու քջիջը պետք է այդ աշխատանքին քաշեն կարմիր բանակայիններից և պետկազմից նրանց, ովքերը ակտիվություն են հայտաբերում այլ բնագավառներում—կամավոր ընկերությունների քջիջների ակտիվիստներին, կարմիր բանակային կոնֆերանսների պատգամավորներին, զինթղթակիցներին, ակմբային կրուժոկների անդամներին, առաջավոր կարմիր բանակայիններին, զորոնք անհատապես զաստիարակվում են քջիջի կոմյերիտմության կողմից և այլն:

Անկավար ակտիվի հայտաբերման և ամբապնդման աշխատանքանելով, անհրաժեշտ և նրա յուրաքանչյուր քայլը կապել իրեն ակտիվիստի դաստիարակության խնդիրների հետ: Չի կարելի ակտիվիստին դարձնել միայն առանձին հանձնարարությունների տեխնիքական գործադրող, Ուշիմ ունկնդրելով նրա անհնական պահանջներին և ցանկություններին, առանց վարչավորման և կոպիտ ձեռվ գլխին կապելու մեթոդներ գործադրելու, անհրաժեշտ և առաջին հերթին ակտիվիստին շարունակ մասնակից դարձնել կարմիր բանակային հասարակայնության, մոտեցնել նրան կոմքջներին և կոմյերիտմիությանը: Դրա հետ միասին, անհրաժեշտ և բարձրացնել ակտիվիստի կուլտուրական և քաղաքական մակարդակը՝ բարձրացնելու համար տարվող աշխատանքը: Այդ նպատակով անհրաժեշտ և ամենից առաջ չծանրաբեռնել ակտիվիստին, հնարավորություն տալ նրան մշակելու իրեն հետաքրքրող հարցերը և, զոր ամենից կարևորն և, վոչ միայն խոչընդոտ չհանդիսանալ, այլ ամեն կերպ աջակցել ակըմբային դպրոց—խմբակներում տարվող ակտիվիստների աշխատանքին, ակտիվիստներին քաշել այդ դպրոցներն ու խմբակները, ոգնություն ցույց տալ նրանց ինքնակրթական աշխատանքում և այլն:

### ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Լենինյան անկյան կազմերի հարցը անքակտելի կերպով կապված և այդ կազմերի մշակման և հրահանգավորման հարցի հետ: Առանց պլանային կարգով տրված հրահանգավորման զեկավար ակտիվի դաստիարակության և արտադպրոցական աշխատանքի վորակի բարձրացման մասին տարվող խոսակցությունները—դատարկ խոսակցություններ կլինեն:

Ամենից առաջ անհրաժեշտ ե սխսոեմ դարձնել լենինյան անկյան աշխատանքին քաշված բոլոր կարմիր բանակայինների և հրամանատարների անհատական երանական գաղտնաբառը: Վորպես կանոն, պետք ե այնպես անել, վոր վոչ վորի վոչ մի հանձնարարություն չարփի, քանի հանձնարարություն ստացող անձնավորությունը նախական հրահանգաման չի յենթարկվել քաղղեկի և հրամանատարի կողմից: Այդ հրահանգամանը չպետք է լինի ընդհանուր և մակերեսային, այլ զորձնական, մանրամասն մըտածված և կոնկրետ: Նախական հրահանգաման հետ միասին անհրաժեշտ ե ստուգել այն աշխատանքի պրոցեսում, ուշադիր դիտելով այդ աշխատանքը, և խկույն յեվ յեր մատնանիշ անելով այդ աշխատանքը կազմակերպչին նկատված պակասները: Վերջապես, հատուկ կարեոր ինդիր և հանդիսանում այն նյութերի ուշացիր դիտումը, վոր աշխատանքի ընթացքում պատրաստվում ե խմբակի ղեկավարի կողմից (աշխատանքի կոնսպիկուր և խմբակների աշխատանքի ծրագիրները), մասսայական աշխատանքը ղեկավարի կողմից (բեմագրություններ, յերգեր և այլն) և ժամանակին այդ նյութերը ուղղելը: Ղեկավար ակտիվի պատրաստման ամրող սիստեմում, իր ձկունության շնորհիվ, անհատական հրահանգամանը հանդիսանում է պատրաստման առենից էարեոր ձեւ և պլանային ու ճիշտ պատրաստման ղեղքում առենակարեոր զենքը կինի քաղղեկի և բջիջի ղեկավար աշխատանքի մեջ:

Անհատական հրահանգամանը հետ միասին պետք է կարգավորել և խմբակային երանական գաղտնաբառությունը: Խմբակային հրահանգամանը պետք է կիրառվի կանոնավոր, վոչ շուտ, քանի յերկու շաբաթը մի անգամ, լենինյան անկյան բոլոր ակտիվ աշխատողների և հրահանգչական խորհրդակցություններ կազմակերպելու միջոցով: Խմբակային հրահանգամանը առաջին հերթին անհրաժեշտ ե ընզպրկել խմբակների ղեկավարներին, մասսայական աշխատանքի առանձին կազմակերպիչներին՝ «աշխատակների վարիչներին» և այլն:

Խմբակային հրահանգամանը պետք է կիրառել բոլոր ուղղություններով, ինչպես բովանդակության իմաստով (այս կամ այն խմբակի ծրագրի, այս կամ այն յերեկույթի բովանդակության քննությունը), այնպես ել աշխատանքի կազմակերպման և մեթոդիկայի առանձին հարցերի վերաբերյալ (ինչպես աշխատել, ինչպես պատրաստել այս կամ այն ցուցահանդեսը կամ

ցուցափեղկը): Խմբակային հրահանգավորումը անհրաժեշտ է կիրառել, հնարավորության չափ, հենվելով ներկա յեղողների կողմից փորձի փոխանակության կազմակերպման վրա և նրանց իսկ մասնակցությամբ քննության յենթարկել առաջադրված հարցերը (խմբակների, առանձին դեկավորների, «տախտակների վարիչների» գրույցները, զեկուցումները):

Դրա հետ միասին խմբակային հրահանգավորումը պետք է ոգտագործվի լինիյան անկյան ընթացիկ աշխատանքների ղեկավարներ պատրաստելու համար. խմբակների ղեկավարների կողմից ժողոված նյութերի և պլանների քննությունը, նոր խրմբակների նշելը և նրանց աշխատանքի պատրաստման համար հանձնարարություններ տալը, լինիյան անկյան աշխատանքների վերաբերյալ հրահանգչական նյութերի հետ ձանոթանալը և այլն:

Վաշտից բացի հրահանգչական պարապմունքներ պետք է կազմակերպել նաև գնդային մասօտաբով: Գնդում այդ պարապմունքները պետք է կիրառվեն ժամանակ առ ժամանակ՝ առանձին հատուկ հարցերի շուրջը—որինակ՝ հրածգային խմբակների ղեկավարների համար, վորեւ ցուցահանգես կազմակերպիչների համար, հերթական կամպանիայի նախապատրաստման հետ կապված, և այլն: Գնդային հրահանգավորման միջոցներից մեկը կարող է հանդիսանալ և առանձին ցուցագրական աշխատանքների կամ պարապմունքների կազմակերպումը, վորի քննությանը զանգան վաշտերից մասնակից են արվում համապատասխան աշխատողներ:

Հատուկ նշանակություն է ձեռք բերում գնդային պարապմունքը վաշտին գրադարանապեսների են, պարապմունք վոր գնդային գրադարանի վարչիչը պետք է հրավիրի ամփուր մեկ-յերկու անգամ: Այդ պարապմունքներում քննվում են զրադարանային աշխատանքի զործնականին և մեթոդիկային կապված ընթացիկ հարցերը, լուգում են առանձին աշխատողների ղեկուցումները և այլն:

Հրահանգիչներին պատրաստելու նպատակով հատուկ պարապմունքներ կազմակերպելու հետ միասին պետք է ոգտագործել աշխատանքի ուրիշ բնագավառների վերաբերյալ հրավիրվող պարապմունքները ու խորհրդակցությունները: Այդ նպատակով հատկապես կարեոր և ոգտագործել կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների կողմից հրավիրվող անհատ խմբա-

կավարների խորհրդակցությունը, դնելով այնտեղ լենինյան անկյան ազգային աշխատանքի խնդիրները (հերթական կամպանիաները, աշխատանքը թերթի հետ և այլն):

Վերջապես, վաշտային ակտիվի պատրաստման սխստեմում հոկայտական գեր և խաղում արտապրոցական աժիառանձնի գընդապին սեմինարը: Նման սեմինարներ պետք եւ կազմակերպվեն տարեկան մեկ յերկու անգամ, 7-10 որվա ժամանակով (25-40 ժամ պարագմունք), հատուկ ծրագրով: Սեմինարներին պետք եւ մասնակից արդին վերապատրաստման կարու խմբակավարները եւ լենինյան անկյան մյուս ակտիվիստները (առաջին հերթին՝ կրտսեր պետքերի կազմը և կոմյերիտականները):

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Լենինյան անկյան խորհուրդը՝ընտրովի կազմակերպություն եւ, զորը ստեղծվում եւ, ինչպես ձևակերպում եւ ակումբների և լենինյան անկյունների նորմալ կանոնադրությունը, «կարմիր բանակայիններին և հրամանատարներին մասնակից անելու համար լենինյան անկյան աշխատանքի կազմակերպման և գեղավարության, ունենալով այդ բանում բջիջի քաղաքական աշխակցությունը»: Վաշտի արտադպրոցական աշխատանքի կուսակցական-քաղաքական զեկավարության ամբողջ սխստեմում, լենինյան անկյան խորհուրդը, վորպես զեկավարության ձեռնորդ մեկը, բացառիկ կարևոր նշանակություն և ձեռք բերում, վորը ել ավելի յեւ աճում կարմիր բանակայինների ակտիվության ընդհանուր աճման հետ միասին: Վորպես կարմիր բանակայինների կողմից ընտրված կազմակերպություն, խորհուրդը միջոց եւ հանդիսանում ամուր կապ ստեղծելու համար լենինյան անկյան և ամբողջ կարմիր բանակային մասսայի միջև: Խորհրդի միջոցով վաշտային ակտիվը և կարմիր բանակայինների այն շերտերը անմիջական մասնակցություն են ցույց տալիս ենինյան անկյան աշխատանքի շինարարությանը: Բացի այդ, սորհուրդն իր անդամների կոմունիստական դաստիարակության հենք և հանդիսանում, անդամները խորհրդի գործնական աշխատանքում ձեռք են բերում մի շարք կազմակերպչական սովորությունների հետ միասին աշխատանքում աշխատանքի համար անհնարինությունը առաջանական է:

բույթներ, սովորում են աշխատել ակտիվ, կռԱհկտիվ և կազմակերպված ձեռք և մոտենում են կոմյերիտմիությանն ու կոմբջիջին:

## ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ենինյան անկյան խորհուրդը ընտրվում է վաշտի ընդհանուր ժողովում չորս անդամների և յերկու թեկնածուների կազմով: Խորհուրդն ընտրվում է ավելի ակտիվ և զարգացած կարմիր բանակայիններից և պետերի կազմից: Խորհրդի հինգերորդ անդամն ու նախագահը հանդիսանում է վաշտի քաղղեկը<sup>\*</sup>: Առանձին վաշտերում և նորմալ դպրոցներում, խորհրդի անդամների քանակը կարող է ավելացվել: Սակայն հազիվ թե կարիք լինի խորհրդի կազմը յոթ հոգուց ավելին դարձնել, նա շատ մեծ կլինի:

Ենինյան անկյան խորհրդի ընտրված կազմը հաստատում է զորամասի կոմիսարը: Վաշտի ընդհանուր ժողովին հնարավորություն և արվում մինչև նոր ընտրություն կայանալը յետ կանչելու խորհրդի այս կամ այն անդամին, վորը կամ մեկնել և վաշտից, կամ թե քիչ ակտիվ և և անաշխատունակ:

Վորպես կանոն, խորհուրդը ընտրվում է վեց ամիս ժամանակով, այսինքն՝ տարին յերկու անդամ—գեկտեմբերին—հունվարին և հունիս—հուլիսին (ամարային ուսուցման սկզբին, ճամբար զուրս դալուց քիչ հետո): Մի քանի զորամասիր նպատակահարմար են գտնում վերընտրությունները կայացնել նոյյեմբերին, վորպեսզի ձմերսյին ուսուցման սկզբին ունենան լենինյան անկյունի խորհուրդի հաստատ և մնայուն կազմ: Սակայն, այդ դեպքում խորհրդում տեղ չեն գտնի նորեկները, վորոնք սովորաբար զորամաս են գալիս նոյյեմբերի վերջին: Դրա համար եւ ավելի լավ և խորհուրդն ընտրել ձմեռվա կեսին, բայց նրա աշխատանքին մասնակից անել յերիտասարդ կարմիր բանակայինների հիմնական մասսային:

Խորհուրդների վերընտրության վերոհիշյալ ժամկետները չպետք ե փոփոխվեն: Այդ հանդամանքն ապահովում է ամբողջ բանակում միաժամանակ վերընտրություններ անցկացնելու հնարավորությունը, վերընտրություններ, վորոնք կկիրառվեն վորպես քաղաքական լայն կամպանիա:

<sup>\*</sup>) «Ակումբների և լենինյան անկյունների նորմալ կանոնադրություն»

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆ- ԿՅԱՆ ԽՈՐՃՐԴՈՒՄ

Խորհրդի ամբողջ գործնեյության ծանրության կենտրոնը նրա անդամների մշտական աշխատանքն է: Դրա համար ել նորությունների խորհրդի աշխատանքի կարգավորման առաջին քայլն իր ներսում պարտականությունների բաշխելն է:

Խնչակես մոտենալ խորհրդի անդամների միջև աշխատանքի բաշխմանը՝ Շատ զորամասներում զործադրում են այդ ըստ «աշխատանքի բնագավառների» (ինչպես սովորաբար անվանում են).—խորհրդի անդամներից մեկը ստանձնում է լենինյան անկյան քաղաքատանքը կազմակերպելու ու ղեկավարելու պարտականությունը, մյուսը՝ ռազմականը, յերրորդը՝ ընդհանումը կրթականը և այլն: Այդ միջոցը հաջող չի կարելի համարել վոչ միայն նրա համար, վոր զործականում դժվար և վորոշել, թե վորտեղ և վերջանում աշխատանքի մի բնագավառը և սկսվում մյուսը, այլ և նրա համար, վոր քաղաքական, ռազմական և ընդհանուր կրթական աշխատանքը ղեկավարելու համար խորհրդի անդամներից պահանջվում է անհամեմատ մեծ վորակում: Պարտականությունները բաշխել ըստ բնագավառների, նշանակում և ձգտել խորհուրդը կազմել ներկայացուցչական սկզբունքով—ըջիջի ներկայացուցչից՝ ղեկավարելու համար քաղաքատանքը, բուժակից, վորը կկազմակերպի սանիտարական լուսավորության աշխատանքը և այլն: Այսպիսով խորհուրդը կորցընում և իր կարմիր բանակային ընտրովի կազմակերպության գեմքը: Հաշվի առնելով այդ, նորմալ կանոնազրությունը հանձնարում է պարտականությունները բաշխել վոչ ըստ բնագավառների, այլ ըստ լենինյան անկյան աշխատանքի ձևերի հետեւյալ կարգով.—խորհրդի անդամներից մեկը՝ Քարտուղար, վորը և զբաղվում է անկյան կարգավորման հարցերով: Խորհրդի յերկրորդ անդամը մտահոգվում է մասսայական աշխատանքի կազմակերպմանը: Յերրորդը—զբաղվում է լենինյան անկյան կարգավորման և տեսողական ագիտացիայի խնդիրներով: Խորհրդի անդամության թեկնածուների վրա զրվում է առանձին հանձնարարությունների կատարման պարտականությունը:

Խորհրդի անդամների աշխատանքի այդպիսի կարգն ունի մի շարք զրական կողմեր այն իմաստով, վոր խորհրդի յուրա-

քանչյուր անդամի հանձնաբարկում և վոչ թե գաղափարական զեկավարություն, այլ կազմակերպչական աշխատանք։ Առանձին մասնագիտական հարցերի վերաբերյալ խորհուրդը և նրան անդամները կարող են հրավիրել վաշտի համապատասխան մասնագետներին—և բուժակին, սանիտարական լուսավորության ծրագիրը մշակելու համար, և ուսուցչին՝ ընդհանուր կրթական աշխատանքին վերաբերող տեղեկություններ տալու համար և այլն։

Ղեկավարվելով պարտականությունների բաշխման մատնաշնչված կարգով, պետք են, ինարկ են, միևնույն ժամանակ հաշվի առնել և տեղական պայմանները։ Այսպես, որինակ, յեթե աշխատանքի վորում և բնագավառի հարցը տվյալ վաշտի պայմաններում հատուկ հարգածայնության բնույթ ե կրում, իսկ խորհրդի անդամների կազմում կամ մեկը, վորին կարելի յե հանձնել այդ բնագավառի ղեկավարությունը—նորատակահարմար և առանձնացնել այդ բնագավառը։ Բայց այդ չպետք ե գործադրվի վորպես կանոն, այլ կիրառվի մի քանի դեպքերում, յելնելով առանձին դորամասերի առանձնահատուկ պայմաններից։

Բաշխելով պարտականությունները խորհրդի անդամների միջև, անհրաժեշտ ե անպայման հաշվի նստել նրանց ցանկությունների հետ, խորհրդի վրա այնպիսի պարտականությունն ըստ զընել, վորով նա քիչ և հետաքրքրվում և բավականությամբ չպետք ե կատարի։

Խորհրդում ընդունված պարտականությունների բաշխումը պետք ե նրա ամբողջ գործնական աշխատանքի հիմքը կազմիր:

Վորոնիք են խորհրդի անդամների պարտականությունները, անդամներ վորոնց հանձնաբարքած և այս կամ այն աշխատանքի կազմակերպումը։

**Սուածին.**— այդ աշխատանքի ծրագրի և ցուցակի կազմելուն մասնակցելու կենինյան անկյան ընդհանուր անհելիքների համաձայն, խորհրդի անդամը նշում և այն ձեռնարկումները, վորոնք, նրա կարծիքով պետք ե կիրառվեն տվյալ սլանային շրջանում, և իր նկատառությունները ներկայացնում ե խորհրդի գովին։

**Յերկրորդ.**— այդ պլանի գործնական կենսագործման աշխատանքը և նշված առանձին ձեռնարկումների կատարմանը կարմիր բանակայինների ամենալայն մասսաներին մասնակից անելու Խորհրդի անդամը ողնում և քաղղեկին հաշվի առնելու վաշտի բոլոր ակտիվ ուժերին, վորոնք կարող են աշխատանքի-

քաշվել, պարզում ե, թե ում, ի՞նչ կարելի յև հանձնարարել և կամ  
ինքը անձամբ (վաշտի քաղղեկի հետ համաձայնեցնելով) կամ  
քաղղեկի, հրամանատարի կամ բջիջի միջոցով (յեթե այդ ան-  
հրաժեշտ է գտնվում) տալիս և նրանց այս կամ այն հանձնա-  
րարությունները:

**ՑԵՐԵԿԵՎ.**—կազ լենինյան անկյան խորհրդի մյուս անդամ-  
ների, գնդային ակումբի, կամավոր ընկերությունների համա-  
պատասխան բջիջների հետ և այլն:

**ՑԵՐԵԿԵՎ.**—նրան հանձնարարած աշխատանքի տեսակի  
կազմակերպչական-տեխնիքական ապահովումը, և աշխատանքի  
ժամանակի և շենքի հետ կապված հարցերի կարգավորման նը-  
կատմամբ, և գնդային ակումբի և անհրաժեշտ ձեռնարկների ու  
պիտույքների (գրիմ, հագուստներ և այլն) ձեռք բերման նկատ-  
մամբ:

**ՀԻՆԳԵՐԵԿԵՎ.**—կարմիր բանակայինների շահերի ուսումնա-  
սիրությունը, աշխատանքի արդյունքներին հետևելը, այնուհե-  
տեւ, թե ինչպես են վերաբերվում կարմիր բանակայիններն այդ  
աշխատանքին, բավարարում են նրանց այն, աշխատանքի վեր  
տեսակն և նրանց հատկապես դուր գալիս և այլն:

## ԽՈՐՃՐԴԻ ՆԻՍԸ

Լենինյան անկյան խորհրդի նիստը նրա աշխատանքի սիս-  
տեմում շատ կարևոր դեր է խաղում: Նիստերը լենինյան ան-  
կյան տշխատանքի և կյանքի բոլոր հարցերի կողեկտիվ քննման  
և լուծման միջոց են ծառայում, հնարավորություն են տալիս  
պլանաչափի և կազմակերպված ձեռվ բաշխելու աշխատանքը խոր-  
հրդի բոլոր անդամների միջև իմի գումարելու նրանց աշխա-  
տանքը:

1. **ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԱՇԽԱՏԱԲԵՔԻ ԱՋԱնԱՎՈՐՄԱՆ ԻԵՏ**  
կապված հարցեր.—քաղղեկի ինֆորմացիան տվյալ պլանային  
ըրջանում վաշտի քաղլուսաշխատանքի հիմնական խնդիրների  
համար և այստեղից բղխող լենինյան անկյան պլանային անե-  
իքները, խորհրդի առանձին անդամների զեկուցում-  
ներն իրենց հանձնված աշխատանքի տեսակի պլանի մասին,  
որացույցային ցուցակի հաստատումը և այլն: Պլանի հարցերի  
ըննությանը անհրաժեշտ ե հատկացնել խորհրդի հատուկ նիստ՝  
պլանային յուրաքանչյուր շրջանի սկզբում:

2. **ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԱՌԱՆՃԻՆ ԱՇԽԱՏՈՂԵՐԻ՝ ԽՄԲԱԿ-**

ների ղեկավար խորհրդի անդամների, առանձին ձեռնարկումների կազմակերպիչների ղեկուցումները: Պանային շրջանի ընթացքում խորհուրդը պետք է, նսարավորության չափ, լոի լենինյան անկյան աշխատանքի ամենից կարևոր տեսակների և բնագավառների բոլոր կազմակերպիչների-ղեկուցումները: Ցանկավայրեագի նիստերից յուրաքանչյուրի որակարգում դրվի մի այդպիսի ղեկուցում:

3. Ենթինյան անկյունում առանձին ավելի կարեալոր ձեռնարկումների կիրառման հետ կապված հարցեր.—ինքնազործնեյության յերեկոներ, սպորտ տոն, խորհրդի առաջիկա ընտրության կիրառման պլան և այլն:

4. Ենթինյան անկյան ընթացիկ աշխատանինի կազմակերպչական հետական հարցեր.—խմբակների ղեկավարներ, «տախտակների» վարիչներ և այլն նշելը, անկյունում աշխատանքը դասավորելու հետ կապված հարցեր, կապված ձեռնարկներ կամ պիտույքներ պատրաստելու կամ ձեռք բերելու հետ, և այլն:

Հարցերի զործարար և ուշագիր քննությունն ապահովելու նկատառումով, նիստի որակարգը չպետք է ծանրաբեռնված լինի: Որակարգում պետք է մացնել միայն այն հարցերը, վորոնք իրոք արժե կուլեկտիվ քննության յինթարկել: Մի շարք մանր ընթացիկ հարցեր կարող են լուծվել և առանց նիստի, խորհրդի այս կամ այն անդամի, քաղկեդի և հրամանատարի հետ միասին:

Բոլոր հարցերի վերաբերյալ խորհուրդը պետք է համի միանգամայն կոնկրետ, զործնական վորոշումներ ու առաջարկներ:

Խորհրդի նիստերը այնքան ել հաճախ չպետք է զումարվեն: Ամենից լավը և հաստատ կարգ սահմանել և նիստերը հրավիրել յերկու շաբաթը մի անգամ: Յուրաքանչյուր նիստի որակարգը պետք է կազմել այն հաշվով, զորպեսզի նրա քննությունը յերկու ժամից ավելի շտեմ:

Խորհրդի նիստը պետք է նախորոք պատրաստվի: Որակարգում զրված ամեն մի հարցի առթիվ պետք է վաղորոք նշել զեկուցող, զորը և ժամանակին կապատրաստի իր զործնական առաջարկությունները այդ հարցի վերաբերյալ: Կարեսը և նույնպես, զորպեսզի խորհրդի անդամները նախորոք ծանուցված լինեն այն մասին, թե ինչ հարցեր են զրվելու առաջիկա նիստին, զորպեսզի նրանց վրա մտածելու հնարավորություն ունենան:

Խորհրդի նիստին նըա անդամներից բացի անհրաժեշտ

այս կերպով մասնակից անել լենինյան անկյան բոլոր ակտիւ զիստներին, խմբակների ղեկավարներին և այլն։ Նիստերի մասին պետք ե լայն ծանուցել կարմիր բանակային մասսային, մտցնելով այն որացույցային ցուցակի մեջ, հատուկ հայտարարություն փակցնելով և այլն։

Քաղղեկին իրավունք և արվում հաստատելու խորհրդի բոլոր վորոշումները։

## ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

Խորհրդի պարտականությունների մեջ մտնում ե լենինյան անկյունում կանոնավոր հերթապահություն կազմակերպելը։ Դեռևս տեղաբանություն ունեցող այն կարծիքը, թե հերթապահություններ կազմակերպելը խորհրդին չի վերաբերում, և վոր այդ բնագավառի բոլոր պարտականություններն ընկնում ե թշրիջի և աջակցության խմբակի վրա, չի կարելի ճիշտ համարել։ Լենինյան անկյունում հերթապահությունները սահմանելն ընկնում ե վոչ թե թշրիջի վրա, այլ ամրողապես լենինյան անկյան խորհրդի վրա և հերթապահը պետք ե գիտվի, վորպես խորհրդի ներկայացուցիչ, վորն իր պարտականությունները կատարում ե հասարակական աշխատանքի կարգով։ Խորհրդի անունից։

Լենինյան անկյունում հերթապահություն պետք ե տարվի ամեն որ մասնավորապես, և հատկապես այն որերին, յերբ ծըրագրով լենինյան անկյունում մասսայական աշխատանք չի նախատեսնվում։

Հերթապահությունը ճիշտ կազմակերպելու համար, խորհուրդը պետք ե ունենա այն անդամների ցուցակը, վորոնք կարող են մասնակից արվել լենինյան անկյան հերթապահությանը։ Հերթապահության հիմնական կորիզը պետք ե հանդիսանան իրենք խորհրդի անդամներն ու թեկնածուները։ Նրանցից բացի հերթապահության պետք ե մասնակից արվեն և լենինյան անկյան ակտիվիստներին—խմբակների ղեկավարներին, ակտիվ և զարգացած կոմյերիտականներին և այլն։ Վորպեսզի հերթապահությունն արդյունավետ անցնի, անհրաժեշտ ե, հնարավորության չափ, հաշվի նստել բոլոր մասնակից արվողների անձնական ցանկությունների հետ։

Հերթապահության կարգը նշվում ե խորհրդի քարտուղարի կողմից և լենինյան աշխատանքի որացույցային ցուցակների հետ միաժամանակ ներկայացվում ե խորհրդի հաստատության։

Անհրաժեշտ է, վորպեսզի հերթապահության քաշվողներից յուրաքանչյուրը նախորոք ծանուցի իր հերթապահության որվածափն և առհասարակ որը համաձայնեցվի նրա հետ։ Հերթապահության ցուցակը փակցվում է լենինյան անկյան հայտարարությունների տախտակի վրա։

Լենինյան անկյան հերթապահի պարտականությունները յերկու կարգի յեն։ Առաջին նա պետք է հետեւ լենինյան անկյան կարգ ու կանոնին, ոգնի ավագալ որը տարվող առանձին աշխատանքների համար շենք գոնելու հարցերի լուծման, որպարում ցուցակադրի այդ յերեկո տարված աշխատանքը, նրա ակտիվ մասնակիցների քանակը և այլն։ Յերկրորդ՝ նրա անելիքը կայանում և նրանում, վորպեսզի ոգնի լենինյան անկյան հաճախորդ կարմիր բանակայիններին՝ ափելի ողտակար և զրագիշ անցկացնելու իրենց հանգիստը նա պետք է կոլեկտիվ խաղերի, յերգի և պարի կազմակերպման նախաձեռնողը լինի, պետք և թերթ կարգա ավելի պակաս զրագետ կարմիր բանակայինների համար, լենինյան անկյան աշխատանքի որակարգում զրգուծ վորեն հարցի շուրջը զրույց կազմակերպի, աջակցի կարմիր բանակայիններ հետաքրքրուող հարցի շուրջը տեղեկանքներ տալուն և այլն։

Անհրաժեշտ է, վորպեսզի խորհրդի անդամներից և ակտիվիստներից յուրաքանչյուրը ինսամբով պատրաստվի իր հերթապահության։ Այդ նպատակով վաշտի քաղղեկը հերթապահությունից առաջ աշխատանքի հետ, վոր նշված և պլանի համաձայն, հրահանգի այդ աշխատանքի ժամանակ նրա ունենալիք պարտականությունների մասին և համապատասխան ցուցումներ տա այն մասին, թե ինչն և ամենից նպատակահարմար անցկացնել այդ յերեկոյան լենինյան անկյունում և այլն։

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՅԱՀԻՆ ՄԱՍԱԿ

Լենինյան անկյան խորհրդից պետք է հանդիսանա այն կենտրոնը, զորի շուրջը համախմբվում է վաշտի արտապլրոցական աշխատանքին մասնակցող ամբողջ ակտիվը, Դրան պետք է հասնել ամենատարբեր ուղիներով։ Այդ ճանապարհներից մենակարեռներն են.—1) խորհրդի նիստերի լայն մասսայականացումը և լենինյան անկյան ակտիվիստներին այդ նիստերին

մասնակից անելը, 2) խորհրդի կողմից նշված զանազան ձեռնարկությունների կիրառմանը ակտիվիտաներին մասնակից դարձնելը (ուսումնասիրում են աշխատանքի առանձին տեսակները և հետեւանքների մասին գեկուցում խորհրդի նիստին), 3) խորհրդի բայն հաշվետվությունը ընտրողների՝ կարմիր բանակայինների առաջ:

Վերջինի վրա անհրաժեշտ ե հատուել կանգ առնել: Կանոնագրության համաձայն, լինինյան անկյան խորհուրդը «յերեք ամիսը մեկ անգամ վաշտի ընդհանուր ժողովին զեկուցում և տալիս իր աշխատանքի մասին: Վաշտի ընդհանուր ժողովը զնահատական և տալիս խորհրդի աշխատանքին» (նման զեկուցումներից մեկը դրվում է խորհրդի վերընտրության ժամանակ): Այդ զեկուցումների կիրառմանը խորհուրդը պետք ե պատրաստվի ամենամեծ խնամքով և նրանց շուրջը համախմբի կարմիր բանակայինների հասարակական կարմիրը: Հատուել ե հաշվետու զեկուցումներ անցկացնելուց բացի նպատակահարմար ե, վորպեսզի խորհուրդը ժամանակ առ ժամանակ տեղեկատու զեկուցումներ դնի իր աշխատանքի մասին, կամ ամենից կարենոր ձեռնարկումների վերաբերյալ լինինյան անկյունում ժողոված կարմիր բանակայինների համար: Հաշվետվության համար խորհուրդը պետք ե ամեն կերպ ոգտագործի և պատի քերքը: Լուսաբանի այնուղի իր աշխատանքը, իսկ մյուս կողմից՝ ունկնդրի նրան, թե կարմիր բանակայինները թիրթի միջոցով ինչ են առում լինինյան անկյան մասին:

Ի գեալ, նկատենք, վոր խորհրդի մասսայականացման նպատակով, նպատակահարմար ե, վորպեսզի անկյան ամբողջ աշխատանքն ընթանա նրա անունից: Այսպես, որինակ, անհրաժեշտ ե յերեկույթների, մրցակցությունների և այլն մասին հայտարարությունները փակցնել խորհրդի ստորագրությամբ:

## ԳԵՐԵՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Ինչպես արդեն հիշատակվեց, խորհուրդների վերընտրությունը կատարվում է տարեկան յերկու անգամ, ամբողջ բանակում միաժամանակ: Նրանք պետք ե տարվեն, վորպես լայն քաղաքական կամպանիա և ոգտագործվեն ամբողջ արտադրոցական աշխատանքը կարմիր բանակայինների մեջ մասսայականացնելու համար: Վերընտրական ամբողջ կամպանիայի կադրմակերպողն ու զեկավարը պետք ե հանդիսանա վաշտային բը-

ջիջը, վորը կիրառում ե այդ կամպանիան իր անունից, առաջազրում ե թեկնածուներ, ծավալում ե նախնաբական ազիտացիան, նախապատրաստում ե գերընտրական ժողովը և այլն:

Կամպանիայի կիրառման հետ կապված բոլոր հարցերը—թեկնածուների նշելը, նակազը, նախընտրական ազիտացիայի կամպանիան և այլն,—քննվում են թիջի կողմից վաղորոք հրաժիրված գոնիքակ նիստաւմ, վորին պետք ե մասնակից արվեն և կոմյերիտականները:

Բջիջը հատուկ ուշադրություն պետք ե դարձնի հետազայի խորհրդի աշխատանքի համար նակազ մշակելու վրա: Այդ նաև կազը պետք ե կազմված լինի վոչ թե բնդինանուր դարձվածքներով, այլ զործնական, հարմարեցրած տվյալ վաշտի աշխատանքի պայմաններին և անելիքներին:

Եթէ նակազը և թիջի կողմից խորհրդի կազմի մեջ առաջարկվող թեկնածուների ցուցակը պետք ե վաղորոք փակցվեն լինինյան անկյունում, վորակեսի նրանց հետ ծանոթանալ կարողանան բոլոր կարմիր բանակայինները:

\*Եախընտրական ագիտացիան պետք ե ծավալվի լենինան անկյան աշխատանքի կոնկրետ, զործնական խճղիրների վրա: Ագիտացիայի հանգույցային կետեր պետք ե հանդիսանան նակազը և թեկնածուների ցուցակը: Ազիտացիայի համար անհրաժեշտ ե ոգտագործել ամենատարբեր ձևերը—կուսակցականների և կոմյերիտականների զրույցները լինինյան անկյունում, մասսայական յերեկույթ, հաշվետու ցուցանանդես խորհրդի աշխատանքի վերաբերյալ և այլն:

Հատկապես խնամքով պետք ե կազմակերպվի վերընտրական ժողովը: Այդ ժողովում պետք ե նախորոք ապահովել միքանի յերույթները: Նոր խորհրդի թեկնածուները պետք ե քվեարկվեն վոչ թե ցուցակով, այլ անհատապես:

Խախապատրաստական աշխատանքի ամբողջ ընթացքում բջիջը պետք ե ուշազիր ունկնդրի այն ցանկություններին և առաջարկություններին, վոր առաջազրում են կարմիր բանակայինները, լսի հետազա խորհրդի կազմի մասին ունեցած նրանց կարծիքները և խնամքով հաշվի առնի այդ ցանկություններն ու առաջարկությունները:

## ԽՈՐՃՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջում խորհրդի անդամների ընտրության մասին: Այդ հարցը խորհրդի ամբողջ աշխատանքում վճռական դեր է խաղում,

վորովնետե խորհրդի աշխատունակությունը կախված ե ամենից առաջ նրա կազմից:

Խորհրդի աշխատունակության առաջին պայմանը — այդ երա աճամբաների անհամներին, բջիջները, պետք ե առաջին հերթին հաշվի առնեն, թե՝ 1) վորքան ե այս կամ այն ընկերը շահազգութած լենինյան անկյան աշխատանքով, 2) վորքան կանոնագոր նա կարող ե աշխատել խորհրդում, արդյոք, նա չի ծանրաբեռնված ուրիշ աշխատանքով, 3) ինչպիսի աշխատանք նա կարող ե կատարել լենինյան անկյունում, յենելով նրա զարգացումից ու ընդունակություններից: Միայն այդ յերեք պայմանների հետ կապված պետք ե նշվեն խորհրդի անդամները:

Խորհրդում պետք ե ապահովել կարմիր բանակայինի այլ և կրտսեր հրամանատարի մասնակցությունը Ցանկալի յենույնակես, վորպեսզի խորհրդի անդամների կազմում լինի մեկ-յերկու հոգի միջին պետկազմից: Բայց այստեղ ել չի կարելի ասել վորուել խիստ սահմանված նորմա—ամեն ինչ պետք ե կախված լինի առաջին հերթին անհատական մոտեցումից:

Խորհրդի աշխատանքի վրա կուսակցական-կոմյերիտական ազգեցությունն ապահովելու համար, անհրաժեշտ է խորհրդում ստեղծել կուսակցականներից և հատկապի կոմյերիտականներից կազմված կորիգ: Սակայն, պետք ե նշել, վորհիմնական խընդիրը վոչ թե նրանումն ե, վորպեսզի խորհրդի աշխատանքը կառուցվի կուսակցականների ուժերով, այլ նրանում, վորպեսզի այդ աշխատանքին լայն չափով մասնակից արվի անկուսակցական կարմիր բանակայինը:

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

### ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վաշտի գրադարանային աշխատանքը, վորի կազմակերպիչ կենտրոնը համգիսանում ե վաշտային գրադարանը, — լենինյան անկյան աշխատանքի անքակտելի մի մասն ե: Դրա համար արտադպրոցական աշխատանքի ըոլոր սկզբունքներն ամբողջապես և լիովին պաշտպանում են իրենց ուժը և գրադարանային աշխատանքի նկատմամբ (բայց, ինարկե, համապատասխան չափով հարմարեցվում են նրա առանձնահատկություններին): Սակայն, արտադպրոցական մնացած աշխատանքների հետ համեմատած,

գրադարանն ունի այն առանձնահատկությունը, վոր իր անմիշական արտադպրոցական ֆունկցիան կատարելու հետ միասին, նա կրում և մի շաբաթ սպասարկող պարտականություններ դաստիարակչական վոչ միայն արտադպրոցական, այլ և քաղաքական և սպահական պարապմունքների ամբողջ աշխատանքը զբովով սպահակելու վերաբերյալ:

Այդ հանգամանքն իր կնիքն ե դնում գրադարանային աշխատանքի բովանդակության վրա, վորոն այդպիսով սահմանվում ե վոչ միայն լենինյան անկյան աշխատանքի ընդհանուր բովանդակությամբ, այլ և վաշտում տարգող վարժական և այլ աշխատանքի բովանդակությամբ:

Ինչպես և լենինյան անկյան ամբողջ աշխատանքը, գրադարանային աշխատանքն ել վաշտում պետք և կառուցվի կարմիր բանակայինների հիմնական մասսայի վրա, ավելի պակաս գարգացած և ավելի պակաս ակտիվ մասսայի վրա: Սակայն փորձը ցույց տվեց, վոր գրքերի այն փոնզը, վոր ունի վաշտը, միանգամայն անբավարար և կարմիր բանակային մասսային սպասարկելու համար, և վոր կարմիր բանակայինների մի մասը գրքեր և վերցնում զնդի գրադարանից: Այդ բոլորովին ել չենշանակում, թե գրադարանային աշխատանքը պետք և կառուցվի միայն այն գրքերի շուրջը, վոր կան վաշտում: Գրադարանային աշխատանքի բովանդակությունը պետք և վորովի վոչ թե կոլեկտիվ արօնիմինտի կազմի հետ կապված, այլ այն զըրքերի համեմատ, վոր առհասարակ կան զնդում, և վորը կարմիր բանակայինը կարող է ստանալ Այստեղից: Ի միջի այլոց, հետևում ե, վոր գրադարանի վաշտային աշխատանքը պետք և կարմիր բանակայինին ամեն կերպ գրավի գեղի զնդի գրադարան հաճախելը և նրա գրքերով ոգավելը:

## ԸՆԹԵՐՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԵԼԸ, ՎՈՐՊԵՍ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Յերեին կարծում են, թե գրադարանային աշխատանքում սպասարկման ֆունկցիաները զերակշում են բոլոր միացածների վրա և նույնիսկ ավելին, թե այդ աշխատանքը տեխնիքական և և արտադպրոցական աշխատանքի ընդհանուր սիստեմում վոչ մի ինքնուրույն ֆունկցիաներ չեն կատարում: Նման հայացքը ճիշտ չի կարող համարվել Բավական և նայել թվերին, վորոնք ցույց են տալիս ընթերցանության աճումը վեր-

ջին յերկու — յերեք տարվա ընթացքում, համոզվելու համար, վոր կարմիր բանակայինի հանգիստը կազմակերպելու գործում գրադարանը այնքան ել վերջին տեղը չի գրավում: Յեթև լեռնայան անկյունը իր աշխատանքի կարևորագույն խնդիրն են համարում կարմիր բանակայինի հանգիստը կազմակերպելու միջոցով ամրել նրա պահանջներին և հետաքրքրությանը, ապա գրադարանային աշխատանքի հիմնական խնդիրը, — վորպես լեռնայան անկյան աշխատանքի անքակտելի մի մասը, — կայանում և ամենից առաջ նրանում, վորպեսզի ընդգրկի կարմիր բանակայինների այն պահանջները, վորոնք հայտարերվում են գրքի միջոցով, այսինքն այսպես կոչվող ընթերցանության պահանջներն ու հետաքրքրությունը: Այլ խոսքով ասած, գրադարանային աշխատանքի հիմնական նշանակությունը կայանում և նրանում, վորպեսզի զեկավարի կարմիր բանակայինի ընթերցումը Պետք և ասել, վոր գրադարանային աշխատանքը լուսաբանող մի շարք նյութերում, այդ հիմնական խնդիրը միշտ չի բավականին վորոշ կերպով շեշտվում: Այդ նյութերից վորանց մեջ, որինակ, այդ խնդիրը գրադարանային աշխատանքի առաջ գրվում ե, վորպես մասնավոր աշխատանք: Այստեղ՝ այնտեղ նույնիսկ առաջ ե քաշվում ամբողջ գրադարանային աշխատանքի ընդհանուր պլանից անկախ՝ ընթերցման զեկավարության ինչ՝ վոր պլանի առաջարկություն:

Այդպիսի հարցադրման հետ համաձայնվել չի կարելի: Ընթերցման զեկավարությունը — այդ գրադարանային աշխատանքի մասը չե, այլ նրա հիմնական խնդիրը և ամբողջ գրադարանային աշխատանքը պետք է կառուցվի ամենից առաջ այնպես, վորպեսզի այդ խնդիրն ամենալավագույն կերպով իրագործվի:

Գործնականորեն այդ նշանակում ե, թե գրադարանային աշխատանքը յուրաքանչյուր տվյալ մուենատում պետք է ներգործի կարմիր բանակայինի վրա այնպես, վորպեսզի — 1) սկըսնակին ընթերցման մեջ գրավի, վարժեցնի կարմիր բանակայինին կանոնավոր զիրք կարգաւ, գրքի ընթերցման պահանջ զարգացնել նրա մեջ, 2) նրա հետաքրքրությունն ուղղել զեղի ընթերցանությունը, վորը նպաստում ե դաստիարակչական ամբողջ աշխատանքի կիրառմանը, 3) զարգացնել նրա մեջ գրքի հետ աշխատելու ինքնուրույն սովորույթներ:

## ԸՆԹԵՐՑՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Լենինյան անկյան ամբողջ աշխատանքում հիմնական նախադրյալը հանդիսանում է կարմիր բանակայինի, նրա պահանջ-

ների և հետաքրքրության ուսումնասիրությունը: Գրադարանացին աշխատանքի նկատմամբ այդպիսի նախաղրյալ հանդիսանում և կարմիր բանակայինների ընթերցման պահանջների ուսումնասիրությունը:

Ընթերցողների պահանջների ուսումնասիրությունը պետք է ծավալվի պլանային կարգով և ամեն որ վաշտի զբաղարանացին աշխատանքի բոլոր գծերով: Ուսումնասիրության համար յելման կետ պետք է հանդիսանա առաջին հերթին կոլեկտիվ արոնիմենտի ֆորմուլյարից և վիճակագրական հաշվետվությունների նյութերը: Այդ նյութերը անհրաժեշտ է ինամքով ի մի գումարել և պարբերաբար, որինակ, ամիսը մեկ անգամ խնամքով և ուշագիր ուսումնասիրել, այն անկյան տակ, թե զարգացման ինչ տեղենցներ և ցույց տալիս կարմիր բանակայինի ընթերցումը (ընթերցողների տոկոսը վաշտային զրադարձնում, գնադային զրադարձնում, ամենից շատ ընթերցվող զրքի ընույթը, ինչ չափով են հետաքրքրվում ուղղմական զրքով և այլն): Ընթերցողներին ուսումնասիրելու հետեւալ միջոցը—այդ վաշտի զրադարձնի ամենորյա աշխատանքում կատարած ուսումնասիրությունն և զիրք տալու ժամանակ: Կարդացած զիրքը վերադասելիս վաշտի զրադարձնապետը պետք է զրուցի ընթերցողի հետ, իմանա նրա կարծիքը զրքի մասին, պարզի ընթերցածի հասկացման և յուրացման աստիճանը և այլն: Ընթերցողների պահանջների ուսումնասիրության զործի մեջ պետք է քաշել զրադարձնապետներից բացի և վաշտի ամրող ակտիվը—քաղաքական պարապմունքների խմբակավարը, խմբակային և անհատ կուսակցականներն ու կոմյերիտականները, լենինյան անկյան խմբակի զեկավարը և այլն,—վորոնք նույնպես բրենց ամենորյա աշխատանքի ընթացքում պետք է հայտարերեն, թե ինչ և կարգում կարմիր բանակայինը, ինչ զրքով և նա հետաքրքրվում էավ միջոց հանդիսանա նաև այն, վոր կարմիր բանակայինը զրքի կառնի իր դիտողությունները «ընթերցողի մտքերը» տեսրակում (վորը պահպում և զրադարձնում): Այդ նպատակով ոգտակար և ժամանակ առ ժամանակ, զործագրել զրքի մասին տրված լավագույն զնահատականների մրցանակարաշխություն: Վերջապես, նպատակահարմար և, վոր պեսզի տարեկան մեկ-յերկու անգամ կարմիր բանակայինների ընթերցման պահանջների հատուկ հետազոտություն կատարվի:

Ընթերցողի ուսումնասիրության բոլոր նյութերը պետք է

ինսամքով ընդհանրացնել: Այդ նպատակով յուրաքանչյուր պլանային շրջանի վերջում, լենինյան անկյան խորհրդի նիստում անհրաժեշտ և լսել վաշտային գրադարանապետի համապատասխան զեկուցումը, այդ նիստերին մասնակից անելով վաշտային ամբողջ ակտիվին: Այդպիսի զեկուցումներ վաշտային գրադարանապետը պետք և անի և գնդի գրադարանային խորհրդակցություններում:

Կազմակերպելով ընթերցողների պահանջների ուսումնասիրությունը, անհրաժեշտ և հիշել վոր ընթերցումը զեկավարելու խնդիրը պահանջում և ուսումնասիրել վոչ միայն ամբողջ կարմիր բանակային մասսայի հիմնական պահանջները, այլև և ամեն մի կարմիր բանակայինի առանձին պահանջները: Այդ հանգամանքը հատուկ նշանակություն և ստանում իրեն վաշտային գրադարանապետի համար՝ գրքեր բաշխելու նրա աշխատանքում:

## ԳՐՖԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընթերցողի ուսումնասիրության հետ միասին, ընթերցման զեկավարելը ճիշտ կազմակերպելու համար պակաս կարեոր պայման չի հանդիսանում և զրքի ուսումնասիրությունը: Հաճախ ընթերցման զեկավարելու աշխատանքի թուլությունը բացատրվում և հատկապես նրանով, վոր զեկավար աշխատողները չգիտեն գրականությունը և դրա հետևանքով ել չեն կարողանում հանձնարարել գիրքը: Գրականության ծանոթ լինելը առաջին հերթին հսկայական նշանակություն ունի և հենց վաշտի գրադարանապետի համար, վորն անմիջապես գիրքը տալիս և կարմիր բանակայինին: Ուստի, և անհրաժեշտ և, վորպես կանոն, սահմանել, վոր կոլեկտիվ արոնիմենտը ստանալուց վաշտի գրադարանապետը պետք և գնդի գրադարանապետների ոգնությամբ ուշագիր ծանոթանա իրեն արված գրականությանը: Վաշտային գրադարանապետների վրա պարտականություն և ընկենում նաև գրախոսական նյութեր և գնահատականներ հավաքել ավելի կարեոր գրքերի մասին: Նա պետք և և գրախոսությունների հատուկ տեսքը պահի և ժողովի այնտեղ թերթերից ու հանդեսներից հանած գրախոսականները: Գրքի ուսումնասիրության գործին պետք և հատկապես մասնակից անել ընթերցող ամբողջ ակտիվին—ավելի ուժեղ ընթերցողների՝ կուսակցականներից և կոմյելտականներից, տալով նրանց գնա-

հատականի համար առանձին գրքեր։ Գրքի ուսումնասիրության խնդիրները պետք են զնել զանազան խորհրդակցություններում քաղաքարապմունքների խմբակավարների խորհրդակցությունում (կապված քաղաքարապմունքների ծրագրի հետ), խմբակայինների և անհատների խորհրդակցություններում (ընթացիկ կուսակցական-քաղաքարական և կոմյերիտական թեմաների շուրջը գրքի մասին), հրամկապմի խորհրդակցությունում (առզմական գրք մասին) և այլն։

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընթերցողների պահանջները և գրքի ուսումնասիրությունները կոզնեն ճիշտ նշելու գրադարանային աշխատանքի բովանդակությունը, այսինքն՝ կարմիր բանակայինի ընթերցման ղեկավարության աշխատանքի բովանդակությունը։ Ի՞նչ է ղրվում — «ընթերցման ղեկավարության աշխատանքի բովանդակությունը» — հասկացողության մեջ։ Մենք աբդեն ասացինք, թե նշել լենինյան անկյան աշխատանքի հիմնական բովանդակությունը — այդ նշանակում են ընթացիկ հարցերի ամբողջ զումարից ջոկել ամենանիմնականները, ամենազլիսավորները և զնել նրանց ամբողջ աշխատանքի կենտրոնում։ Նմանապես նշել զրադարանային աշխատանքի բովանդակությունը — այդ նշանակում են կոնկրետ նշել այն զիրքը, վորը լենինյան անկյունը և մասնավորապես, զրադարանը պետք են քաշեն տանեն ղեկի կարմիր բանակային մասսան։

Այդ գիրքը պետք են ընտրվի հաշվի առնելով — 1) կարմիր բանակայինների պահանջներն ու հետաքրքրությունը, 2) լենինյան անկյան և ամբողջ կարմիր բանակային հասարակայնության ուշազգության կենտրոնում գրավող ընթացիկ քաղաքական դեպքերը, կամպանիաները և հարցերը, 3) կարմիր բանակայինների հետ տանելիք քաղաքական պարապմունքների հանգույցային մոմենտները, 4) կարմիր բանակայինների սազմական պատրաստության հիմնական հարցերը և 5) առանձին կարգի ընթերցողների համար նրանց մասնագիտական պատրաստության բովանդակության հաշվառման հիման վրա (կոմյերիտական լուսավորություն, ակմբային խմբակների պարապմունքների ծրագրերը, մետմյա պարտապմունքները և այլն)։ Այդ մոմենտներից կախված յուրաքանչյուր պլանային շրջանի սկզբում վաշտային զրադարանապետը նշում են այն գրեթեի

ցանկը, վորոնց շուրջը պետք և ծավալիի լայն և ակտիվ աշխատանք, վորոնց պետք և առաջին հերթին մասսայականացնել և առաջ տանել դեպի կարմիր բանակային մասսան\*):

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Խոսելով գրադարանային աշխատանքի բովանդակության մասին, չի կարելի կանգ չառնել գեղարվեստական գրականության հետ տանելիք աշխատանքի վրա: Փորձը ցույց է տալիս, վոր գեղարվեստական գրականության ընթերցման տոկոսը քաղաքական և ուղմական գրականության նկատմամբ սովորաբար շատ բարձր և և շարունակում և աճել: Ինչպես պետք է մոտենալ այդ յերեսութին: Դնահատելով դեպի գեղարվեստական գրականությունը ցույց տված կարմիր բանակայինների հետաքրքրությունը, մենք կարող ենք ասել, վոր նա նշանակալից չափով պայմանավորվում և կարմիր բանակայինի հանգստի պահանջներով—գեղարվեստական գրականության ընթերցումը կարմիր բանակայինի հանգստի ձևերից մեկն և: Այնքան, վորքան լինիյան անկյան անելիքների մեջ և մտնում կարմիր բանակային հանգստի կարիքներին բավարարելը, գրադարանային անելիքների մեջ չե կարող չժամնել կարմիր բանակայինի գեղարվեստական գրականություն կարդալու պահանջի բավարումը: Դրա համար ել չպետք և վախենալ այն փաստից, վոր կարմիր բանակայինը ցանկանում և գեղարվեստական գրականություն կարդալ, այլ ընդհակառակը, հնարավորության սահմաններում, պետք և բավարարել այդ կարիքը, տալով նրան գեղարվեստական գրականություն—հեղափոխական, իդիոլոգիապես կայուն գրականություն: «Կարմիր բանակայինի հանգստի կարիքները բավարարելու նպատակով ծավալելով դեղարվեստական գրականության ընթերցումը, անհրաժեշտ և դրա հետ միասին լայն չափով ոզմագործել այն, կարմիր բանակայիններին ընթերցանության մեջ գրավելու այլ և ընթերցողների մեջ դեպի հասարակական-քաղաքական և ուղմական հարցերի նոր պահանջներ զարթեցնելու համար»:

\* ) Յելելով նրանից, ինչ մենք ասեցինք վերենում, այդ ցանկի մեջ պետք և մտցնել վոչ միայն այն գրքերը, վորոնք կան վաշտային գրադարանում, այլ առասարակ այն գրքերը, վոր կարմիր բանակայինը կարող և ըստանալ:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՐԳԻ ՀԵՏ

Գրադարանային աշխատանքի ամբողջ բովանդակության մեջ Ֆլարմիր բանակայինի ռազմականացման ընդհանուր խնդիրների հետ կապված, պետք և հատկապես ընդգծել աշխատանքը ռազմական գրքի հետ, առավել ևս, յերբ այդ գիրքն ընթերցվում է նվազ չափով: Ռազմական գրքի լայն մասսայականացման աշխատանք ծավալելով, գրադարանը պետք և կարմիր բանակայինների ուշագրությունը գրավի գեղի ռազմական գրականությունը և վարժեցնի նրանց՝ ընթերցելու այդ գրականությունը: Ռազմական գրքի հետ տանելիք աշխատանքի յելակետ կարող և հանդիսանալ՝ քաղաքացիական պատերազմի և կարմիր բանակի պատմության շուրջը գոյություն ունեցող հեղափոխական գեղարվեստական գրականության հետ ակտիվ աշխատանք կազմակերպելը, այլ և գրադարանների, ռազմական ուսուցման, և կարմիր բանակայինների այն պահանջների պլանային սպասարկումը, վոր հանդես են գալիս այդ ուսուցման ընթացքում: Ռազմական գիրքն առաջ շարժելու նպատակով հատկապես կարեր և ռազմական գրքի պրոպագանդայի և գրքի հետ աշխատանք կազմակերպելու գործի մեջ քաշել հրամանատարական կազմին:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԻՐՔ ԲԱԺԱՆԵԼԻՍ

Ընթերցումը ղեկավարելու գործում հսկայական նշանակություն և ձեռք բերում անհատական ընթերցողին գիրք բաց թողնելու աշխատանքը, վրովհետև նա հնարավորություն և տալիս ուսումնասիրելու յուրաքանչյուր ընթերցողին առանձին-առանձին, և ըստ այնմ մոտենալու նրան: Դրանումն և նրա հիմնական գժվարությունը:

Գիրք բաց թողնելու համար պետք և սահմանիլի հատուկ ժամանակ—ամենից լավի և ճաշի ժամանակ և յերեկոյան՝ լենինյան անկյան աշխատանքի ժամանակ: Սակայն, սխալ կլիներ, յեթե վաշտային գրադարանապետը ուրիշ ժամանակ գիրք ցանկացող կարմիր բանակայինին մերժել:

Իր գիրքը փոխելու բերած կարմիր բանակայինին, պետք և ամեն կերպ աջակցել և հնարավորություն տալ նոր գիրք ընտրելու, իր ցանկության համաձայն: Ամենից լավը կլիներ, յեթե գիրք բաց թողնելու ժամերին վաշտային գրադարանում յե-

զած ավելի հետաքրքիը գրքերը փոված կլինեն սեղանի վրա այնպիս, վորպեսզի ընթերցող կարմիր բանակայինը կարողանա նրանց անձամբ տեսնել և թերթիւ Այստեղ ել վաշտային գրադարանապետին հնարավորություն և տրվում գրուցելու ընթերցողի հետ, իմանալու նրա կարծիքը կարդացած զրքի մասին հանձնարարելու նրան ուրիշը:

Գիրք տալուն պետք ե նախորդի տեղեկատու աշխատանքը: Այդ նպատակով գրադարանը պետք ե կազմի հանձնարարական ցուցակներ, վորոնք կողնեն կարմիր բանակայինին իրեն անհրաժեշտ գիրքն ընտրելու գործում: Յանկալի յե շարաթը մեկ-յերկու անգամ գիրք բաժանելու ժամանակ կազմակերպել հատուկ կոնսուլտացիա առանձին ընագավառների վերաբերյալ, մասնակից անելով նրան հրամանատարին, զարդացած կուսակցականներին, կոմյերիտականներին և այլն:

## ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Կարմիր բառակայինների միջև անհրաժեշտ գիրքը մասսայականացնելու համար վաշտային գրադարանը պետք ե լայն ոգտագործի ցուցադրական ազիտացիայի բազմազան ձևերը:

Ցուցադրական ազիտացիան կարող ե ծավալվել յերկու ուղղությամբ—1) հոգուտ գրադարանի և գրքի ընթերցման առհասարակ, 2) հոգուտ այս կամ այն կոնկրետ գրքի ընթերցման: Ենինյան անկյուններ ամենուրյա աշխատանքում, իր հիմնական ջանքերը պետք ե առաջին հերթին ուղղի այս կամ այն կոնկրետ գրքի ընթերցման գծով: Հիմնականում, ցուցադրական ազիտացիայի ձևով պետք ե պրոպագանզել և առաջ մենք ցուցակում հիշված գրականությունը, վորի մասին մենք հիշատակել ենք սկզբում, և վորն նշված ե վոչ թե ընթերցող ակտիվի, այլ ընթերցողների լայն մասսայի համար:

Ցուցադրական ազիտացիայի կարենութագույն ձև կհանդիսանա պլակատը, վորեն գիրք մասսայականացնող պլակատը: Այդ պլակատի վրա կարելի յե գրել գրքի կարճ ծանոթությունը, մրցանակ հայտարարել նրա մասին ստացված լավագույն գնահատականի շուրջը, թվել այն ընթերցողների անունները, վորոնք կարդացել են այդ գիրքը, նրանց կարծիքը գրքի մասին: Այդպիսի պլակատների հետ միասին անհրաժեշտ ե և գործազրել գրքերի հանձնարարական ցուցակների փակցման սիստեմը: Հանձնարարական ցուցակների մեջ պետք ե մտցնել 5-6 գրքից

վոչ ավելի, տարով նրանց համառոտ բովանդակությունը, զնաւհատականը և այլն:

Գրքի մասսայականացման համար պետք է վոչ միայն պլակատներ և հանձնարարական ցուցակներ փակցնել, այլ և լոյն չափով ոգտագործել լենինյան անկյան ամբողջ ցուցադրական ազիտացիան լիովին, տեղափորելով թե ընթացիկ անցքերի տախտակում և թե վորեն հարցի լուսաբանման նվիրված պլակատներում այն գրքերի անուշները, վոր այդ հարցի մասին կարելի յե կարդալ: Հատկապես կարեոր և գիրքը մասսայականացնել պատճի լրագրում, վորի համար թերթում բաց անել «Ինչ կարգալ» անկյունը և տեղափորել այնտեղ 2—3 գրքի անուն, նկարներով, գնահատականներով և այլն:

### ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՐՔԻ ՀԵՏ

Վաշտայյին գրադարանը պետք և ամեն կերպ աջակցի լենինյան անկյունում գրքի հետ տանելիք աշխատանքի կազմակերպմանը և այդ ուղղության հայտաբերի անսահման նախաձեռնություն:

Մենք այստեղ կանգ չենք տանի ստղմական և քաղաքական գրքի հետ տանելիք աշխատանքի վրա, այնքան, վորքան արարգեն այդ մասին մի քանի անգամ խռովել և : Հիշատակենք միայն գեղարվեստական գրականության հետ տանելիք աշխատանքը, առավել ևս, վոր աշխատանքի այդ մասի վրա, սովորաբար, չափազանց անհշան ուշագրություն և դարձվում:

Գեղարվեստական գրականության հետ տանելիք աշխատանքի ձեռքից անհրաժեշտ և ամենից առաջ հանձնարարել բարձր ընթերցումը: Բարձր ընթերցումների համար պետք և ընտրել փոքր և զարդարմագնիությունը և հատվածներ, այլ և առանձին վոտանագորներ, պոեմներ և այլն, այնպիսի հաշվով, վոր նրանց ընթերցումը կես ժամից ավելի չափ: Ծննդերցումը վերջացնելուց անհրաժեշտ և ընթերցածի շուրջը աշխատ զբույց ծագալու:

Լավ ձեւ կլինի նույնպես պատմելը, վորը սովորաբար կարմիր բանակայինին ավելի յե դուր գալիս, քան ընթերցումը: Յեթե վաշտառմ լավ պատմող կա, ապա նա կարմիր բանակայիններին կարող և ծանոթացնել վոչ միայն փոքրիկ պատմվածքի հետ, այլ և «հաստ» գրքի բովանդակությանը:

Հնարավորություններ լինելու դեպքում նպատակահարմար և

կազմակերպել և դրական դատեր վորհեք գրքի կամ նրա հերոսի շուրջը: Դրական դատը պետք է նախորոք պատրաստված լինի: զրա մասին պետք ե վաղորոք հայտնել կարմիր բանակային-ներին, պատրաստել պաշտպանին, մեղագրողին և այլն: Գրա-կան դատում կարելի յեւ լավ ոգտագործել պատմողին, հանձնա-րարելով նրան կարդալ «մեղագրական ակտը»-իր բառերով պատ-մել զրքի բովանդակությունը:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՊԸ ՎԱՅՏԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ

Ընթերցումը զեկավարելու խնդիրները գործնականապես ան-հնար և լուծել միայն վաշտային զրագարանապետի ուժերով: Անհրաժեշտ ե այդ աշխատանքին մասնակից անել կարմիր բա-նակայինի ուսուցումը և դաստիարակությունը վարող ամրող կազմին: Քաղղեկը և կուսակցական քիչնը պետք ե ձգտեն նրան, վորպեսզի յուրաքանչյուր հրամանատար, քաղաքարապմունքնե-րի յուրաքանչյուր խմբակավար և խմբակի զեկավար, կամավոր ընկերությունների քիչների ակտիվիտաները, աջակցեն զիրքը կարմիր բանակային մասսայի մեջ տանելու գործին: Նրանք պետք ե—1) կանոնավոր կերպով հայտնեն զրագարանապետին ամենակարենը հարցերը, փորոնց պետք և արձագանքի զրադա-րանը, 2) նայեն և ընտրեն իրենց աշխատանքի համար մասսա-յական գրականություն, 3) պարապմունքների ընթացքում հանձնարարեն պարապմունքների հետ կապված առանձին զրքեր ընթերցման համար, 4) Ընթերցող կարմիր բանակայինին ոգնեն խորհուրդներով, ցուցումներով, չհասկանալի տեղերը բացատրե-լով և այլն:

Գրքի առաջինադասանը նպաստող այս ձեռնարկումներից բացի անհրաժեշտ ե հոգուտ գրքի մղվող ագիտացիայի համար ոգտագործել լենինյան անկյան աշխատանքի բոլոր ձեռքը, հանձնարարելով գիրքը զրույցից, զեկուցումից հետո, այլև «զիրք յերեկույթներ» կազմակերպելով, գործի քաշելով կարմիր բանա-կայինի լայն ուշագրությունը և ինքնազործնեյությունը:

## ԳՐՖԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Գրադարանների աշխատանքը պետք ե ծավալվի կարմիր բանակայինի նախաձեռնությունն այդ աշխատանքի մեջ քաշե-լու հիման վրա: Գրադարանը պետք ե կարմիր բանակայիննե-րից, առավել ակտիվ և հետաքրքրվող ընթերցողներից իր շուրջն:

ակտիվ համախմբի, և հնարավորության գեպքում, ձեակերպի նրանցից «գրքի բարեկամների» խմբակներ, «Գրքի բարեկամները» ոգնում են գրադարանին նրա առորյա աշխատանքում դանազան ուղղություններով: Նրանք 1) նոր ընթերցողներ են գրավում, 2) ուսումնասիրում են զիրքն ու ընթերցողին, 3) հանձնարարում և պրոպագանզում են գիրքը, 4) ոգնում են գրադարանի տեխնիկական աշխատանքում, գրքերը կազմիլու գործում և այլն: «Գրքի բարեկամներին» կարևոր ե ոգտագործել և գրքատարության մեջ, (մանավանդ ճամբարային պայմաններում):

Կարմիր բանակայիններին գրադարանի ակտիվ աշխատանքին մասնակից անելով, անհրաժեշտ ե շարունակ հիշել, վոր այդ մասնակցությունը չե կարող հանդել միայն առանձին տեխնիկական հանձնարարություններ կատարելուն: «Գրքի բարեկամները» պետք ե մասնակից արգեն վաշտի գրադարանային աշխատանքի պլանի մշակման, գրադարանային կամպանիաների կազմակերպմանը և այլն:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Վերջում մի քանի խոսքով կանգ առնենք կիսագրագետների հետ տանելիք գրադարանային աշխատանքի վրա: Կիսագրագետներն ինքնուրույն կերպով չեն կարողանում զիրք կարգալ: Կարմիր բանակայինների այդ խմբի մասին մոռանալ վու մի դեպքում չե կարելի, առավել ևս, վոր նրանց մեջ գրադարանային աշխատանքը պետք ե գնահատվի և ոգտագործվի, վորքս անհրաժեշտ և միակ ճիշտ միջոց ընդդեմ անգրագետության սեցիզիվի: Ուսուցչի և համապատասխան զեկավարների ոգնությամբ անհրաժեշտ ե կիսագրագետների համար կուեկտիվ արոնիմենտի կազմի մեջ մտցնել վորոշ քանակությամբ գրականություն և լայն մասսայականացնել այդ վերոհիշյալ կիսագրագետների շրջանում:

Նպատակահարսար և առանձին կիսագրագետներին կամ նրանց փոքր խմբակներին կցել լավ գրագետ և զարգացած կարմիր բանակայիններ, կոմյերիտականներ, կրտսեր հրամանատարներ (իհարկե, կամավոր կարգով), հանձնարարելովներանց տանել բարձր ընթերցումներ, և զրույցներ, ոգնել կիսագրագետներին նրանց անհատական ընթերցման վարժությունն ձեռքբերելու մեջ, գրավել նրանց գեպի լինինյան անկյունում կազ-

մակերպվող «կինոյ յերեկոները», գրական դատերը, ընթերցումները և այլն:

## ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏՈՂՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ- ՔԻ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Կարմիր բանակայինների մարտական պատրաստուրիան գործում ունեցած ակումբների յեզ լենանկյունների հսկայական գերե պետք է պարզ ու հասկանալի լինի՝ կ. բանակում տարվող արտագրոցական աշխատանքների եղուրյունն ու նօանակուրյունը հասկացող՝ բանակային յուրաքանչյուր դեկավար աշխատողի համար:

**Առաջին.**—ակումբները և լենանկյունները պետք են, դնելով մեր միջազգային զրության և կարմիր բանակի մարտական խնդիրների պարզաբանման աշխատանքը, գրանով իսկ դաստիարակեն կարմիր բանակայինների մեջ վորոշ հասկացողություն՝ ապագա պատրապմների անխուսափելիության և մշտական մարտական պատրաստության մասին:

**Յերկրորդը.**—ակումբները և լենանկյունները իրենց աշխատանքով կարող են ոգնել պարզելու կարմիր բանակայիններին՝ կարմիր բանակի գասակարգային եյության ու կառուցման հիմքերը և լայն շրջաններում հատկապես պարզաբանել կուսակցության զերո՞ւ վորպես կազմակերպիչ ու առաջնորդ Կարմիր բանակի և մասսայականացնել բանակային կուսակցական քաղաքական մարմինները:

**Երրորդը.**—ակումբների և լենանկյունների աշխատանքը ճիշտ զնելու դեպքում կարող են պետք են ամեն կերպ ոժանդակի կարգապահության ընդհանուր ամրացման իրագործմանը և գրանով իսկ բարձնացնի զորամասի մարտունակությունը՝ կարմիր բանակայինների միատեղ և ընկերական աշխատանքը ակումբում և լենանկյունում լավագույն միջոցներից մեկն և հանդիսանում զորամասում ամուր մարտական միաձուլություն ստեղծելու և կ. բանակայինների մեջ հրամանատարի հեղինակությունը բարձրացնելու համար:

**Չորրորդը.**—ոգտագործելով բազմատեսակ, հետաքրքիր և զրադեցնող ձևեր, ակումբները և լենանկյունները լայն հնարավորություն ունեն ամեն կերպ բարձրացնելու կարմիր բանակա-

յինների հետաքրքրությունը դեպի ռազմական գործն ընդհանուրապես և դեպի ռազմական ուսուցումը՝ մասնավորապես: Միաժամանակ լայն հնարավորություն կանակ ոժանդակելու ռազմական գործում կարմիր բանակայինների ինքնակատարելագործման:

**Հինգերուղը.**—կարմիր բանակայինների կենցաղային փաստերի հիման վրա և կարմիր բամբկի մարտական անցյալի որինակներով ակումբները և լենանկյունները պետք են մշակեն կարմիր բանակայինի մեջ մի շարք բարոյական հատկություններ, վորոնք անհրաժեշտ են մարտիկին և բարձնացնեն նրամեջ ռազմական վոգին: Մյուս կողմից կարմիր բանակայինի ստեղծագործական աշխատանքը ակումբում և լենանկյունում ավելի քան լավ են պահանջում նրա մեջ նախաձեռնության, ակտիվության, շրջապատող պայմաններն ինքնուրույն կերպով հասկանալու և մի շարք ժամանակակից մարտիկի համար նույնքան անհրաժեշտ ե այլ հատկություններ զաստիարակելուն:

Այդ բարուր խնդիրներն ամբողջությամբ հավասար չափով դրվում են ինչպես ակումբների և լենանկյունների ամբողջ աշխատանքի նույնպես և քաղաքական, ռազմական և ընդհանուր կրթական աշխատանքների առաջ:

Յեթև մենք խոսում ենք «ռազմական արտագպրոցական աշխատանքի մասին, մենք խոսում ենք միայն պայմանական կերպով, հասկանալով զրա տակ՝ ա) ԽՍՀՄ-ն միջազգային դրության պարզաբանումը, կապված պատերազմի վտանգի հետ, բ) Կարմիր բանակի շինարարության և յերկրի պաշտպանության հարցերի լուսաբանումը, գ) աշխատանք ռազմական տեխնիկայի և ռազմական ուսուցման ընթացիկ հարցերի շուրջը, դ) կարմիր բանակայինների ծանոթացումը կարմիր բանակի և իր գորամասի արագիցիաներին և պատմությանը:

## ԵՆԱԿԵՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ակումբային աշխատանքը պետք է առավելագույն չափով լինի բազմակողմանի, վորպեսզի համախմբի իր մեջ իր անդամների պահանջների՝ հանգստի և առողջ զվարճության բավարարումը քաղաքական-լուսավորական և զաստիարակչական խընդիրների հետ: Ակումբային ամբողջ աշխատանքը պետք է կառուցվի ինքնազորունելյության, կամավորականության և նախաձեռնողականության հիմունքներով... առանց վզին դնելու, հրամայելու և ստիպողականության:

**Համակական 14-րդ համագումարի բանաձեռքից:**

## ՀԱՆԳԻՄԸ

Հենանկյունը կազմակերպում և կարմիր բանակայինների ազգայի ժամանակը: Բայց այդ ազգայի ժամանակը լինում է ուսուցումից հետո: Հոգնած լինելով պարագմունքից, կարմիր բանակայինը առաջին հերթին ուզում է հանգստանաը: Յեթե լենանկյունը չհարմարեցնի իր ամրող աշխատանքը, բավարարելու կարմիր բանակայինի հանգստի այդ ընական պահանջը՝ յեթե կարմիր բանակայինը զգա, վոր լենանկյունում հանգստանալ չի կարելի, նա ուղղակի այնտեղ չի գնա: Դա կնշանակեր վոր լենանկյունը չի կատարել իր հիմնական խնդիրը՝ կարմիր բանակային հանգստի կազմակերպումը: Դրան վորովես հետևանք, կարմիր բանակային հասարակայնության հետ լենանկյունում կամի այլ կարգի «հասարակայնություն»՝ մահճակալի վրա, ծըստարանում, զորանոցների միջանցքներում և ըուլվարում: Դրա համար ել լենանկյունը պետք է վոչ թե պասսիվ կերպով ոժանդակի կարմիր բանակայինի հանգստանալու ցանկության և զվարձության, այլ և հարմարացնի այդ զործի համար իր աշխատանքը և կահավորումը, ձգտելով, վորպեսզի կարմիր բանակայինի հանգստի հենց լենանկյունում անցկացնի հենց լենանկյունում և նրա ազգեցության տակ:

## ԵԵՆԱԿՅՑՈՒՆՈՒՄ ՍՏԻՊՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂ ԶՈՒՆԻ

Վորքան վոր լենանկյան ռազմական աշխատանքը հանդիսանում է կարմիր բանակայինի հանգիստը կազմակերպելու մի ձեր, նույնքան և (ինչպես և ամբողջ արտապարոցական աշխատանքը) նա պետք է կառուցվի անպայման կարմիր բանակայինների կամավոր մասնակցության սկզբունքի վրա: Ամեն մի ստիպողականություն լենանկյունում, ինչպիսի ձևով ել վոր նա արտահայտված լինի, նա կհանդիսանա կարմիր բանակայինի հանգստի կոպիտ խախտում, բոլորվին չի կապվի նրա հանգստի ժամերի կարիքների բավարարման հետ: Պետք է մատնանշել, վոր մեծ մասամբ ստիպված ենք լինում զործ ունենալ վոչ թե ուղղակի կարմիր բանակայինին արվող հրամանի հետ, մասնակցելու լենանկյան այս կամ այն աշխատանքին, այլ կիսահրամանի ու ծածկված կարգագրության հետ: Դա արտահայտվում է հրամանատարի պնդող առաջարկության մեջ, վորը կարմիր բանակայինը ստիպված է կատարելու, \*կամ թե վաշտի

բազմահի միջոցով կարմիր բանակայիններին լինանկյան աշխատանքին մասնակից դարձնելով և այլն: Ինքին հասկանալի յե, վոր այդ միջոցները արտադպրոցական աշխատանքի համար անթույլատրելի յեն և պետք ե վճռականապես գեն շպրտվեն: Պետք և մշտապես հիշել, վոր կարմիր բանակայինը իր ազատ ժամանակը կարող է ոգտագործել ըստ իր սեփական ցանկության: Մեր խնդիրն ե, վոր այդ հանգիստը ընթանա նրա համար ավելի խելամիտ ու ոգտավետ: Դրան պետք է հասնել, յերբեք չխախանելով կարմիր բանակային կամագորականությունը և առանց վորեվի վարչականացման ու հարկադրանքի:

## ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղազմական արտադպրոցական աշխատանքի անգաման կամագորականություն պահպանելը մեզ պարտավորեցնում և վոչ միայն կարմիր բանակայինների հանգստի պահպաններին հետեւը, այլ և ինչպես այդ, նույնպես և լինանկյան ամբողջ աշխատանքը, — վորը կառուցվում է կարսիր բանակայինների լայն ինքնազործութեայուրցան սկզբունքով զեելու անհրաժեշտության վրա:

Աղազմական աշխատանքի շուրջը՝ կարմիր բանակայինների ինքնազործութեայությունն ու ակտիվությունը գարգացնելը անհրաժեշտ և բոլոր տեսակետներից: Դա կարեոր և այն տեսակետից, վոր կարմիր բանակայինների ինքնուրույն աշխատանքը լինանկյունում նրանց ուղարկան գործով իսկապես հետաքրքրելու ամենազորեղ միջոցն ե հանդիսանում: Դա կարեոր և և նրա համար, վոր այդ տեսակի աշխատանքը սովորեցնում է կարմիր բանակայինն ինքնուրույն կերպով քննել նրա առաջ զրած հարցերը, այդ նրա մեջ սովորույթ ու կարողություն և զարգացնում, ինքնուրույն կերպով աշխատելու ուղամական զործում իր կատարելագործելու վրա: Դա անհրաժեշտ և կարմիր բանակայինների մեջ մի շարք հատկություններ զարգացնելու տեսակետից, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպես մարտիկի, զրանք են՝ ննարագիտություն, ստեղծված պայմաններում կողմնորոշվելու ընդունակություն, նախաձեռնություն և այլն:

## ՊԵՏԸ Ե ՇԱՀԱԳՐԳՈՒԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻՆ

Ինչպես կարելի յե, առանց հարկադրանքի կարմիր բանակայինն մասնակից դարձնել լինանկյան ուղամական աշխատան-

քին: Դրա պատասխանը հենց ինքստինքյան ստացվում է. կարմիր բանակայինը կամավոր կերպով կմասնակցի աշխատանքին այն դեպքում, յեթե զրանով նա շահագրգռված է: Այնքան վորքան մենք հրաժարվում ենք հարկադրական միջոցներից, մեր եիմնական ինքիրե և, կառուցել ուզմական աշխատանքը լենակայան մեջ այնպես, որ գրանով տահագրգուենք կարսիր բանակայինիք: Այլ ձանապարհ չկա և լինել ել չի կարող, իսկ այդպես անել չկարողանալը միշտ պատճառ և զառնում նոր ձեռնարկած աշխատանքների անհաջողության: Կարմիր բանակայինի շահագրգռվածության անկյան տակ ել պետք և նշվեն և զնանատվեն արտապարոցական ուզմական աշխատանքի բալոր միջոցները, մեթոդները և ձեռքը, — առանց բացառության: Աշխատանքի ամեն մի կազմակերպիչ, բալոր կոնկրետ դեպքերում, յերբ նա խմբակի համար թեմա կամ զրույց և ընտրում, խաղ և տանում, կամ զօրին դիրք հանձնարարութ, պետք և մի կողմից հաշվի առնի, զորքանով և նշված միջոցառումը հետաքըրքը բարություն շարժում կարմիր բանակայինի մեջ, նրանց ուշադրությունը զրավում, և ցանկություն առաջացնում նրա անցկացման կամավոր կերպով մասնակցելը: Յեկ մյուս կողմից պետք և մտահոգվել, թե ինչ ճանապարհներով և միջոցներով կարելի յե կարմիր բանակայինների մեջ հետաքրքրություն առաջ բերել և զրանով իսկ զրավել նրանց աշխատանքի մեջ:

## ՈՍԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍՈՒՑՈՒՄ 26

Յերեմի լենանկյունում ուզմական աշխատանքին այսպիս են նայում—հրաժանատարն իր ազատ ժամին հավաքում և վաշտի յետ մնացող կարմիր բանակայիններին և փորձում և լենանկյունում լրացուցիչ կերպով անցնել ուզմական ուսուցումից, յերեկոյան կրկնել և սովորեցնել այն,—ինչ նրանք առավոտյան լավ չեն յուրացըրել:

Առաջին հայացքից թվում և, թե այդ պարապմունքների մեջ վոշինչ վատ բան չկա, յեթե, իհարկե, այն հիմնված ե հենց իրենց, կարմիր բանակայինների կամավոր համաձայնության վրա: Բայց հենց զրանումն և զործը, վոր առանց հարկադրանքի այդպիսի պարապմունք տանելը հարյուրից իննսուն ինը զեպքում չի հաջողվում: Յեկ դա շատ ընական է: Որպա ըն-

թացքում հոգնած և բեզարած կարմիր բանակայինի մեջ արշավություն կլինի իր աղասի ժամանակը կրկնել և սովորել այն, ինչ նա անցել և առավոտյան: Հազիվ թե յուր ցանկությամբ նա ուզենա այդպիս ոզմազորձել իր հանգիստը. Այդպատճառով ել, յեթե մենք ուզում ենք իրոք հետաքրքրել ուզմական արտադպրոցական աշխատանքով, պետք և վճռականապես ձեռք քաշել լենանկյունում յերկրորդ անգամ ուզմական պարագմունք անցկացնելուց, նորից այնտեղ այն բոլորը կըրկնելուց, ինչ կարմիր բանակայինը վատ և յուրացը ել, ուսուցման ժամանակ, Պետք և ուզմական աշխատանքը լենանկյունում կառուցել բոլորովին այլ կերպ քան առորյա ուսուցութեա, այնպես, վոր այդ աշխատանքը իր բնույթով կարուկ կերպով արարերվի պարտադրից, չհիշեցնի հոգնած բանակայինին տապահոյան պարագմունքը, այնպես, վորաբեզի վոչ միայն չեզզեցնի կարմիր բանակայինիներին, այլ ընդհակառակը, այդ երա համար լինի չեզ հանգիս չեզ խելացի ժամանց:

Ակայն պետք և զգուշացնել այս վերջին փրազայի շատ հասարակ մեկնարանությունից «ուզմական աշխատանքը լենանկյունում պետք և հանգիստանա կարմիր բանակայինի համար, վորպես հանգիստ և խելացի զգարձություն»: Պատահում են գեպեր, վոր վախենալով ուզմական արտադպրոցական աշխատանքը ուսուցման վերածելուց, ընկնում են այլ ծայրահեղության մեջ և աշխատանքն իր ելությամբ փաստորեն դարձնում են զվարձության՝ ««ելեկարիֆիկացիայի» յենթարկած հրացանը, հրացանի մասերը քանդելու և հավաքելու մրցություն, առանց հրաձգության շուրջը համապատասխան աշխատանք տանելու, կոտորիներով հրաձգություն և այլն»:

Այս բոլորը կարող են զրակեցուցիչ լինել թեեն ելի վոչ միշտ, համենայն զեպս քիչ ոզմակար են, յեթե վոչ վնասակար, քանի վոր վոչ մի ելեքտրիֆիկացիայի յենթարկված հրացան, հրացանի մասերը քանդելու և հավաքելու մրցություններ չեն կարող սովորեցնել մարտիկին զիսուկ կրակել: Զթողնելով, վոր արտադպրոցական ուզմական աշխատանքը ուսուցման յերրորդ պարագմունքի փոխվի, պետք և միաժամանակ խորյու տալ այն դատարկ ժամանցի փոխելուց:

## ԸԱ ՄԵՌ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԻՑ ԶԸՆԿՆԵԼ

Ակնհայտ և, վոր արտադպրոցական ուզմական աշխատանքի առաջ չի կարելի զնել ինչ վոր ձանրակշիռ և բարդ

լնդիրները ծիշտ չի լինի մոռածել, վոր կարելի յի լինանկ-  
 յունում, ինչպես ուզմական ուսուցման ժամերին և, նախորոք  
 նշված ու հաստատուն ծրագրի մեջ մոցրված պլանաշափ կեր-  
 պով մի շարք սիստեմատիկ զիտելիքներ ու սովորությունները տալ  
 եւ բանակայիններին: Լենինյան անկյան հնարավորությունները  
 սահմանափակված են և բավականին նեղ, վարովհետեւ կարմիր  
 բանակայինը մասնակցում և այնտեղի աշխատանքին իր ցան-  
 կությամբ, վարովհետեւ նա գալիս և այնտեղ, հոգնած որվա ու-  
 սուցումից, և վերջապես նրա համար, վոր լենանկյան արամա-  
 գրության տակ շատ քիչ ժամանակ կա: Դրա համար ել լեն-  
 անկյան ուզմական աշխատանքը չի կարող ընթանալ վորեն ա-  
 մուր, նախորոք նշանակված ծրագրով և պետք և ծավալվի առան-  
 ձին կոնկրետ, կարմիր բանակայինների համար ավելի կարե-  
 վոր լեվ հետաքրի հարցերի ուրեզ: Այսպես, որինակ՝ լենանկյ-  
 յանում չի կարելի ուսումնասիրել այնպիսի ընդարձակ մի ա-  
 ռարկա, ինչպիսին «մարտավարությունն ե»—ընդհանուրապես,  
 զրանից վոչինչ դուրս չի գալ: Բայց այնուհետ կարելի յի հաջո-  
 ղությամբ քննել մարտավարության մի շարք առանձին կանկ-  
 րեա հարցեր, որինակ՝ «հետախուզությունը», «պահպանությունը»,  
 «մարտը» և այլն: Ծիշտ այլպես ել վոչինչ դուրս չի գա,  
 «Կարմիր բանակի շինարարությունը» ընդհանուրապես մշակելու  
 փորձերից: Բայց կարելի յի և պետք և ծանոթացնել կարմիր  
 բանակայինին, թե «ինչո՞ւ յի նա կանչված կարմիր բանակը»,  
 կամ թե «ի՞նչ են յերկրային զրամաները»: Ինքնստինքյան  
 համականակի յի, վոր այդ չի նշանակում, թե արտազպրոցական  
 աշխատանքը ծավալվում է պատահական կերպով, առանց վոր-  
 են ծրագրի: Կազմակերպիչը պետք և կարողանա ժամանակին և  
 վորոշակի առաջարկել այս կամ այն հարցերը՝ կապված մարտի-  
 կի պատրաստության ընդհանուր ընթացքի հետ, մի կողմից, և  
 կարմիր բանակայինների հայտնարկերած ցանկություններին  
 մյուս կողմից, սերտորեն կապելով այն լենանկյան աշխատանքի  
 ընդհանուր ծրագրի հետ, զրանց շուրջը կհնարունացնելով կար-  
 միր բանակայինի հետաքրքրությունն ու ինքնազործունեյու-  
 թյունը:

## Ի Ն Չ Պ Ե Ս Ս Կ Ս Ե Լ

Լենանկյան ամեն մի զործնական աշխատավոր իր սեփա-  
 կան փորձից զիտե, վոր այլպիսի կոնկրետ հարցեր շոշափելու

ու առաջ քաշելն ենքան ել հեշտ զործ չե, ինչպես այդ թվում ե առաջին հայացքից: Առաջ քաշելով այս կամ այն հարցերը, անհրաժեշտ ե միշտ տեղյակ լինել կարմիր բանակայինների տրամադրությունների ու հետաքրքրության հետ և համապատասխան կերպով ոգտագործել ու զարդացնել այն:

Գործնականորեն այդ ի՞նչ և նշանակում Յռաշինը՝ ռազմական աշխատանքի կազմակերպչին անհրաժեշտ ե ուսումնասիրեն կարմիր բանակայինին, իր ժամանակին վորսալ այն հետաքրքրությունը, վորպիսին կարմիր բանակայինը հայտարերում ե ուսուցան առանձին բնագավառներում ու մոմենտներում, ոգտագործելով այդ՝ աշխատանքի համար: Որինսկ՝ այնպիսի բնագավառու, ինչպիսին հրաձգային զործն ե, քիմիական ծխարկումն, գաշտային պարապունքը կամ սպասվող զորաշարժերը: Իսկ նորեկների հետ զենքի հանձնումը, առաջին պահակությունը, զրավում են կարմիր բանակայինների ուշաղրությունը: Յերկուրեզը՝ անհրաժեշտ ե ամեն մի կոնկրետ հարց առաջազրել այնպես, վորպեսզի նա կապվի կարմիր բանակայինին զրաղեցնող ու հաջող հարցերի հետ: Որինսկ՝ կարմիր բանակայինը միշտ չի կարող հետաքրքրվել միջազգային զրությամբ ընդհանուրապես, բայց զրա փոխարեն միշտ մի հարց կենդանի կերպով հետաքրքրում ե նրան, թե արդյոք նորից պատերազմ կլինի, թե վոչ: Այդ պատճառով ել միջազգային զրությունը նպատակահարմար ե սկսել պատերազմի հնարավորության հարցից: Ռազմական քիմիայի հարցերի պարզաբանման ժամանակ անհրաժեշտ ե կատեր այդ գյուղատնտեսության մեջ քիմիայի զործածության հետ: Զորքերի տեսակների փոխազարձ գործակցության հարցերի պարզաբանումը պետք է տանել, կարմիր բանակայիններին տեխնիկայի հետ ծանոթացնելու հիմունքներով (արակտոր, կապը, ճարտարագիտական զործը), վորոնք սովորաբար հետաքրքրում են կարմիր բանակայիններին: Կարողանալ համագրել առաջադրվող հարցերը կարմիր բանակայինների պահանջների և տրամադրության հետ, հիմք ունենալով նրա ամենորյա և մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ կարևորագույն մեթոդական կանոնն և հանդիսանում արտադրոցական ռազմական աշխատանքը կազմակերպելու և կարմիր բանակային ինքնագործունեյությունը նրա մեջ զրավելու համար:

## ԶՈՐ ՈՒ ՑԱՄԱԳ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՎՈՐՓԱՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՖԻԶ

Արտադպրոցական ռազմական աշխատանքը նախորոք անկերտն զատապարտված կլինի, յեթե այդ աշխատանքի կազմակերպիչը մտածի կառուցել աշխատանքը չոր ու ցածաք և տեսական հարցերի ու նյութերի վրա Ռազմական յուրաքանչյուր տռարկայի ուսումնասիրության ժամանակ, միշտ հաճախարարվում և տեսականն անցնել գործնական վարժությունների ընթացքում: Գլխավորապես զա վերաբերվում է արտադպրոցական աշխատանքին, քանի վոր չոր ու ցածաք թիորիայով կարմիր բանակայինին հետաքրքրել չի կարելի: Այդ պատճառով ել այն հարցը, նյութը, գրույցը և այլն, վոր նշված և մըշակելու խմբակում, պետք և վոչ թե ակաղեմիկ, չոր—տեսական լինի, այլ պրակտիկ, զործնական և հասար յեղածին չափ այժմհետեւ: Արինակ՝ լինառնկյունում կարիք չկա զրադվելու կայազորային կանոնապրաքի կիտերի ընթերցանությամբ, բայց նպատակահարմար և կայազորային ծառայությունից վերցըսմ զործնական խնդիրների լուծումը: Ճիշտ այդպես, զոչինչ չի ստացվի զնդացըրի մասերի ուսումնասիրության փորձից, բայց կարելի յե կարմիր բանակայինների ուշադրությունը զրավիլ զնդացիր լըցնելու և ուղղելու մրցության վրա: Ըստհանրապես սազմական ամեն մի հարցի մշակումը լինառնկյունում պետք ե դրվի վոչ թե վերցական, թեորետիկ կերպով, այլ գառնա կենդանի, զործնական աշխատանքը: Գործնական աշխատանքի այդ պլոցինում միայն կարելի յե տալ կարմիր բանակայինին մի շարք, այն ել համեմատորեն սահմանափակ տեղեկություններ: Գլխավոր ուշադրությունը պետք և դարձնել վոչ թե կարմիր բանակայիններին տեսական զիտելիքներ հաղորդելու վրա, այլ երասովորութեար կատարելազործելու վրա, զատիարակելու երամեջ կարօղություն պրակտիկ կերպով գործադեմու այն զիտությունը, վօրպիսին եա ստացել և ուսուցման ընթանելում մի կողմից և մյուս կողմից դաստիարակելու նրա միջ եիւս հասարակական բազաթական աշխարհական և այլ հատկություններ, վորոնք անհրաժեշտ են մարտիկին:

### ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԶ

Հատկապես կարեոր և հաշվի առնել արտադպրոցական ռազմական աշխատանքի ժամանակ առավելագույն ձկնության

անհրաժեշտությունը։ Որինակ՝ համախ փորձեր են արվում լենակյունում ստեղծելու և ձեռկերպելու ռազմական գիտելիքների մշտական խմբակներ։ Նման փորձերը մեծ մասամբ շատ հասկանալի պատճառներով անհաջողությամբ են վերջացել, Յեզիրոք, ստեղծելու ռազմական գիտելիքների մշտական խմբակ, այդ նշանակում և, ընտրել վաշտում 10—15 կարմիր բանակայիններ, վարոնք այնքան ակտիվ են, այնքան շահագրգոված ռազմական աշխատանքով, վոր համաձայն են յերկար ժամանակով (որինակ մի ամբողջ ձմեռ կամ մի քանի ամիս) տրամադրել զրան իրենց ազատ ժամանակը։ Կարելի՞ յե արդյոք վաշտում գտնել ռազմական գիտելիքների խմբակի այդպիսի մասնակիցների բավականաչափ կաղը։ Մեծ մասամբ վոչ, իսկ յեթե գտնվին մի քանի հոգի, ապա դրանք վաշտի նկատմամբ լլինեն մի բուռն կարմիր բանակայիններ։ Մինչդեռ հիմնական աշխատանքը, վորի մասին խոսեցինք, նրանում չի կայանում, վոր ռազմական աշխատանքի մեջ ընդորկվեն ավելի ակտիվ կարմիր բանակայինները (զրա համար գնդի ակումբին կից կան ռազմական խմբակներ), այլ այն, վորպեսզի այդ աշխատանքին բաւկեն փառքի կարմրե բանակային սասսայի մեծամասնությունը։ Դրա համար լինանկյան հիմնական ջանքերը պետք եռ ուղղված լինեն վոչ թե ռազմական գիտելիքների մշտական խմբակ ունենալու ուղղությամբ և դրան ավելի ընդունելի և հարմար ձեւ վոչ թե մշտական խմբակ ունենալը պիտի հանդիսանա, այլ ժամանակավոր խմբակներ, առանձին կոնկրետ խնդիրների շուրջը։ Նույնքան հաճախ, վորքան խըմբակային աշխատանքի ձեւերը—զրույց, զեկուցում, խաղեր, դրաձյալ կազմած ծրագրում առաջազրած խնդիրներին և կարմիր բանակայինների հետաքրքրության հաշվեառման։ Ընդհանրապես տարբեր շերտերի կարսիր բանակայիններին՝ ակտիվ, —վոչ ակտիվ, զարգացած, —հետամնաց, ընդորկելու ռազմական պիտի, որինակ՝ պետք ե գործադրել աշխատանքի բազմազան ձեզեր, սկսած ամենահասարակով և վերջացրած ամենաբարդով, սկսած ռազմական չնչին հարցերից, վերջացրած շատ թե քիչ լուրջ խնդիրների մշտակությամբ։

## ԶՐԱՆԵՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ

Արտադպրոցական ռազմական աշխատանքի տարրեր ձեւե-

բի ընտրությունն ու գործնական կիրառումը ուսպմական աշխատանքի համար հատուկ դեր և խաղում։ Հաճախ ստիպված են լինում աշխատանքի այնպիսի միջոցներ ընտրել, վորոնք կարող կլինելին հնարավորություն ստեղծել կարմիր բանակային-ներին անհրաժեշտ տեղեկություններ տալ՝ նուա համար ավելի հետաքրքիր և զբարեցնող ձևերով։ Այդ տեսակետից զրույցը, զեկուցումը (վորոնք ի դեպ շատ են գործադրվում), վորպես արտագլուցական աշխատանքի ձևեր, այնքան ել պետքական չեն։ Դրանց փոխարեն մարտավարական խաղը, հրացան կամ այլ հըսրազեն լցնելու մրցությունները, վորեն մոդելի պատրաստելը, քիմիական փորձերը, հետաքրքիր և սրամիտ խնդիրների լուծումը, զեօլի տեխնիքական մասերը կազմակերպված եքսկուրսիաները, հետաքրքիր սազմական պատմությունը, ֆելյետոնը, նկարները և այլն, միշտ կենդանի կերպով և անսիջականորեն հետաքրքրուում են կարմիր բանակայիններին։ Ինքնին հասկունալի յէ (այդ մասին մենք վերև զգուշացրել ենք), վոր կարիք չկա «ավելորդ գրավչության» հասցնելով վոչնչության մատնել աշխատանքի վորակը և ոգտակարությունը, այլ գործադրել աշխատանքի այս կամ այն ձեւը, պետք և միշտ հաշվի առնել կարմիր բանակայինի հետաքրքրությունը զրանց վերաբերյալ, հրաժարվելով միամիտ «յիշեխայական» ձևերից, վորպիսին չափահաս կարմիր բանակայինը վաղուց և անցել։ (Դրանց թվին են պատկանում մի շարք զորամասերում սիրված «ուազմավիճակախաղը»)։ Նույնքան ևս կարեոր և թույլ չտալ ուպմական արտադպրոցական աշխատանքի մեջ վոչ կենդանի, չոր ու ցամաք ուսուցման մըթնոլորտ, և վարպետորեն ընտրելով ձևերը, դնել այնպես, վոր հոգնած կարմիր բանակայինին ծանր բեռ չթվա, այլ լինի զուրեկան, հետաքրքիր, զրավիչ և միաժամանակ ոգտակար ժամանց։

## ՎՈՉ ԹԵ ԽՈՍՔՈՎ (ՊԱՏՄԵԼՈՎ) ԱՅԼ ԳՈՐԾՈՎ

Խոսելով արտակարոցական ուազմական աշխատանքի մեթոդների մասին, չի կարելի մի կողմ թողնել ցուցադրական միջոցների հարցը։ Այն միտքը, վոր պետք և սովորեցնել վոչ թե խոսքով (պատմելով) այլ գործով (ցուցազրական միջոցով), լենանկյան համար ստանում և բացառիկ կարեոր նշանակություն։ Ցուցադրականությունը ուազմական աշխատանքի մեջ աւ-

մենից առաջ կայանում և նըանում, վոր այդ բոլոր աշխատանքը կառուցվի գործնական որինակի, կենդանի, ցուցադրական նյութի և փորձի վրա։ Մարտավարության վերաբերվող պարագմունքները պետք ե տանել ավազով լի արկդի վրա, քիմիական պարագմունքները փորձերի միջոցով, հրաձգային գործը — հրաձգարանում, Կարմիր բանակի պատմությունը, — մարտական հրամանատարի հուշերի ու պատեհերազարդ գրքի միջոցով։ Խաղմական աշխատանքի կազմակերպիչը պետք ե միշտ հիշել այս կանոնը, շարունակարար հաշվի առնի և զործնական կերպով կիրառի։

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պայքար խաղաղության համըր, պայքարը ընդունեմ նոր պատերազմների, մերկացումն ըուրացն քայլերի, վորոնք նոր պատերազմներ են նախապատրաստում, վորոնք պացիֆիզմի դրոշակի տակ իրականում ծածկում են պատերազմի գործնական նախապատրաստումը, — այդ ե մեր խնդիրը։

**Համ Ա. Ա (Բ) 14-րդ Համագումարում  
արտասահման քննկ. Ստալինի նախից։**

Խաղմական կոնֆերանսները, Մերձ Բալտյան յերկրների և Լեհաստանի գլխավոր շտաբների խորհրդակցությունը, — այս բոլորը սովորական յերկույթներ են զառել և դրանց մասին մենք դադարել ենք խոսել։ Բայց հասարակ լեզվով այդ բոլորը նշանակում են՝ մեր գեմ պատերազմի ուժեղ և լուրջ նախապատրաստություն։

**1926 թ. նոր հրամանատրեների ուղանակարման արիք առիվ քննկ. Վորոշիլովի արտասահման նախից։**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐՈՒՄԸ

Սկսենք ռազմական արտադրոցական աշխատանքի գործնական հարցերից — Խորհրդային Միության միջազգային գրությունը լենանկյանում լուսաբանելու հարցից։

Միջազգային դրության լուսաբանումը, կապիտալիստական յերկրների պատրասությունները նոր պատերազմների և պատերազմի վտանգի աճումը լինանկյանում միշտ չի տարվում մեզ անհրաժեշտ տեսակետից։ Սակազ չեն լինում զեպքեր, յերբ կարմիր բանակայինին ձանոթացնում են միայն, թե ինչ և կատարվում կապիտալիստական յերկրներում, չբերելով նրան անհրաժեշտ յերրակացության, թե ինչ նշանակություն ունի այս կամ այն զեպքը և՛՛ միջազգային դրության համար և դրանից ինչ խնդիրներ են բղիում կարմիր բանակի համար։ Դրա համար ել ափելորդ չեր լինի հիշեցնել, վոր մեր խնդիրն և վոչ միայն ձանոթացնել կ. բանակայինին շրջապատի իրողության հետ, այլ և այդ ձանոթացման հոգի վրա անպայման պարզաբան եւրականիք բանակի մարտական խնդիրներ՝ ոոցիալիստական օինարարությունը հետավոր ինսերվենցալից պահպանելու գործում, զորամասի մարտունակությունն անբացնելու, մարտիկի մարտական պատրաստության յեզ ուղարկան վոզու բացրացման խնդիրներ։

## ՎԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ

Վերջինս մանավանդ կարեոր և, քանի վոր կարմիր բանակայինը հաճախ բանակ և գալիս առանց հաստատ իմանալու նորհրդային Միության միջազգային դրության եյությունը, առանց պարզ գիտակցելու պատերազմի ամենորյա և իրական վտանգը։ Այդպիսի պայմաններում, առաջ են գալիս տրամադրություններ, վորոնք նպաստում են այն համոզման, վոր մեր տնտեսության աճման հետ նվազում և պատերազմի վտանգը։

## ՄՈՏԵՑՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Հազթահարել կարմիր բանակայինի այդ «իսաղաղ տրամադրությունները» ընդհանուր, և միտինգային ֆրազներով չի կարելի։ Այստեղ անհրաժեշտ է ամենորյա, խորը և համառ աշխատանք։ Բոնելով կարմիր բանակայինին հետաքրքրող հարցերից, նրան, վորպես գյուղացու տված հարցին՝ «նորից պատերազմ կլինի», թե վոչ», պետք է պատասխանեց պարզաբանել վորքան կարելի յե կոնկրետ, հաստատուն և պարզ։

Փայլուն ցուցագրական ավյալներով ամեն կերպ ըղղծել և՛՛ լինդի կառավարության խաղաղ քաղաքականությունը, մեր ձգուումը՝ թեկուզ և մի շարք զիջումների գնով՝ չորել մեր հա-

բարերությունը կապիտալիստական յերկրների հետ, խուսափել  
պատերազմից: Միաժամանակ անհրաժեշտ է համառորեն, սիս-  
տեմատիկ կերպով ցույց տալ կարմիր բանակայինին, զոր զաղ-  
թե ուշ կապիտալիստները պիտի պատերազմը փաթաթեն մեր  
վզին և զոր մենք պետք ե պատրաստ լինենք հականարդած տա-  
լու ի հարկե, պետք չե թույլ տալ զոր միջազգային դրության  
բոլոր մասր փաստերը մեկնաբանվեն զորպես սկիզբ պատերազ-  
մի: Այլ պետք ե զործնականորեն, փաստերի հիման վրա, ամ-  
րացնել կարմիր բանակայինի գիտակցության մեջ Խորհրդային  
Միության և կապիտալիստական յերկրների մեջ զինված ընդ-  
հարման անախուսափելիությունը և մեր ամենորյա մուրտա-  
կան պատրաստության անհրաժեշտությունը:

### ՅԵՐԿՈՒ ՊԱՀԱՆՁ

Հիշյալ մասեցումը, լենանկյանում միջազգային դրությունը  
լուսաբանելու նկատմամբ առաջադրում են առև յերկու հիմնա-  
կան պահանջ: Առաջին պահանջը կայանում է նրա մեջ, զոր այդ  
ասպարիզում բացատրական աշխատանքը պետք ե Խորացրած  
բնույթ կրի: Ամենից քիչ պետք ե մտածել այն մասին, զոր ա-  
մենորյա մարտական պատրաստության անհրաժեշտության հա-  
մար կ, բանակայինին կարելի յե դաստիրակել միտինզային յե-  
լույթներով և ընդհանուր ֆրազներով: Յերկրորդը, զոր բխում է  
առաջինից, —զա անըդհատ ու սիստեմատիկ աշխատանքի ան-  
հրաժեշտությունն ի: Միջազգային դրության պարզաբանումը  
չի կարելի վերածել առանձին հարգածային կամպանիաների:  
Կամպանիաները անպայման պետք են, բայց զլխավորն այն եր-  
փոր պետք ե համառ ու սիստեմատիկ բացատրական աշխատանքի  
և թերթերի տված ամենորյա կոնկրետ փաստերի հիման վրա  
համառորեն, անդադար ու շարունակարար ծանոթացնել  
կարմիր բանակայիններին կապիտալիստական յերկրների պա-  
տերազմի պատրաստության հետ:

### ԲԱՐՁՐ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջազգային դրության պարզաբանման կարեռագույն  
միջոցներից մեկն է թերթերի բարձր ընթերցանությունը: Կար-  
միր բանակայինը ինքնուրույն կերպով թերթ կարգալով՝ (մա-  
սավանդ լրագրային տեղեկություններ) ամեն անդամ չի կա-  
րող առանց ողնության պարզել փաստերը, հասկանալ անուն-

ները, յերկրները և այլն, վորոնք հաղորդվում են թերթում։ Բարձր ընթերցանության խնդիրն ել հենց այն և, վոր ողնի կարմիր բանակայինին յուրացնելու լրագրային նյութերը։ Բարձր ընթերցանությունը պետք է սիստեմ դարձնել և ամեն յերեկո կազմակերպել։ Նախ քան ընթերցանությունը, զեկավարը պետք է ուշագրությամբ նայի թերթը, նշի, թե վոր տեղն և անհրաժեշտ կարդալու համար։ Նյութերը պետք ե ընտրել մանրակրկիտ կերպով։ Լավ և ի նկատի ունենալ քիչ, բայց գունեղ, վորոշակի փաստեր և լուրեր։ Բարձր ընթերցանության համար առաջին հերթին անհրաժեշտ և ոգտագործել քաղաքական ինֆորմացիան (հեռագորերը) և առաջնորդող հոգվածը, այնուհետև գեղարվեստական նյութերը։ Յերեմյան նպատակահարմար և ոգտագործել ամփոփիչ հողվածներ միջազգային դրության մասին։ Ընթերցանության համար անպայման կարիք չկա մեծ թվով ունկնդիրների հետեից ընկնել։ Ընթերցանությունը կարելի յե սկսել 2—3 կարմիր բանակայինների հետ։ Յեթե ընթերցանությունը կենդանի և զրավիչ ե, այն ժամանակ ընթերցանությանը միանում են ևս մի քանի ունկնդիրներ։

Պետք է կարդալ բարձր, պարզ և հասկանալի, բացատրելով ամեն մի փաստը։ Ընթերցածի հիման վրա հաջողությամբ կարելի յե կազմակերպել զրույց։ Յեթե անհրաժեշտություն կա, ընթերցածը պետք ե բացատրել բարտեկով։

Բացի թերթի ընթերցանությունից, պարբերաբար պետք է կազմակերպել նաև ժողովնալների, հանրամատչելի և փոքր զըրքույկների ընթերցանություն միջազգային զրության և մեր հակառակորդների բանակների, բուրժուազիայի կողմից նոր պատերազմներ նախապատրաստելու մասին և այլն։ Լենանկյան սեղանի վրա կ բանակայինների աշխի առաջ այդպիսի բրոցյուրներ պետք ե լինեն։

Բավարարելու համար կարմիր բանակայիններին, վորոնք ցանկություն ունեն ինքնուրույն կերպով թերթ կարդալու, նպատակահարմար և թերթի վրա գունավոր մատիտով նշան անել այն բոլոր կարեսը կետերը, փաստերը և հողվածները, վորոնք հանձնարարվում են կարդալու։

## ՏԱԽՏԱԿ

Կարմիր բանակայինին միջազգային զրության սիստեմատիկ կերպով ծանոթացնելու գործում կարող է լավ ողնել «Մի-

ջազգային դրության», կամ «Խորհրդային Միությունը և կապիտալիստները» տախտակները, Տախտակի համար վերցրվում են ֆաներա (բարակ տախտակ), ամրացվում շրջանակի վրա, և ներկվում: Նպատակահարժար և նյութերը (նորությունները) կողնել տախտակին կնոպկաներով: Տախտակը պետք է տեղափորել լենանկյան լավ յերևացող ահղում (գրադարանի մոտ, կամ տեղեկատու սեղանի առջև):

Տախտակի նյութերը կազմում են ժուրնալներից և թերթերից վերցրված կարեսը կարգածքները: Բայց լավ և յիթ համարավորություն կա վոչ թե կարգանքներ տեղափորելու (կարգածքները դժվար են կարդացվում), այլ հիմնական գեպքերի համառոտ շարադրությունը, վորը պետք է զրված լինի պարզ ձեռագրով, սպիտակ թղթի վրա: Նման գեպքում պետք է ցույց տալ ազգյուրները, վորտեղից և վերցրված տեղեկությունը, վորպեսզի հնարավոր լինի ցանկության գեպքում մանրամասն կերպով ծանոթանալ: ազ կը ինի կենդանացնել տախտակը թերթերից վերցրած ծաղրանկարներով, վոտանավորներով, համապատասխան նյութի շուրջ ֆելյետոններով և հանդեսներից վերցրած նկարներով:

Յուրաքանչյուր հազորդագրություն, ծաղրանկար և այլն, պետք է ունենան ձեռքբով զրված պարզ և վորոշակի վերնազգեր: Վերնազիքը պետք է լինի կենդանի և կազմված այնպես, վոր կիսազրագետ կարմիր բանակայինին, վորի համար զգվար և տիրողջը կարգալ, զոնե կարողանա բավականանալ վերնազիքը կարդալով: Ամբողջ նյութը պետք է ամփոփվի մեկ կամ յերկու լողունզի մեջ, վորոնք պետք և պարզ կերպով տան նյութի բովանդակությունը:

Տախտակի նյութերը ամեն որ պետք և փոխվեն, այլև տախտակը կորցնում է իր գերը: Տախտակի աշխատանքը տառնելու համար պետք է հանձնարարել 2-3 ակտիվ կարմիր բանակայինների, վորոնք քաղղեկի ղեկավարությամբ միշտ պետք է թարմացնեն նյութերը:

## Ա Յ Լ Բ Ո Ս Ն Ե Ր

«Տախտակը» մի միջոց և հանդիսանում պարզաբանելու համար ընթացիկ նյութը: Այն նյութերը, վորոնք շատ թե քիչ տեսական նշանակություն ունեն, անհրաժեշտ և կենարոնացնել այլումների մեջ, որինակ՝ «Ի՞նչպես են կապիտալիստները պատ-

բաստվում պատերազմի «Մեր կոպիտալիստական հարեանները» (Լեհաստան, Լիտվա, Ռումինիա և այլն) «Ինչպես և աշխատում արտգործողկոմալը»: Բացի դրանից, խորհուրդ և արվում պատրաստել այլբոմներ՝ նվիրված միջազգային առանձին և համեմատաբար ավելի կարեռուագույն հարցերին:

Այլբոմները պետք են կարել սպիտակ կամ գունավոր հաստ էլզից, պատրաստելով զրա համար գունավոր շապիկ: Այլբոմնում պիտք են կենտրոնացնել աշխարհագրական քարտեզներ (Յեվրոպա, Լեհաստան և այլն) դիագրամներ (որինակ ԽՍՀՄ բանակը և կապիտալիստական բանակները), հանդեսներից և ամսագրերից կտրած նկարներ, (տեղափորելով այդ նկարների տակ նրանց պարզաբանությունը), առանձին կտորներ ճառերից և բանաձեղերից, վոտանավորներ, առանձին փաստաթղթեր, (որինակ նոտաներ, պայմանագրեր), ինչպես նաև ավյալ հարցի շուրջ դրականության և թերթերի ցուցակներ:

Այլբոմները պետք են դրված լինեն այնպիսի տեղ, վոր կարմիր բանակայինի աչքը միշտ ընկնի (սեղանի վրա, թերթերի հետ միասին): Այլբոմների նյութերը պետք են ոգտագործել զըրույցների, խմբակային պարագմունքների համար և այլն:

## ՀԱՄԱԿՑԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՆՆԵՐ

Միջազգային տեսությունից բացի, միջազգային դրության պարզաբանման նպատակով կարելի յե ոգտագործել մասսայական աշխատանքի մի շարք ուրիշ ձևեր, որինակ՝ հարցերի և պատասխանների ժամ, քաղաքական դատ, համակցական յերեկո և այլն:

Կարճ կերպով կանգ առնենք միջազգային դրության վերաբերվող համակցական յերեկոյի վրա: Համակցական յերեկոն կարելի յե կազմակերպել նպատակ ունենալով կարմիր բանակայինին հետաքրքրել միջազգային դրության վորեն կարեռը հարցով (որինակ կամպանիա տանելու դեպքում):

Համակցական յերեկոն կազմակերպվում են մի վորոշ թեմայի շուրջը (որինակ, «Ինչ ե կատարվում Զինաստանում» կամ թե «Լեհաստանի յետին մտքերը ընդդեմ Խորհրդային Միության»): Համակցական յերեկոյիթի ծրագիրը նախորոք պետք են մանրակրկիտ կերպով մտածված և կառուցրած լինի կենդանի, զբավիչ ձևերի վրա, և յերեք չվերածվի չոր ու ցամաք, ձգձգվող զերուցման, կամ թե պատահական խաղի: Համաձայն սահմանված

կարգի, այդպիսի յերեկոները պետք եւ լինեն քիչ, բայց նախուռոք մանրազնին նախապատրաստված:

Միջազգային դրության նվիրված համակցական յերեկոյի ծրագիրը մասավոր կերպով կարելի յեւ պատկերացնել այսպիս:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՄՔ.—10-ից 15 րոպե, վորի ժամանակ համառոտ կերպով լուսաբանվում եւ զրգած հարցի եյությունը, անպայման քարտեղով, դիմագրամյով և այլ ցուցադրական միջացներով:

ԱՐՏԱՍՄԱՆԻԹՅՈՒՆԻՑ—(անհատական և խմբական) մեկ կամ յերկու գոտանագոր որպած թեմայի շուրջը (թերթից, կամ ել յեթի կա փորձված ընթերցող ու պատմազ, զեղարքվութական պատմություն կամ ընթերցում (թերթերից կամ հանդիսաներից վերցած պատմվածքներ, փելյաններ և այլն):

ՀԱՐՑԵՐԻ ՑԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԺԱՄ—միջազգային դրության շուրջ կամ ել մրցության զրգած հարցի լավ պատասխանի, լավ լոգունգի կամ քաղաքական զեղարքերի համ լավ ծանոթ լինելու:

ԿՏՈՐՆԵՐ.—միջազգային թեմաների շուրջը: Մի փոքր ինսցինիրովկա, ականերային կենդանի լրացրի յերություն և այլն:

Համակցական յերեկոն կազմակերպիլու և տանելու համար նախորոք անհրաժեշտ եւ լայն կերպով մասնակից դարձնել ակտիվ կարմիր բառակայիններին:

### «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՏՈՒ»

Յեթե կան մի քանի կարմիր բանակայիններ, վորոնք ըավականչափ հետաքրքրվում են միջազգային դրությամբ, վորոնցից կարելի յեւ կազմակերպել «զինվորական խորհրդատունների» կամ «լիազոր ներկայացուցիչների» խմբակ («Միջազգային դրությունն ուսումնասիրող խմբակ»):

Այդ խմբակի ամեն մի մասնակիցն իր վրա յեւ վերցնում վորապիս պարտականությունն ուսումնասիրել և ջոկել կապիտալիստական մի վորեն յերկրին վերաբերվող ուսպական քաղաքականությունը նյութերը: Մեկը ընտրում է Ամերիկան, մյուսը Ֆրանսիան, յերրորդը Անգլիան, չորրորդը Լիսաստանը և այլն: «Զինվորական խորհուրդատուն» կանոնավոր կերպով թերթերով համեռում ե «իր» յերկրի և ԽՍՀՄ հարաբերություններին, ուսումնասիրում ե նրա զինված ուժերի դրությունը և բանակը, թերթերից և ամսագրերից կտրում ե իր նյութին վերաբերող անհրաժեշտ նյութերը և այլն: Ժամանակ առ ժամանակ հրավիրվում ե «զինվորական խորհրդատունների կոնֆերանս», վերում մասնակցողները ըստ ուսումնասիրած նյութերի, համառոտ կերպով զեկուցում են ավշալ յերկրի դրության մասին: «Կոն-

Քերանսներում» լայն չափերով առաջ են քաշվում նաև բոլոր մնացած կարմիր բանակայինները: «Զինվորական խորհուրդատունների» խմբակը կարելի յե քաշել միջազգային դրությունը պարզաբանող տախտակի աշխատանքներին, այլրումներ կազմելուն, համակցական յերեկոններին:

Ինքնին հասկանալի յե, վոր «Զինվորական խորհրդատունների» խմբակի աշխատանքը հսարավոր և միայն, ամեն մեկի ինքնուրույն աշխատանքի վրա մանրակրկիտ ղեկավարություն ունենալու ղեպքում կարմիր բանակայինի համար զգվար և թերթում և գրքերում ինքնուրույն կերպով փնտռել և գտնել անհրաժեշտ տեղեկությունը կամ հոգվածը: Դրա համար ել «զինվորական խորհրդատունների» խմբակի ղեկավարը պետք և միշտ տեղյակ լինի մասնակիցների ամեն մեկի աշխատանքին, պետք և հրահնանգի հրանց, ցույց տա, բացատրի անհրաժեշտ նյութը և միաժամանակ ղեկավարի կոնֆերանսը:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՅՑԻՆԻ ԻՐԱՎՈՒԽԵԲՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՌՈՒՅՎԱՇԳԸ

Լենանկյունում բացատրելով կարմիր բանակի հյությունը և կառուցվածքը, անհրաժեշտ և շարունակարար ձգտել: — Առաջարկեց՝ վորպիսզի կարմիր բանակայինը իրեն պարզ պատկերացնի կարմիր բանակի դաստիարակային խնդիրներնու բնույթը Յեկուրգ՝ վորպիսզի կարմիր բանակայինը հաստատ ինչպես կարմիր բանակի մարտիկ, զիտակցի իր խնդիրները Յեկուրգը՝ վորպիսզի նա հասկանաւ միաձույլության, կենարունացած զեկավարության և զինվորական ամուռ կարգապահության հյությունն ու նշանակությունը. Յորուրգը, վորպիսզի նա ծանոթ լինի յերկրի պաշտպանության սիստեմի հետ. Հինգերուրգը, վորպիսզի կարմիր բանակայինը հասկանաւ կուսակցության ղերը՝ վորպիս կարմիր բանակի կառուցողի և առաջնորդի, ծանոթ լինի բանակի քաղ մարմինների և կազմակերպության աշխատանքի և խնդիրների հետ. Այդ խնդիրների ըստ եյության կատարում մը ընդհանուր առմամբ ընկնում և լենանկյան վրա: Ստորե կանգ կառնենք միայն մի քանի գործնական հարցերի վրա, վորոնք ավելի սերտ են կապված արտադրոցական ռազմական աշխատանքին:

## ԱՅԽԱՏ ԽՆՔԸ ՆՈՐԱԿՈՉՎԿՆԵՐԻ ՀԵՏ

Կարմիր բանակի ելությունը և կառուցվածքը, զրա հետ նաև կարմիր բանակայինների՝ զոր զես Կարմիր բանակի մարտիկի պարտականության պարզաբանման աշխատանքը, պետք ե սկսվի անմիջապես, ոկտոս այն մասնութեց, յերբ նորակոչիկը զորամաս և մասնում: Հենց կարմիր բանակայինի բանակ զայռ շրջանը պետք է լայն և բազմակողմանի կերպով ոգտագործվի՝ ձանոթացնելու կարմիր բանակի լլուսնքի կենցաղի, այդտեղ տափազ ամբողջ աշխատանքի, այն բոլոր պարտականությունների հետ, զոր գրքուժ և կարմիր բանակայինի վրա նախորոք կազմակերպելով և հրահանգելով յերկրորդ տարվա տկամիվ կարմիր բանակայիններին, պետք է նրանց ամեն կերպ առաջ քաշել լինանկյունում ընկերական զրայցներ, ընթերցանություն, և մի շարք պարզ աշխատանքներ տանելու, զօրի ընթացքում և բացատրել կարմիր բանակի ծառայությունը, Կարմիր բանակի նշանակությունը, բանակայինների պարտականությունները և այլն: Նախորոք այդ շրջանի համար և այդ նույն խնդրի շուրջը պետք է պատրաստել զեկուցազներ, նախապատրաստի համակցական յերեկոներ և այլն, վերջապես, ոգտագործելով նորեկ կարմիր բանակայինի հետաքրքրությունը, պետք է աշխատել կազմակերպել խմբակներ հետեւյալ հարցերի շուրջը—«Լիչույժեալ կանչված կարմիր բանակ,» Պարմիր բանակայինի իրավունքները և պարտականությունը «Կուսակցությունը և կոմյերիտամիսությունը Կարմիր բանակում» և այլն: Այս ամբողջ աշխատանքի ընթացքում լինանկյունը պետք է կարմիր բանակայիններին ձանոթացնի զնդիր և զաշտի հրամկազմի, քաղաքական ղեկավարների, ըջիջների, կոմսոմոլիի կազմակերպության հետ:

## ԿԱՐՄԻՐ ՑԵՐԴՈՒՄ

Լինանկյունը բացառիկ ուշադրություն պետք է դարձնի կարմիր բանակայինի յերգման շուրջը տարգելիք աշխատանքի վրա: Կարմիր բանակայինների հետ զրա շուրջը պետք է տանել լայն բացատրական աշխատանք Կարմիր յերգման ելության, Կարմիր բանակի խնդիրների ու զամակարգային ելության և կարմիր բանակայինի՝ զորպես նրա մարտիկի պարտականությունների մասին: Կարմիր բանակայինին յերգման պատրաստելու աշխատանքը պետք է սկսվի յերգումից բավական ժամա-

Նաև առաջ: Նախորոք լենանկյունը պեսք և ուսենա պլակատ, յերդման տեկստի հետ, տանի մի շարք յերեկոներ յերդման շուջը, կազմակերպի խմբակներ, այդ աշխատանքին լայն չափով քաշելով կարմիր բանակայինների ինքնագործնեցությունը, Կարմիր յերդման որվա շուրջը կենարոնացրելով կարմիր բանակայինների հասարական կարծիքը:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԸ

Ըստհանրապես զորանոցային կենցաղի փաստերը և զեպքերը, ոսկմտկան ուսուցման ամենորյա ընթացքը պետք և ոգտագործվեն լենանկյունում լայն բացատրուկան աշխատանք առնելու համար: Զօրանոցային կենցաղի կոնկրետ փաստերի վրա, լենանկյունը ամեն կերպ պետք և մասսայականացնի հաստատուն կարգ ու կանոնի և զինվորական կարգապահության նշանակությունը, հրամ և քաղաքական կազմի գերը և այլն, ոգտագործելով զրա համար առանձին կարմիր բանակայինների կարգապահն լինելու և կատարողականությունը և ընդհակառակը, անկարգապահության, այս կամ այն կարմիր բանակայինի կողմից հաստատված կարգի խախտման դեպքեր և այլն: Այդ նույն զորանոցային կյանքի կոնկրետ փաստերը շուրջը լենանկյունը պետք և գաստիարակի կարմիր բանակայինների մեջ զեպի հրացանը, հանդերձանքը, հակագաղը և գնդացիքը խնայողաբար վերաբերվելու գիտակցություն, հասկացողություն «տընտեսման ուժիմի» եյության մասին բանակի պայմաններում Միաժամանակ պետք և լուսաբանել զորամասի ուսուցման առանձին փաստերի արդյունքները, զորոնք են՝ հրաձգությունը, մանյովրաները, զագային տագնապը և այլն: Անհրաժեշտ և զգուշանալ զոր լուսաբանելով այս կամ այն բացասական յերեսութը, լենանկյունն իր աշխատանքները չպետք և տանի այնպես, զոր ծիծազի առարկա զարձնի առանձին կարմիր բանակայինների: Շատ ավելի լավ կլինի, յեթե այս կամ այն ծաղրանկարը կամ ֆելյետոնն ուղղվի զու թե կարմիր բանակայինի անձնավորություն, այ հենց ամբողջությամբ իրենց՝ բացասական փաստին կամ յերեսություններին:

Կարմիր բանակային կենցաղի շուրջ տարվող աշխատանքի ձևը հիմնականում վոչ թե խմբակն ե, այլ սիստեմատիկ և ամենորյա աշխատանքը, — «մեր վաշտը» այլրումը, զորտեղ կենարոնացված են ավելի հետաքրքիր կենցաղային թղթակցություն-

ներ վաշտի պատի լրագրից, ծաղրանկարներից, վաշտային կենցաղից ինսցինիրովկաներ, վատանագորներ և այլն։ Զափազանց կարեսը և լուսաբանելով կարմիր բանակի շինուարության և կենցաղի հիմնական հարցերը, համադրել, կարմիր բանակը ցարական և կապիտալիստական բանակների հետ, պարզել այդ բանակի դաստեղաբային ելությունը, հակադրելով դրանց կարմիր բանակի դաստեղաբային ելությանը։

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

Կարմիր բանակայինին շատ և հետաքրքրում կարմիր բանակի զորակոչի ծառայության կարգը, կենանկյանն անհրաժեշտ և հաշվի առնել այդ հետաքրքրությունը, վորագեսպի համապատասխան աշխատանք ծավալից մասսայականացնելու կարմիր բանակային մասսայի մեջ զինվորական ծառայության հիմնական որենքը։ Դրա հետ կապված պետք և հիմք զնել կարմիր բանակայինին բանակի շինուարարության, յերկրային սիստեմի և յերկրի պաշտպանության կազմակերպման հարցերի հետ ծանոթացնելու աշխատանքին։ Այդ աշխատանքը նույնակա կարող և ընթանալ բազմազան ձևերով, — կախ տալով պատին զինվորական ծառայության որենքի հիմնական կետերը պարզաբանող պլակատներ, կազմակերպելով այդ կետերը քննող ընթերցանության, և այլն։ Անհրաժեշտ հետաքրքրություն նկատվելու դեպքում, կարելի յե Կ. բանակի շինուարարության հարցերով հետաքրքրվող կ. բանակայիններից կազմակերպել խմբակ, զրահամար վորագես նյութ վերցնելով վոչ սիայն այդ որենքից արված քաղվածքները, այլ և այդ հարցը պարզ կերպով լուսաբանող վորեե զրբույժի։

Դրան զուգընթաց անհրաժեշտ և նշել, վոր լենանկյունը կարմիր բանակայինների մեջ կ. բանակի շինուարարության վերաբերյալ գրականության տարածմանը պետք և հատուկ ուշադրություն զարձնի, հանձնարարական ցուցակները կախելու և յերեկույթներում ու խմբակների պարագմունքներում զրքույթներ հանձնարարելու միջոցով և այլն։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոշոր նշանակություն ունի սազմական գեղարվեստական գրականությունը։ Կ. բանակի և կ. բանակայինների խնդիրները նկարագրող գեղարվեստական նյութերի ոգտագործման

հետ միաժամանակի, աշխատանքի համար չոփազանց կարեսը և ձիւս ոգտագործել նաև այնպիսի նյութեր, վորոնք նկարագրում են զինվորների կյանքը և դրւելյառնը ցարական և կապիտալիստական բանուկներում: Այդ նյութերը պետք է լայն գործադրություն գտնեն զեղարվեստական ընթերցանության և պատմության ժամանակ, համակցական յերեկությներում (ընթերժման և ինսցինիրովկայի ժամանակ) և այլն:

### ԱՅԼԻՌՈՄՆԵՐ

Բացի վերև հիշված ցուցադրական նյութերից, անհրաժեշտ են հանձնարարել նաև Կարմիր բանակի շինարարության և եյության վերաբերյալ այլրոմներ: Ամեն մի լինանդյան առաջին հերթին անհրաժեշտ են հետեւյալ յերկու այլրոմները:

Կուսակցությունը Կարմիր բանակի առաջնորդն է: Այստեղ տեղավորել քաղվածքներ համագումարների վորոշումներից, Կարմիր բանակի մասին լենինի զրգածքներից ֆաստեր և թվեր, վորոնք ցույց են տալիս կոմունիստների մասնակցությունը քաղաքացիական կոիվներին, քաղմարմինները և կոմունիստական քջիջները Կարմիր բանակում, կոմյերի բանակի վորոշումները Կարմիր բանակում և այլն:

Ենչպես և Կառուցված Կարմիր բանակը, Կարմիր բանակի կազմը, թվեր, վորոնք նկարագրում են Կարմիր բանակը, վորպես ԽՍՀՄ-ի բոլոր ժողովադրդների աշխատավորության բանակ, քաղվածքներ Կարմիր բանակի մասին Խորհուրդների համագումարների վորոշումներից, Կարմիր բանակի կազմակերպության սխեման և այլն:

**ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀՐԱԶԳԱՅԻՆ ՓՈԲ-  
ԶԱՌՈՒԹՅՅՈՒՆ. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԿԱՆՈ-  
ՆԱԳԻՔԵՐ. ՍԱՊՅՅՈՐԱԿԱՆ ԳՈԲԾ**

«Փոխանակ զբաղվելու վերացական-տեսական հարցերով, պետք է ծանրության կենտրոնը այժմ փոխադրել առորյա, անմիջական, ընթացիկ գործնական աշխատանքի ուսումնասիրության վրա»:

Օնզմագիտական բնկերության Համամիուրենական խորհրդակցության առաջական պետք, աշխատանք ընկերության վերասահած ընկերություն առաջական աշխատանքի մեջության վրաը,

«Կարմիր բանական արտադպրոցական աշխատանքի մեջության վրաը,

զիկայի հարցերը քննելիս նշեցինք մի շարք կանոններ, վորոնց ցով կարելի յե զեկագրավել այդ աշխատանքը տանելու ժամանակ, կրկին անգամ հիշեցնենք—1) խուսափելով պարագմունքին ռւսուցման բնույթ տալուց, աշխատանքի մեջ զուգակցել գործնական ոգտակարությունը զբաղեցուցիչ և զվարձալի տարրի հետ, 2) վորքան կարելի յե քիչ թերթիա և շատ զործնական աշխատանք, 3) Վորքան կարելի յե քիչ պատմություն և շատ ցուցագրողականություն, 4) Ամրող աշխատանքը տանել հայտնաբերելով և կենտրոնացնելով կարմիր բանակայինների ինքնազործունելությունը և 5) աշխատանքը կազմակերպել ճկուն և ամեն մի տարրեր զեղքում զործազրել աշխատանքի բազմազան ձեռք, խնդիր դնելով անպայման ընդունել վաշտի կարմիր բանակայինների մեծ մասը։ Այդ պայմանները լենանկյունում պետք ե պահպանին առանձնասպես այն դեպքում, յերբ մշակվում են ռազմատեխնիքական հարցեր—որինակ՝ հրածգային զործը, մարտավարություն, տեղադրություն և այլն։

## Հ Ր Ա Զ Գ Ա Ր Ա Ն

Ամենից առաջ կանգ առնենք հրածգային զործի վրա։ Հրածգային զործը լենանկյունում պետք ե կառուցվի վոչ կանոնագրքի, վոչ «ելեքտրոֆիկացիայի յենթարկված հրացանի», և վոչ ել հրացանի քանդիու և հավաքելու վրա։ Այդ աշխատանքի ծանրության կենտրոնը պետք ե հրածգարանը լինի։ Հարցուր անգամ կարենոր ե լենանկյունում ունենալ ամենատարրական հրածգարանը, քանի թե կազմակերպել զեղեցիկ, բայց ըստ եյտության անողութ և սիայն ոլլակատներ կախ աված «ռազմական բաժին»։

Ամեն մի լենանկյան անհրաժեշտ է ձեռք բերել մի յերկու գործիքներ կոտորիկներով կրակելու համար։ Յեթև միջոցներ կան, լավ ե ունենալ փոքր տրամաչափի հրացան։ Յուրաքանչյուր լենանկյունում կարելի յե ունենալ ձգարան (10—20 քոյլ յերկարությամբ) փոքր տրամաչափի հրացանով կամ կոտորիկներով կրակելու համար։ Լենանկյան պատը զնդակներից ապահովիլու համար հարկավոր ե միայն մի վահան, հարավորության դեպքում մի արկղ, լիքը ավազով։ Զգարանի անհրաժեշտ պարա-

զաներն են թիրախներ\*), ամենաանհրաժեշտ զործիքները, — նըշշանառություն հաստոց, հայելի (հասուկի), դիավրագմա, լուսարձակ թիրախներ և այլն: Այս բոլոր զործիքները հարկավոր եկենարացացներ մի տեղ կահավորել մի ահա ձգության կատարելագործման անկյուն», վորանդ միաժամանակ հրածգության նախապատրաստական վարժություններ են տարվում (նշան առնել և այլն):

Զգարանի և հրածգության կատարելագործման անկյուններն կից պետք ե զեկավարներից կանոնավոր կերպով հերթապահություն ահամանել, վորոնք պետք ե հետեւն հրածգության զործին և հրահանգներ տան վարժություններ կատարող բոլոր կարմիր բանակայիններին:

### Գ Ր Ա Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր

Վաշտային ձգարանում անհրաժեշտ ե կանոնավոր կերպով կազմակերպել հրածգություններ փոքր տեսակի հրացաններից և հնարավորության դեպքումնակ քիչ լիցք ունեցող փամփուշտներով: Միշտ ձգուելով վոր հրածգությունը լինի զբաղեցնեցիչ և հետաքրքիր, մտցնելով հրածգության մեջ մրցակցության տարր, միաժամանակ պետք ե այնպես անել, վոր հրածգությունը փամփուշտների աննպատակ վատնում չդառնա: Դրա համար կարեոր ե, վոր՝ առաջինը, տանելով հրածգությունը, կարմիր բանակայինների մեջ դաստիարակել փամփուշտները խրայնողաբար դորձագրելու գիտակցություն, քանակով չտարվել քիչ արձակել, բայց արձակածը խոշոր չափով նպատակին հասցնել: Ցերկուորդը՝ ոգտագործել հրածգությունը և նրա արդյունքները, հաղորդելու կարմիր բանակայիններին հրածգային գործից ամենակարեոր գործնական տեղեկությունները: Դրա համար կատարել հրածգության արդյունքների կոլեկտիվ քննություն, թիրախների զննություն, զիտկության զնահատական և այլն:

Հրածգությունները պետք ե կատարվեն զեկավարի անմիջական հսկողության տակ, վորը հետևում է հրածգության ընթացքին, հրահանգում ե կարմիր բանակայիններին, զեկավարություն:

\* ) Վաշտային ձգարանի համար տվելի լավ ե բացի նորմալ թիրախներից, զործագրել մարդական կոլոր թիրախներ №№ 5, 6 իսկ հեռանկարային պլան ունեցող ձգարանի համար, մարդկանց, կենդանիների Փիզուրաներ, թիթեզյա փոքրքիկ զինվորներ և այլն:

անհատական մրցությունները և այլն։ Անկազմարի համար հառակապես կարես է անհատապես ուսումնասիրել ամեն մի հրաձիգի, ամեն մեկին առանձին ցուցումներ տալ, հանձնարարություններ անել։

Խորհուրդ և տրվում ձգարանի մշտական հաճախորդներին-մասնակիցներին, տալ հատուկ հրաձգային հաշվառման զրքույկներ, վորագեղ և նշանակել նրանց հաջողություններն ու հրաձըգության արդյունքները։

## ՀՐԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԱԿ

Հրաձգային գործով ավելի հատաքրքրվող կարմիր բան ակայիններից պետք է կազմակերպել հրաձգային խմբակ։

Յուրաքանչուր հրաձգային խմբակում պետք է ընդգրկել այնպիսի հրաձիգներ, վորոնք միատեսակ պատրաստականություն ունին։ Անհրաժեշտության դեպքում կարելի յե կազմակերպել մի քանի համանման հրաձգային խմբակներ։ Հրաձգային խմբի պարագ մունքների ծրագիրը իր մեջ ընդգրկվում է մի շարք հետեղողական, զործնական հրաձգություններ, նրա արդյունքների համապատասխան մշտակամբ։ Ահա սրինակի համար խմբակի հրաձգային ամենատարրական պարագմունքի ծրագիրը<sup>\*)</sup>։

Ենիշես դիպուկ կրակել

ԹիրԱԱ. կուր-ե, նայած տարածություն, հրացանաձիգի գորակին, 10 մետր տարածության վրա կատորիկներով կրակելու գեղքում կարելի յե վերցնել և թիրախը։

ՑՈՒՑՑ ՏԱԼ. փորձնական յերեք ձիգը կատարվում է ցույց տալով՝ մի ձիգից հետո։ Մասցած հրնդը կատարվում է առանց ցույց տալու։

ԳՆԵՑԱՏԸՆԿԱՆԸ. փորձնական ձիգի արդյունքների հիման վրա հրաձիգը փոխում է նշանաման կետը։ Պահանջներ՝ հինգ ձիգով և 6 թիրախի վրա խփել վորոշ քանակությամբ թվերի (աշոկներ, նայած հրաձիգի պատրաստականության)։

## ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակ առ ժամանակ պետք է կազմակերպել անհատական և խմբակային մրցակցություններ։ Արինակը, վերեւ հիշված պարագմունքներն անցկացնելու ժամանակ, կարող է հայտարարվել մրցություն, թե «ով է ամենից զի-

<sup>\*)</sup> Հինականում սա զրգած է ակումբային հրաձգային խմբակները ծրագրի համար։

պուկ հրաձիղը»։ Յուցակազրվածներից ամեն մեկն իրավունք է ստանում վորոշ քանակությամբ փամփուշտներ կրակելու։ Հրածգության համար վորոշ ժամանակ և տրվում Բոլոր ցանկացողներն այդ ժամանակվա ընթացքում հրածգության մեջ իրենց ուղածի պես կարող են փորձուություն ձեռք բերել Արդյունքները ձգարանի հերթապահի կողմից միշտ հաշվի յե առնը վում և նշանակվում։ Նշանակված ժամանակին բոլոր հրածիդները բերում են իրենց մրցակցական թիրախները, վորոնք բոլոր կողմների բանակայինների նիրկայությամբ դեվավարի կողմից նայվում և իրենց գնահատականն են ստանում։

## ԽՄԲԱԿԱՅԻՆ ՀՐԱՋՈՒԹՅՈՒՆԵՐ

Ցեմել լինանկյունը հնարավորություն, ունի գոտինել՝ թեկուց և ժամանակավորապես, անհրաժեշտ քանակությամբ հրացաններ, կարելի յի, բացի մրցակցություններից, կազմակերպել խմբակույթին և «մենամարտային» հրածգություններ։

Այդպիսի հրածգության եյությունը կայանում է հնակյալում։ Որինակի համար, 6 հրածիդներ են, նրանք բաժանվում են 2 մասի, ամեն մի խմբի մեջ 3-ական հոգի։ Մեկը այդ խմբից անվանվում է կարմիր, մյուսը կառուցյա։

Ամեն մի հրածիդի տուաջ կանգնեցվում է ընկնող թիրախ, վորոշ պայմանուրեն կատարում և «հակառակորդ» հրածիդի դերը։ Թիրախների ընկելուն դիտելու համար, յուրաքանչյուր խմբում նշանակվում են հակառակորդի խմբից դիտողներ։ Դիտողի պարտականության մոջ և մտնում դիտել ընկնող թիրախները, հենց վոր թիրախն ընկնում են, նա պարտավոր ե իսկույն և յեթ համապատասխան հրածիդի կրակը դադարեցնել և հանել նրան շարքից։

Հրածգությունը շարունակվում է մինչև այն ժամանակ, քանի զեռ այս կամ այն խմբի թիրախները հակառակորդի կողմից չեն զցվում։ Այն խմբակը վորի թիրախները զցվում են, արդեն համարվում է պարտված։

## ՄԱՐՏՎԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՀՐԱՋԱՅԻՆ ՄԱՐՏՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես հրածգային գործում, անպես ել մարտավարական, հարցերի մշակման ժամանակ պետք է խուսափել նրանց տեսական, չոր ու ցամաք և վերացական բնույթ տալուց։ Ցեմել հրածգային աշխատանքի հիմնական միջոցը հանդիսանում է

Դժբախտաբար հաճախ հանդիպում են այնպիսի տեսակետի, թե իր ունի կազմի մշտականությունը եյտական նշանակություն չունի: Հետեւանքն այն լինում, վոր խմբակում մշտական մասնակիցներ չեն լինում, նա չի ձեռվորվում, կորցնում և իր կազմակերպչական գեմքը: Այսոր պարապմունքին մասնակցում են մեկը, մյուս անգամ մի ուրիշը: Մի կողմից խմբակի մասնակիցները իրենք անկանոն են հօտախում պարապմունքներին և հաճախ հաստատ չեն իմանում, վոր իրենք խմբակի կազմի մեջ են: Մյուս կողմից՝ զեկավարը չի իմանում իր լսարանին, չի կարողանում մասնակիցներին ինքնուրույն աշխատանքի քաշել, մի պարապմունք մյուսի շարունակությունը չի կազմում և խմբակի ամբողջ ծրագիրը քանդվում է: Դրանից խուսափելու համար, առաջին իսկ պարապմունքին զեկավարը պետք է վերջնականապես վորոշի և կազմի իր խմբակի մշտական մասնակիցների ցուցակը, ձգտի պահպանելու այն մինչև վերջը: Այդ ինսրեկ, չի նշանակում, թե պետք ե արգելել խմբակում չցուցակագրված կարմիր բանակայինների ներկայությունը խմբակի պարապմունքներին: Նման յենթադրություն անելը վճռապես վնասակար է: Բայց զեկավարը իր ամբողջ աշխատանքը պետք է ամբողջապես և լիովին կառուցի վոչ թե պատահականորեն մասնակցող կարմիր բանակայինների վրա, այլ խմբակի մշտական մասնակցի վրա, և խմբակը դիտել վորպես կազմակերպչորեն ձեռկերպված մի ամբողջություն: Առաջին իսկ պարապմունքում սահմանելով խմբակի մասնակիցների ճշգրիտ կազմը, անհրաժեշտ է ամբողջ աշխատանքի ընթացքում պարապմունքներին հաճախելու սիստեմատիկ հաշվետուում կատարել: Հանձնարարությունների և ինքնուրույն աշխատանքների բաշխման ժամանակ ևս պետք է նկատի ունենալ մշտական մասնակիցներին: Վերջապես, ավագի ընտրությանը, մի շարք կազմակերպչական հարցերի լուծմանը և այլն, պետք են որից մասնակից արվեն գոչ թե պատահարար պարապմունքներին ներկա գտընվող կարմիր բանակայինները, այլ խմբակում զանված մշտական կազմը: Միայն այդ պայմանների պահպանման զեպքում կարելի կլինի կազմակերպել խմբակի պլանային և գործարար աշխատանքը:

## ՎՈՐՏԵՂ ՊԵՏԸ Ե ԱՇԽԱՏԻ ԽՄԲԱԿԸ

Աժենից առաջ խթակի աշխատանքի վայրի մտախու վորտեղ՝ պահուք և աշխատի խմբակը վորպես կանոն, խմբակի պարագանենքները չպետք է տեղի ունենան լենինյան անկյան շենքում։ Հակառակ գեղքքում, կամ խմբակը պետք է արգելք հանդիսանալ լենինյան անկյունում տարվող մեացած ամբողջ աշխատանքին, կամ թե խմբակի աշխատանքների համար հանդիսաւ և զործարար պայմաններ չի լինի։ Խմբակի միայն այն պարագանենքները, վորոնք հատուկ հետաքրքիր են ամբողջ կարմիր բանակային մասսայի համար, — որինակ, քիմիական փորձերը, ավազով լիքը արկղի վրա կազմակերպվող խաղերը և այլն, — նոպատակահարմար են անցկացնել լենինյան անկյունում, իսկ առհասարակ, խմբակի աշխատանքը պետք է լենինյան անկյունից փոխադրել վաշտի մեացած շենքերը — վաշտային զրասենյակը, դասարանները, (վորտեղ այդպիսիները կան), վերջապես զորանոցի խաղաղ անկյուններից մեկը։ Հատկապես եյական է, վորպեսզի խմբակն իր պարագանենքների սկզբից ունենաւ աշխատանքի մշտական և հաստատ վայր, վորին կընտելանան մասնակիցները։ Զափալանց վատ և, յեթե այդպիսի վայր չկա, յեթե կարմիր բանակայինները վաղորոք չեն իմասնում, թե վորտեղ պետք է տեղի ունենա պարագանենք։ Այդ հանգամանքը շարունակ է միշտ ուժիկ չափով անդրադառնում և խմբակի կազմակերպվածության և լրջության վրա։

Ինչ վերաբերում է պարագային, վորը անհրաժեշտ է խմբակի ճիշտ աշխատանքի համար՝ ալա այդ պարագան նշանակալից չափով կապված ե խմբակի ընույթի հետ, նրա աշխատանքի ձևերի հետ։ Բայց այնուամենայնիվ յերկու պայման անսպայմանորին անհրաժեշտ են։ Այդ պայմաններից առաջինն ե — պահուվել խմբակի հանգիսը յեկ գործար աշխատանքը։ Յեթե խմբակի մասնակիցը հնարագորություն չունի իր առաջը զնելու իրեն անհրաժեշտ գրքույկը և տեսրակը սեղանի բացակայության պատճառով, յեթե ազմուկը խանգարում է նրան կենտրոնանալ քննվող հարցի վրա, յեթե այնքան ցուրտ ե, վոր պետք է պարագանենքի նստել զրատանքները և գլխարկները հագին, — կարելի յի համոզված ասել, վոր աշխատանքի աւորունքը չափալանց անշանկինի Յերկրորդ պայմանն ե — պահուվել մասնակիցներից նուրաքանչյուրի համար ինքնուրուց աշխատանքի տեխնիկական-

**Անաւագործքյուն:** Թախճալի պատկեր և ստացվում, յերբ խըմքակի պարագմունքը իր տեսքով համապատասխան զրույցի կամ թերթի ընթերցման, վորի ժամանակ տեխնիքական պակասությունների պատճառով հնարավոր չելինում հանձնարարել մասնակիցներին ամենահասարակ հանձնարարանությունների կատարումը: Առաջարարակ անհրաժեշտ ենկատել, վոր խմբակի նորմալ աշխատանքի պարագա ստեղծելու վրա պետք և ավելի մեծուշագրություն գարձնի, քանի դարձվում և սովորաբար Հաճախ վորեն, նույնիսկ ամենաննշան տեխնիքական բացը կործանարար և անզրագունում ամբողջ աշխատանքի վրա: Այսինչ նույնարդ եր միանգամայն վերացվել, յեթե ժամանակին և վաղորոր մուծվեր և մտահոգվեր այդ մասին: Ուստի և զեկավարը պետք և վաղորոր նախատեսի այն բոլոր կազմակերպչական ձևունարկությունը, վորոնք անհրաժեշտ են պարագմունքները ձիւտ առըփելու համար, և իրենց՝ մասնակիցների սպնությամբ նախորոք պարագա ստեղծի հանգիստ և զործարար աշխատանքի համար, ձեռք առնելով բոլոր միջոցները վերացնելու տեխնիքական բայց երը, անկարգությունները և անկազմակերպվածությունը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հիմա խոսենք խմբակի աշխատանքի ժամանակի մասին: Պարագմունքների որերը և ժամերը անպայման պետք են նշվեն խմբակի մասնակիցների կողմից, նայած նրանց ցանկության և ազատ ժամերու ունենալուն: Հիմնականում, ավելի լավ և պարագմունքներն անց կացնել շարաթական 1-2 անգամ, սակայն միջոցներ ձեռք առնել, վորպեսզի խմբակի աշխատանքի բավականին տեսական ժամանակը չթուլացնի կարմիր բառակայինների հետաքրքրությունը և չխանգարի նշված թեմայի մշակումը մինչև վերջը հասցնելու: Պետք և ձգտել, վորպեսզի հաստատ և վորոշ որեր սահմանվեն խմբակի աշխատանքի համար, վորը ինարկե, վոչ մի պայմանով չպետք և վերացնի պարագմունքը հաջորդ որվան փոխադրելու հնարավորությունը, յեթե ցանկանում են այդ ունկնդիրները: Խմբակի յուաքանչյուր առանձին պարագմունք 1<sup>1/2</sup>-2 ժամից ավելի չպետք և տիե: Պարագմունքի ժամանակ անպայման հարկավոր և հայտարարել հինգ բոլոր ընդմիջում: Այդ ընդմիջման կիրառելը խմբակի մասնակիցին հնարավորություն կտա մի քիչ հանգստանալ և միշտ կմեծացնի աշխատանքի արդյունավետությունը:

## ԽՄԲԱԿԻ ԱՎԱԳԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խմբակի մասնակիցներն իրենց միջից առաջադրում են աշխատ և լուրակի ավագն ոգնում և խմբակի գեկավարին աշխատանքի կազմակերպման և զասավորման զործում։ Նա վարում է խմբակի մասնակիցների ցուցակը և շարունակ տանում և հաճախումների հաշվառումը։ Անհրաժեշտ գեպքերում նա հավաքում է խմբակին, ծանուցում նրանց առաջիկության պարագմունքների մասին։ Ավագը մտահոգվում է խմբակի աշխատանքի տեղի և պարագայի մասին, դեկավարի հանձնարարությամբ կենսագործում և այս կամ այն կազմակերպչական ձեռնարկումը, այլ և առանձին հանձնարարությունների իրագործմանը մասնակից և զարձնում խմբակի բոլոր մասնակիցներին։ Դեկավարի կարևորագույն պարտականությունն և հանդիսանում մասնամասը հրահանգել ավագին և աստիճանաբար բարձրացնել նրա կազմակերպչական դերը խմբակի աշխատանքի մեջ։

## ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՈՐԾՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Հերջին հարցը, վոր պետք և մենք քննենք, հանդիսանում է խմբակի կազմակերպման մեջ մասնակիցների ունեցած դերի հարցը։

Հասկանալի յի, վոր այդ հարցը վերջում դնելով, մենք ամենին մատղիր չենք նվազեցնելու նրա նշանակությունը։ Ավելին, պետք և վորոշակի ասել, վոր կազմակերպչական հարցերի ամբողջ շղթայի մեջ նա հանդիսանում և ամենակարևորը և յեթի մենք նրա քննությունը կատարում ենք ամենից վերջը, ապա այդ անում ենք մենք միայն մի նպատակ ունենալով—շեշտվուծ կերպով ցույց տալ խմբակի մասնակցի դերը մեր նշանակությունները, վոր մենք արինք վերենում, իմաստ կունենա միայն այն ժամանակ, յերբ նրա կենսագործմանը անմիջական մասնակցություն ցույց կտա խմբակում աշխատող յուրաքանչյուր կարմիր բանակային, ամբողջ խմբակը, վորպես ինքնուրույն կազմակերպություն, վոչինչի պետք չե այն խմբակը, վորի աշխատանքի կազմակերպմամբ շահագրգրված չեն նրա մասնակիցները, այն խմբակը, վորի մասնակիցները հանդիսանում են պասիվ լսողներ միայն, վորոնց հետ դեկավարը աշխատանք-

և տանում: Մասնակիցներին ինքնակազմակերպման մասնակից դարձնելն եւ խմբակի մասնակից կարմիր բանակայինի հասարական դաստիարակության միակ ճիշտ ճանապարհը: Դրա համար ել զեկավարը ամենից առաջ պետք եւ ինչի ավագ, ավելի փորձված ընկեր, կարմիր բանակայինի ինքնազործոն աշխատանքի հրամանգիշ և զեկավար: Գետք եւ հասնել այնպիսի գրության, յերբ խմբակի յուրաքանչյուր մասնակից կահսնի, վորի աշխատանքի ճիշտ կազմակերպումը կախված եւ ամենից առաջ հենց իրենից: Կզիտակիցի, վոր ինքը զեկավարի հետ միասին կազմակերպում եւ խմբակը և պատոսիանատու յեւ նրա աշխատանքների կանոնավորության համար: Հատկապես ամենից առաջ այդ անկյան տակ պետք եւ քննել խմբակի կազմակերպման հարցերը:

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՅԵՎ ԽՄԲԱԿԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ամենից առաջ զեկավարը պետք եւ ամեն կերպ մասնակից անի ամրող խմբակին նրա աշխատանքի կազմակերպման և կանոնավորման հետ կապված բոլոր հարցերի քննության և լուծման գործին Ամենից առաջ, նախքան պարապմունքներին անցնելը, անհրաժեշտ և ուշադիր և լուրջ կերպով խօսակցել խմբակի մասնակիցների հետ և հնարավորություն տալ նրանց արտահայտել իրենց կարծիքը նշված ծրագրի մասին, մեթոդների և աշխատանքի գասավորման մասին: Ինորկե, հազիվ նպատականարմար լինի խմբակի համուկ կազմակերպչական ժողով հրավիրել այդ առթիվ, բայց առաջին պարապմունքին հատկացրած ժամանակից, այդ հարցերի քննությանն անհրաժեշտ և տրամադրել 15-20 ըոպե: Քննությանը կարգը, նախատեսվում եւ այսպես: Ղեկավարը համառոտ ընդգծում է խմբակի նշանակությունը, թվում և քննության յենթակա հարցերը, նկարագրում այդ աշխատանքը, վորը պետք եւ տարգի, մատնանշում ոգտագործման յենթակա նյութերը, բացատրում աշխատանքի մեթոդները և կարգը: Այսուհետեւ խմբակի մասնակիցները մտցնում են իրենց յենթագրությունները, զիտությունները: Վերջնականապես համաձայնության գալով այդ խնդիրների վերաբերյալ, զեկավարը մասնակիցների հետ միասին պայմանավորվում է պարապմունքների վայրի և ժամանակի մասին: Խմբակն ուստրում է իր ավագին, և անհրաժեշտության զեկավում առանձին մասնակիցների հանձնաբարություններ տալիս—կապվել զբաղարանի հետ, նյութեր գտնել և այլն:

Եւազմակերպչական այդ առաջին խորհոգակցությունը պետք է հիմք գնի խմբակի մասնակիցների ինքնակառավարժան զարգացմանը՝ Պետք է զօրծը այնպես զնել, վրապեսզի աշխատանքի կարգի վերաբերվող վոչ մի հարց չփնտի զեկավարի կողմից առանց կարմիր բանակայինների մասնակցության։ Յեթե խմբակավարը անհրաժեշտ է զտում խմբակում նոր մեթոդ մըսցնել, խմբակի համար նոր հանձնարարություններ առաջարկել, փոխել նրա աշխատանքի կարգը—անհրաժեշտ է, վրապես կանոն, վաղորոք ծանուցել այդ մասին խմբակին և լսել նրա յենթագրություններն ու զիտողությունները։ Դեկավարը վոչ մի գեպքում չպետք է խմբակի վզին փաթաթի իր առաջարկությունը, այլ կիրառի այդ հետեւողականորեն, առկաով, համոզելով, ուշադիր ունկնդրելով մասնակիցների զիտողություններին և շարունակ հաշվի առնի նրանց, ձգտելով, վրապեսզի կարմիր բանակայինը տեսնի, վոր իր կարծիքների և առաջարկությունների հետ ուշադրությամբ հաշվի յեն նստում, վոր առանց նրա մասնակցության չի լուծվում խմբակի աշխատանքին վերաբերվող և վոչ մի հարց։

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՄԲԱԿՈՒՄ

Մենք հատուկ ուշադրություն կդարձնենք խմբակի հասարակական կարգապահության խնդիրների վրա։ Առուր հասարակական կարգապահությունը—խմբակի աշխատանքի կազմակերպության և հաջողության առաջին գրավականն է։ Հաճախ լուծում ենք, թե խմբակի կանոնավոր պարապմունքները խախտվել են՝ մասնակիցների չներկայանալու պատճառով, թե մասնակիցները չեն կատարում իրենց տրված հանձնարարությունները և այլն։ Հաճախ է պատահում, վոր զեկավարը աշխատանքի հաստատ կարգ սահմանելու համար համոզման մեթոդից անցնում և վարչավորման, հրաժայում և ստիպում ինարկե, կարգապահությունը խմբակում չի կարող հենվել ստիպողականության վրա։ Խմբակը—կամավոր կազմակերպություն և և նրա ներքին կարգապահությունը—հասարակական կարգապահություն է, վորը պետք է և կարող է կառուցվել կամավորականության վրա։ Ճիշտ է, կարող է պատահել վոր կարմիր բանակայինի մեջ հասարակական կարգապահության սովորույթներ զարգացնելը—զեկավարը կարգել դժվարին անելիքն է։ Բայց կազմակերպչական բոլոր հարցերից, թերեւ նա հանդիսանում է ամենակարեւընից մեկը։ Դեկավարը ամուր հասարակական կարգապահություն պետք է ստեղծի վոչ թե վարչավորման և «մնշում» զորձ դնելու միջոցով, այլ մասնակիցների հետ ամենորյա սիստեմատիկ և

համառ դաստիարակչական աշխատանքի շնորհիվ: Ի՞նչ ուզգություններով նա պետք է ընթանա: Ամենից առաջ պետք է շարունակ կարմիր բանակայինի մեջ պատասխանառության դիտակցություն դաստիարակել իր ընկերների առաջ այն աշխատանքի նկատմամբ, վոր նա կատարում է: Մանր բաների վրա, զործնական որինակներով, կոնկրետ որինակների վրա պետք է աստիճանաբար ցույց տալ կարմիր բանակայինին, վոր նա կատարում է ընդհանուր զործի մի մասնիկը և վոր առանց իր մասնակցության այդ զործը կտուժի: Դիցուք մասնակիցներից մի քանիսը ժամանակին չեն ներկայացել պարագմունքի—անհրաժեշտ ե պարզաբանել նրանց, վոր ժամանակին չեներկայանալու իրենց այդ արարքի շնորհիվ ստիպել են մյուսներին յերկար սպասել և շուտ ժամանակ կորցնել: Կամ թե, կարմիր բանակայինը չի կատարել իրեն հանձնարարած աշխատանքը—կարեոր և հասկացնել նրան, վոր իր հանձնարարության չկատարելը անդրադարձել և խմբակի ամբողջ աշխատանքի վրա:

Յերկրորդ, կարգսպահնության հարցերը նշանակալից չափով կապված են խմբակի մասնակիցների միջև սերտ ընկերական միաձուլություն հաստատելու հետ: Յեթե խմբակը կազմակերպչորեն ձևավորված չե, յեթե նրա կազմը մշտական չե, խոսք անգամ լինել չի կարող խմբակի հասարակական կարգապահության մասին: Չե վոր չի կարելի կարմիր բանակայինից կարգապահություն պահանջնել, յերբ այդ կարմիր բանակայինը նույնիսկ չգիտե, թե ինքը խմբակի մասնակից ե: Միաձուլել խմբակ, մասնակիցների խելական մտերմություն և միահամուռ աշխատանքի պայմաններ ստաղծել, ըստ եյտթյան նշանակում է, ամբաղընդել խմբակի ներքին կարգապահությունը:

Յերրորդ, կարեոր հանգամանք է և այն, զորպեսզի կարգապահությունը ամրացնելու զործին մասնակից արքին և իրենք մասնակիցները: Յեթե խմբակավարը չանի այդ սկզբից, տպա նրա հետաքայի ջանքերը անհրաժեշտ արդյունքներ չեն տա: Խմբակի պատճին ժողովում զեկավարը պետք է մանրամասն նկարագրի կարմիր բանակայիններին նրանց պարտականությունները վորպես խմբակի մասնակիցներ, առաջադրի կարգապահության ամրապնդման և աշխատանքի կարգավորման անելիքները, ներկայացնելով այն վորպես իրենց մասնակիցների անելիք: Հետագայում զեկավարը պետք է շարունակ այդ խնդիրը զնի մասնակիցների առաջ և հասարակական կարգապահություն ստեղծելու համար տարրած իր աշխատանքում հենվի վոչ միայն ավագի վրա, այլ և մասնակիցներից յուրաքանչյուրի վրա, խմբակի վրա ամբողջովին:

# ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

## ԽՄԲԱԿԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՎՈՐՊԵՍ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆ- ՔԻ ՁԵՎ

Սիսակ կլինի կարծեւ, թե խմբակային աշխատանքի մեթոդիկան չի տարրերվում ուսուցման մեթոդիկայից, թե քաղաքական խմբակի աշխատանքը չի տարրերվում քաղաքական պարագմունքներից, իսկ սազմական խմբակի աշխատանքը սազմական պարագմունքներից:

Խմբակային աշխատանքի գժրախտությունը սովորաբար կայանում և հատկապես նրանում, զոր նրա զեկավարները հաշվի չեն առնում և չեն կարողանում հաշվի առնել այդ աշխատանքի առանձնատկությունները և զրանով իսկ մեքենայար խմբակում կիրառում են մեթոդներ, զորոնք ավելի հատուկ են ուսուցմանը, կենդանի աշխատանքը գարձնում են վասե տնայնազործորեն զրված վարժական պարագմունքներ, և վոչ միայն չեն իրազործում խմբակի առաջ զրված խնդիրները, այլև յերբեմն կարմիր բանակայինին յետ են մզում խմբակից:

Ցերե ուշագիր հաշվի առնվեն այդ առանձնահատկությունները, ապա պարզ կլինի, զոր խմբակային աշխատանքի մեթոդիկան պետք ե եյապես տարրերվի վարժական պարագմունքների մեթոդիկայից: Խմբակի զեկավարը ստիպված է շարունակ նկատի ունենալ յերկու կարգի մեթոդական խնդիրներ—նախիատուկ մեթոդիկայի ինդիքներն ու կանոնները, զորոնք տարրեր են խմբակների տարրեր տեսակների համար, և չերկորդ, խմբակային աշխատանքի մեթոդիկայի խնդիրներն ու կանոնները, խմբակային աշխատանքը, զորպես աղքախիթե, զորպես ակմբային ինքնազործոն աշխատանքի տեսակներից մեկը: Հասկանալի յեւ նույնպիս, զոր վերջին խնդիրները կլինեն ընդհանուր և միատեսակ բոլոր տիպի խմբակների համար, զորովհետեւ բոլոր խմբակներում, անկախ թե նրանք ինչ հարցերով են պարագում տարած աշխատանքի միջոցով պետք ե միատեսակ զարգացնել կարմիր բանակային ինքնազործունեյությունը, բոլոր խմբակներում անհրաժեշտ և միատեսակ հաշվի առնել կարմիր բանակայինի հանգստանալու ցանկությունը և այլն:

Այդպիսով, խոսել խմբակային աշխատանքի մեթոդիկայի մասին, չի նշանակում քննիլ քաղզրագիտության, ուսուցման գործի և թվարանության ուսուցման մեթոդիկայի հարցերը թագրագիտության, ուսուցման գործի և թվարանության ուսուցման ձևերը, ինչպես ասեցինք, հիմնականում միանման են և խմբակի համար, և ուսուցման համար: Մենք պետք են կանգ առնենք միայն խմբակային աշխատանքի մեթոդների առանձնահատկությունների վրա, վորպես ակրային ինքնազործուն աշխատանքի տեսակներից մեկը:

Գործնականորեն, ինչպես մենք արդեն տեսանք, այդ նըշանակում ե, վոր մենք պետք են պատասխաննենք յերեք հիմնական հարցի՝ 1) ինչպես զուգացել խմբակի աշխատանքը մասնակիցների մշտական կենդանի հետաքրքրության հետ, ինչպես պահպանել և բարձրացնել այդ հետաքրքրությունը, 2) ինչպես զնել խմբակի աշխատանքը կարմիր բանակային հանգստի պահանջների բավարարման հիմնան վրա, 3) ինչ և հարկավոր անել, խմբակում լայն և ամբողջական չափով կարմիր բանակային ինքնազործնեյությունը և ակտիվությունը հայտարարելու և զարգացնելու համար: Փորձենք լուծելու այդ հարցերը:

## ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Այնքան, վորքան խմբակի մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկն եղուգակցել նրա աշխատանքը կարմիր բանակայինի մշտական և կենդանի հետաքրքրությանը, ապա ընական ե; Վոր զեկավարի առաջին մեթոդական քայլը պիտի հանգիստ իր խմբակի մասնակիցներին նրանց պահանջների ակտիվության և արամագրությունների ամենորյա և մանրացներին ուսումնասիրությունը: Զի կարելի պարապունքների միատեսակ մեթոդներով մոտենալ զարգացած և հետամնաց կարմիր բանակայինին, ակտիվին և վոչ ակտիվին և լավ զրագետին ու կիսազրագետին: Դրա համար ել աշխատանքին լուրջ վերաբերվող զեկավարը մինչև պարապունքը պետք երեխն համար թեկուղ մոտավոր պատկեր ստեղծի իր խմբակի կազմի մասին, պարզի թեկուղ ամենաանհրաժեշտ տվյալները, — ինչպիսին և մասնակիցների սոցիալական կազմը, նրանց կուլտուրագաբական մակարդակը, ինչպիսին և նրանց ընդհանուր գըրագիտությունը, մասնակիցների մեջ կան արդյոք կոմյերիտականներ և ակտիվ կարմիր բանակայիններ, խմբակում զրվածներն ինչ են ուզում ստանալ նրանից, վորքան են նրանք շա-

Հագրգոված խմբակի աշխատանքով և այլն և այլն Բայց նույն իսկ աշխատանքի առաջին շրջանում անզամ այդ ընդհանուր տվյալներն ամեններն բավարար չեն լինելու:

Անհրաժեշտ և մասնակիցների ավելի խորը և ուշադիր ուսումնասիրություն կատարել պարապմունքների ընթացքում խմբակի մասնակիցների թիվը համեմատաբար մեծ չե, և վատ կլինի այն խմբակավարը, վոր չի կարողանում սկզբից իր առաջ մասնակիցների անհատական ուսումնասիրության խնդիրը դնել էուրջ դեկավարը պետք և ուշադիր հաշվի առնի մասնակիցներից յուրաքանչյուրի տրամադրությունները, նրա վերաբերմունքը գեղի աշխատանքը, նրա շահագրգովածությունը, այն հարցերը, վոր տալիս և նա պարապմունքների ժամանակ և վորոնք նրան հուզում են, գեղի այս կամ այն հանձնարարությունը ցույց տված հետաքրքրությունը, գեղի խմբակի աշխատանքի մեթոդները և այլն: Ուսումնասիրության արդյունքները պետք և օժանդակեն դեկավարին աշխատանքի այս կամ այն մեթոդներն ընտրելու մեջ: Առանց այդպես կառուցվում և խնամքով կազմակերպված ուսումնասիրության, ավելորդ և խոսել խմբակում կարմիր բանակայինի հետաքրքրությունը բավարարելու մասին, հետեւաբար, ավելորդ և խոսել խմբակի աշխատանքի մեթոդիկայի մասին:

## ԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Խմբակի կազմի խորը և մտածված ուսումնասիրությունը դեկավարին հնարավորություն և տալիս ճիշտ մոտենալ մասնակից կարմիր բանակայինին, հետեւաբար և խմբակի աշխատանքին:

Բանչումն և մատեցման եյությունը:

Այդ կարեորգույն հարցին հնարավորության չափ ճշգրիտ և պարզ պատասխանելու համար, քննենք մի կոնկրետ որինակ՝ Ընդունենք, թե խմբակ և կազմակերպվել այն հարցի շուրջը «թե զյուղացին այս տարի ինչքան հարկ պիտի վճարի»: Այդ խմբակի աշխատանքը կարելի յի կառուցել զանազան կերպ:

Կարելի յի, զորպեսզի դեկավարը պատրաստվի և խմբակը հավաքելով ինքը պատմի, թե ինչումն և հարկի նոր որենքի եյությունը, ինչպես պետք և գանձվի այն, ում և ինչ արտօնություններ պետք և տրվին և այլն: Խմբակի մասնակիցները հարցեր կտան, զեկավարը կպատասխանի հարցերին և կցը ի առաջի աշխատանքի մեթոդիկայի մասին:

հարկի յե վարվել և այլ կերպ: Ինքը չտառմելով հարկի ժամանակ դաստիարակ գրա փոխարեն կարող է նշել մի շարք հարցեր, զնել այն խմբակի մասնակիցների առաջ և առաջարկել, վորպեսզի նրանք իրենք պատասխանեն—թե ինչումն է հարկի եյությունը, ինչպես պետք ե գանձվի նա և այլն: Վորպեսզի մասնակիցները կարողանան պատասխանել զրած հարցերին: զեկավարը պետք ե հանձնարարի նրանց կարգալ մի շարք նյութեր, մի քանի քաղվածքներ որենքից, մի քանի եջ հարկի մասնին գրած զրածույթից և այլն:

Դեկավարի ոգնությամբ կարմիր բանակայիններն ինքնույն մշակում են այդ նյութը, աղյուսակով հաշվում են իրենց տնտեսությունից գանձվելիք հարկի քանակը, զիազրամ ևն զըծում հին և նոր նորմաներով միջակից և չքավորից գանձվելիք հարկի մասին: Մշակումից հետո կոլեկտորի կերպով քննում են զրած հարցերը, պատասխանում են նրանց, ուղղում միմյանց սխալները և զիտում առանձին մասնակիցների աշխատանքը:

Ինչով ե տարբերվում խմբակի աշխատանքի առաջին մեթոդը յերկրորդից: Տարբերությունը բացահայտորեն նրա մեջ ե, գոր առաջին գեղքում մասնակցին հրամցվում եր պատրաստի նյութը և յեզրակացությունները: Սուաջին գեղքում մասնակիցը պասսիվ, կամ համարյա պասսիվ ունկնդրող եր, ընդհակառակը, յերկրորդ զեղքում նա պասսիվ ունկնդիր չեր, նրան պատրաստի յեզրակացություններ չեյին հրամցնում: Նա ինքն իր նյութը մշակում, ինքն եր անհրաժեշտ յեզրակացությունների հանդում:

### ՅԵՐԿՈՒ ԶԵՎԵՐԻ ԳԱՎԱՏԱԿԱՆԸ

Պոր ձեն և լով: Գուցե առաջինը: Զե վոր, այսպես թե այնպես կարմիր բանակայինի համար ավելի հեշտ ե լսել դեկավարին, քան փորփել նյութերը: Պարզ ե, առաջին ձեր հեշտ, բայց ոգտակար չե: Ոգտակար չե, յերկու հիմնական պատճառներով, վորոնց աչքաթող անել չի կարելի: Նախ խմբակի մասնակցին չի կարելի պասսիվ մասնակից—ունկնդիր զարձնել: Խմբակի նշանակությունն ամենից առաջ կայանում ե նրանում, վորպեսզի ոգնի կարմիր բանակայինին ինքնուրույն կերպով հասկանալու իրեն հետաքրքրող հարցը և ինքնուրույն կերպով յեզրակացություններ անել: Յերկրորդ, կարմիր բանակայինն ուրիշ պատճածը վատ ե յուրացնում, միշտ չի համոզվում: Իսկ

յեւի իրեն հնարավորություն տան մտածել հետաքրքրող հարցի շուրջը, կարդալ նյութը, հաշվել թվերը, համոզվել տառչարկվող փաստերի ճշտության մեջ, ապա հաստատ և տեսկան ժամանակով նրա ուղեղում կտպավորվեն ստացած տեղեկությունները, ինքը յեզրակացության կհանգի, և համոզված լիինի նրա ճշտության մեջ Աւստի և խմբակի աշխատանքի եյությունը կայսում և վոչ թե նրանում, վորպեսզի կարմիր բանակայինների զրուխը փաստական տվյալներով «լցնեն», այլ նրանում, վորպեսզի նրան փաստական և համոզիչ տվյալներ հաղորդելով, ձգուեն, վորպեսզի նու ինքը մշակի իրեն հետաքրքրող հարցերը, ինքը գտնի նրանց ճիշտ լուծումը:

### ԿՈՄՊԼԵԽՍ ԽՄԲԱԿՈՒՄ

Խմբակային աշխատանքի մեթոդիկայի մեջ չսփառանց կորեար հարց և հանդիսանում կոմպլեքսի կիրառումը: Խմբակում պարագայունք տանելով, նյութեր ժաղովելով, պետք և շարունակ ձգուել, վորպեսզի մասնակիցը խմբակում ուսումնասիրի վոչ միայն առանձին հարցեր, այլ և այդ ուսումնասիրությունը հիմք ծառացի նրա ընդհանուր աշխատանքի լայնացման, նրա ընդհանուր զարգացման բարձրացման համար: Հաճախի, որինակ, պատահում, վոր թվարանական խմբակի աշխատանքը ընթանում և վոչ թե առորյա կոնկրետ նյութի վրա, այլ վերացական թվերով որինակների և խնդիրների հիման վրա: Կարելի յեւ այդպես վարվել թե չեւ ինտրկե չի կարելի: Թվարանական խմբակի աշխատանքը պետք և կառուցվի վոչ թե վերացական թվերի վրա, այլ ընթացիկ ուղղմական տվյալների վրա:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ ԽՄԲԱԿՈՒՄ

Խմբակավարը մեծ ուշադրություն պետք և գարձնի այն հարցերի պատասխանը բավարարելու վրա, վոր տալիս են մասնակիցները պարապմունքի ընթացքում: Գետք և ասել, վոր ինքնուրույն աշխատանքի ընթացքում խմբակի մասնակիցների մոտ միշտ առաջանում և մեծ քանակությամբ զանս զան հարցեր, վորոնց լուծման համար նրանք դիմում են խմբակավարին: Հաճախ և պատահում, վոր այդ հարցերը միայն շատ հեռավոր կապ են ունենում մշակվող թեմայի հետ: Հասկանալի յեւ, վոր զեկավարը պետք և միշտ պատրաստ լինի կարմիր բանակայինների կող-

մից արվող հարցերին պատասխանելու կամ անձամբ, կամ թե խմբակի մասնակիցների հետ միտսին՝ կուլեկտիվ կերպով: Յեթե նույնիսկ կարմիր բանակայինի հարցը բուրովին՝ կազմած չե պարագմունքի առարկայի հետ, այդ գեղքում ևս զեկավարը պետք է հաւաքագորության սահմաններում այդ հարցերին պատասխանի պարագմունքի ժամանակ (հատկապես, յերբ նա հետաքրքիր և ամբողջ խմբակի համար, և նրան պատասխանելը յերկար ժամանակով չի կարի քննվող առարկայից) կամ թե անձնական զրույցի միջոցով՝ պարագմունքից անմիջապես հետո: Այդ պայմանները զեկավարին առաջարկում են մի շարք արտակարգ լուրջ պահանջներ: Պետք ե զգուշացնել մի բանի մասին: Պատասխում և, վոր խմբակավարը ձգտում ե անմիջապես պատասխանել բոլոր տրվող հարցերին անխտիր, յեթե անգամ պատասխանի համար նա միանգամայն պատրաստ չե: Վորպես կանոն, յեթե զեկավարը ավագալ պարագմունքին իզիճակի չե սորուիչ բացատրություն տալու, — ավելի լավ և այդ առթիվ զըրույցը հետաձգել մի ուրիշ անգամ, քան թե տակ մակերեսային վոչ ճիշտ և վոչ համազիշ պատասխան: Միայն կարեոր և, վորպեսզի զեկավարը չմոռանա իր խոստումը, «պատասխանել հաջորդ անգամ», և ժամանակին պատրաստվելով մասնակիցներին սպասող պատասխան տա: Առհասարակ, պետք և լիովին ապահովել խմբակում տրվող կարմիր բանակային հարցերին պատասխանելը:

## ՀՀՈԳՆԵՑՆԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻՆ

Յերեմի այդ միանգամայն ճիշտ զրությունը մեկնարան վում և վոչ ճիշտ — գտնում են, վոր խմբակի զեկավարը պետք ե «տանը կատարելու հանձնարարությունների» դասեր տա: Պատահում ե նույնապես, վոր խմբակի ինքնուրույն աշխատանքը փորձում են կառուցել հետեւյալ կերպ: — վազորոք բաժանում են զրականությունը, մասնակիցներն ազատ ժամանակ կարգում են, իսկ խմբակի պարագմունքներին զեկուցումներ են անում տըրվող թիմաների շուրջը: Վորպես կանոն, «տանը կատարելու հանձնարարությունները» չպետք ե զործազրկեն (միայն բացառիկ դեպքերում, մասնակիցների չափազանց պատրաստված և հետաքրքիվածության դեպքում) և մասնակիցների ամբողջ աշխատանքը պետք ե ընթանա միայն խմբակի պարագմունքի համար հատկացրած ժամանակամիջոցում: Խնչո՞ւ: Վորովհետեւ կառու-

ցելով խմբակի աշխատանքը, վոչ մի կերպ չի կարելի հոգնեցնել կարմիր բանակայինին, ծանրաբեռնել նրան աշխատանքով։ Այդ վերաբերում ե վոչ միայն «առանք կատարելու հանձնարարություններին», այլ և խմբակում տարած անմիջուկան աշխատանքին։ Չի կարելի խմբակի պարապմունքը ծանրաբեռնել մեծ քանակությամբ նյութերով, հարցերով և այլն։ Այդ սահմանի չափը պետք է խիստ համաձայնեցված լինի հնարավորությունների ժամանակի և կարմիր բանակայինի ցանկության հետ։ Վորքանի վոր հետաքրքիր չենին պարապմունքները, բայց ծանրաբեռնված լինելով, նրանք կարող են ձանձրացնել և գրանով իսկ յիս մզել մասնակից՝ կարմիր բանակայինին։ Մենք կոսիկինք՝ առվելի լավ և տալ հնարավոր յեղածից քիչ, քան թիւ շատ։

### ՅԵՆԹԱԽՄՄԲԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԵԼԸ

Սկզբում և մասնակիցների ինքնուրույն աւխատանքը։ Նրա լավագույն կազմակերպման համար հատկապես նպատակահարմար և խմբակը բաժանել մի քանի յենթախմբակների։ Յուրաքանչյուր յենթախմբակում, միջին հաշվով, պետք և լինի 3.5 (բայց վոչ ավելի) հոգի, այլ հաշվով, վորպեսզի յենթախմբակների քանակը 3-4-ից այն կողմը չանցնի։ Բաժանելն ամենից լավ է թողնել, վորպեսզի կատարեն իրենք մասնակիցներն այնպես, ինչպես իրենց հարմար և, սակայն զեկավարը պետք և ուղղությունը մտցնի այդ բաժանումների մեջ, ձգտելով, վորպեսզի յենթախմբակների մասնակիցները լինեն սիատեսակ իրենց զարգացմամբ և մակարդակով, այլ և վորպեսզի յենթախմբակներից յուրաքանչյուրի մեջ լինի մեկ՝ քիչ թիւ շատ զարգացած մասնակից, այսպես սատծ յենթախմբակի ավագը։ Յենթախմբակի այդ ավագը պետք և հանձնարարություններ ստանաիր ամբողջ յենթախմբակի համար, կազմակերպի նրա ներքին աշխատանքը և այլն։

Յենթախմբակների այդպիսի բաշխումը կարեոր և նրա համար, վոր մասնակիցներին անհամեմատ հեշտ և և ոգտակար աշխատել հանձնարարության վրա վոչ թե մեկ մեկ, այլ կոլեկտիվ կերպով, միատեղ։ Ուստի, նույնիսկ խմբակի փոքր կազմ լինելու գեպքում, յենթախմբակների ստեղծելն այնուամենայնիվ նպատակահարմար և (պարզ և, պետք և քչանա նրանց քանակը, այլ և նրանցից յուրաքանչյուրի մասնակիցների քանակը)։

Յենթախմբակները կազմակերպելուց հետո ղեկավարը բառ-

Պառւմ ե նշանց համանաբարությունները, աօխատանի ներառկան չերք չեվ նյութերը:

## ՄԵԱԿՄԱՆ ՆՅՈՒԹԸ

Ի՞նչ նյութ պետք է ընտրել խմբակում մշակելու համար: Այսակ կարեոր և նշել մի քանի հիմնական կանոններ, յելնելով այն ամենից, ինչ մենք ասեցինք մեթոդիկային վերաբերող բաժնում: Ամեննից առաջ, նյութը պետք է կրի ընթացիկ ըընույթ: Խմբակին չի կարելի հանձնաբարել քաղզքագիտության ձեռնարկ, կանոնագիրք, հսացած փաստաթղթեր և այլն: Թարմ լրագիր, նոր բրոցյար, հանգեստ հերթական համարը, մոտ անցյալում վերջացած համագումարի վորոշումները—մասնակիցների ինքնուրույն աշխատանքի լավագույն ձեռնարկները կարող են լինել: Ցերուրգ: հակայական նշանակություն ունի նյութի գեղի հասարակ և համբամատչելի լինելը, նյութի պարզ բացատրությունը: Պատահում և, վոր մի շաբթ շատ կարեոր փաստաթղթեր չեն ուստագործվում խմբակի աշխատանքում միայն նըրա համար, վոր նրանք չեն բավարարում այդ պահանջները: Աւտակի և հատկապիս կարեոր և, վորպեսզի զեկավարը խմբակին այս կամ այն հոդվածը կամ գրքույթը հանձնաբարելուց առաջ, ինքն ուշագիր դիտի այն, համարավորության չափ հանի չափազանց բարդ կտորները՝ կազմի անհասկանութիւնը բառերից կազմած փոքրիկ բառարան և այլն: Ցերուրգ, նյութը պետք է լինի բազմազան և կենդանի: Քաղաքական կամ ռազմական հոդվածի հետ միասին պետք է տալ վոտանավոր, մի փոքր կտոր գեղարվեստական պատմվածքից, հետաքրքիր պատմական փաստաթուղթ, թերթում տված կենցաղային թղթակցություն և այլն: Չերուրգ— նյութը հնարավորին չափ պետք և տեսողական լինի: Դեկավարին վաղորոք անհրաժեշտ է ջոկել վառ դիագրամ, աղյուսակ կամ սիսմա, գեղարվեստական լիցուստարացիա, յեթե անհրաժեշտ ե աշխարհագրական քարտեզ և այլն: Հինգերուրգ: համեկան կարեոր և վորպեսզի նյութը լինի կարճ, ամփոփ, և կոնկրետ, Միջին հաշվով խմբակն ինքնուրույն մշակման համար մի ժամկց ավելի ժամանակ չունի, շարքային մասնակցի համար չափազանց գժվար կլինի այդ ժամանակամիջոցում վեր լուծել 6—10 յարեսից ավելի նյութ: Դրա համար եւ, առաջարկելով մեծ զբույյկ, հոդված և այլն, զեկավարը պետք և վաղորոք ճշգրիտ նշի այն տեղերը, վորոնք պետք և մշակվեն, զուրս ներառվ այն ամենն ինչ ավելորդ և, թողնելով միայն ամենից

անհրաժեշտը՝ վերջապես, վեցիւրուգ, անհրաժեշտ և նշել, վոր նյութը ընտրելով, պետք և յելնել նրանից, թե վորքան բավարար քանակությամբ կա այդ նյութից խօսքակի նորմալ աշխատանքն ապահովելու համար,

Առահելով կռնկը ետ, խմբակների աշխատանքի համար վորպես նյութ պետք և վերցնել նհանյալը, — բերից՝ առաջնորդող հոգվածները և թերթաները, կարմիր բանակային և զյուղացիական և ազգաբնից, քաղվածքներ զեկուցումներից, հաշվետվություններից, սպազրություններից, առավել վառ փաստեր քաղաքական ինպիրացիայից, առանձին կենդանի թղթակցություններից կենցաղյին բառյթով և այլն: Հանրամասչելի գրեռուկ, ավելի ճիշտ մի քանի յերեսից բազկացած մի կտոր այնպիսի գրքույթից, վորի չափը չանցնի լրագրական միջին հոգվածի չափիցը Զանազան փաստարդուր — գեկրեաներ, խորհրդային և կուսակցական կազմակերպությունների վորոշումներ, պատմական փաստաթղթեր և այլն: Գերավելիսական կտորներ, վոտանավորներ, փոքր պատճեններ, ամենահասարակ սխեմաներ, փոքրիկ աղյուսակներ, քարտեաները

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Հավաքած նյութի հիման վրա յել կազմվում են հանձնարարությունները՝ յենթախմբակների ինքնուրուցյն աշխատանքի համար: Ինչ ձևով են տրվում այդ հանձնարարությունները: Այսուղի հաճախ սխալներ են թույլատրում, մեր կարծիքով, կոպիտ սխալներ: Յերբեմն կարծում են, թե մասնակիցներին միայն պետք և առաջարկել կարգալ այն նյութը, վոր նշել և զեկավարը: Այդ ճիշտ չեն Սյու միջոցը կարող և մասնակիցների ինքնուրուցյն աշխատանքը վերածի նյութի մեքենայական ընթերցման, — մեքենայական նրա համար, վոր կարմիր բանակայինը չպետք և պարզ հասկացողություն տա իրեն, թե ինչ նպատակով և նա կարգում իրեն առաջարկած կտորը, ինչի վրա պետք և հասուել ուշադրություն դարձնել, և ինչն և յերկրորդականը: Ռւստի և մասնակցին չի կարելի միայն առաջարկել կարգալ և մշակել այս կամ այն նյութը, այլ պետք և նրա առաջ դնել մի շարք հարցեր և առաջարկել պատասխանել այդ հարցերին: Հոգվածը, զրբույկը, դիմոգրամը պետք և, այդպիսով, մասնակցի համար միայն՝ ձեռնարկ ծառայեն արված հարցերին ճիշտ պատասխան տալու գործում: Այսպես, որինալ, պետական բյուջեն ուսումնասիրող խմբակի հանձնարարությունը մոտավորապես այս ձեր կնդունի: —

## Պատասխանեմի հետեւյալ հարցերին

1. Ի՞նչ բան և պետական բյուջեն և նա ինչու յեւ պետք է
2. Ի՞նչպիսին և ԽՍՀՄ բյուջեն, արդյոք նա չի՞ տարբերվում կապիտալիստական յերկրների բյուջեյից:
3. Վորուսպից և մեր պետությունը զրամ վերցնում: Նա արդյոք շատ և ստանում հարկելից, յերկաթուղուց, արդյունաբերական և այլն:
4. Ինչպես եւ ծախսում մեր պետությունն իր զրամները: Զի՞ կարելի արդյոք քչացնել բանակի և նավատօրմի վրա կտարգող ծախսերը: Զի՞ կարելի, արդյոք, ավելացնել գյուղատնտեսության տրվող համակացումները, և քչացնել արդյունաբերության համար կատարվող ծախսերը: Բացատրեք, թե ինչու չի կարելի կամ կարելի յեւ:

## ՀԱՆՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՆԱԿԱՆ

### ԱՇԽԱՏԱՆՔ

Յանկալի յեւ, վորպեսզի յուրաքանչյուր՝ հանձնարարության մեջ, նյութը ընթերցելուց բացի, մոցվի Փոքրիկ զործնական աժխատանք յենթախմբակի համար, որինակի, զծել դիմում, զրգույթի համար, հանդեսներից մի քանի համապատասխան նկարներ կտրել, թղթակցություն զրել և այլն: Անհրաժեշտ է միայն հաշվի առնել, վորպեսզի իր չափով այդ գործնական աշխատանքը շատ ել մեծ չլինի և մասնակիցներից նրա իրազործան համար շատ ժամանակ և աշխատանք չխիլի: Յուրաքանչյուր յենթախմբակին պետք եւ տալ տարբեր բնույթի կործնական աշխատանք: Որինակ ԽՍՀՄ բյուջեն ուսումնասիրող խմբակի համար կարելի յեւ նշել այսպիսի զործնական աշխատանք — Յենթախմբակներից մեկը զծում և ԽՍՀՄ յեկամուտների և ծախսերի դիմումը, մյուսը՝ զնահատական և զրում բյուջեյի մասին կարգացած գրքույթի մասին, յերրորդը՝ պատասխանում և հարց ու պատասխանի տետրում բյուջեյի վերտիբրյալ տված հարցին, չորրորդը՝ կազմում և ԽՍՀՄ բյուջեյի մասին լրազրի վերջին համարներում լույս տեսած հողվածների ցուցակը և այլն:

Ամենից լավ կլինի, յեթե խմբակի դեկազարը վաղորոք յենթախմբակների հանձնարարությունները զրի առնի առան-

ձին-առանձին թերթիկների վրաւ Շայրահեղ դեպքում այդ  
հանձնարարությունները կարելի յե զրել զրատախտակի վրա,  
կամ թելադրել բոլոր մասնակիցներին:

## ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՆԹԱ- ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հանձնարարությունները տրվելուց հետո յենթախմբակ-  
ներն անցնում են նրանց իրազործման: Յուրաքանչյուր յենթա-  
խմբակ աշխատում ե մյուսներից առանձին: Յանկալի յե, վոր-  
պեսզի աշխատանքի համար, հնարավորության սահմաններում,  
նախորոք պատրաստած լինի 2—3 սեղան կամ նստարան, վո-  
րոնց վրա մասնակիցները կերպողանան տեղափորվել ինքնու-  
րույն աշխատանքի ժամանակ: Սակայն, ժայրահեղ դեպքում  
կարելի յե կառավարվել և առանց նրանց: Հանձնարարությունների կատարումը տեղի յե ունենում հետեւյալ կերպ: Յենթա-  
խմբակի բոլոր մասնակիցները ուշագիր ծանոթանում են առա-  
ջարկված հանձնարարությանը և առաջադրված հարցերին: Այ-  
նուհետև նրանցից մեկը բարձր կարդում ե նշված նյութը, մաս-  
մաս, յուրաքանչյուր հիմնական մտքից հետո կանգ առնումէ  
Ընթերցման ընթացքում մնացածները զրի յեն առնում հիմնա-  
կան մտքերը, հարցեր են զնում, միատեղ քննում նրանց, պար-  
զում են անհասկանալի բառերը, դարձվածքները, վեր են լո-  
ծում դիագրամները, աղյուսակները և այլն: Ընթերցումի վեր-  
ջացնելուց հետո յենթախմբակի մասնակիցները միատեղ քնն-  
ում են տրված հարցերը, կողլեկտիվ կերպով գտնում անհրա-  
ժեշտ պատասխանը և դրանից հետո միատեղ ձեռնարկում գործ-  
նական աշխատանքի իրազործման:

## ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԶՐՈՒՅՑ

Աշխատանքի վերջին և կարենորագույն շրջանը հանդիսա-  
նում է յեզրափակիչ գրույցը: Հանձնարարությունները վերջա-  
ցնելուց հետո, բոլոր յենթախմբակները միանում են ամփոփում-  
ներ կատարելու համար: Ինչպես տանել յեզրափակիչ զրույցը:  
Զպետք ե ստիպիլ յենթախմբակների մասնակիցներին զոր և ե  
զեկուցմներ անել այն մասին, թե նրանք ինչ են վերըուծել  
յուրացըել:

Յեզրափակիչ զրույցի առանցքը պետք ե կազմեն այն  
հարցերը, վոր դրվել են յենթախմբակների առաջ (ինչ ե, որից

հակ, բյուջեն, ինչու համար ե նա, ինչպիսի՞ն և ԽՍՀՄ բյուջեն և այլն): Դեկավարը հետևողական կերպով դնում ե ամբողջ խմբակի առաջ այդ հարցերից յուրաքանչյուրը և առաջարկում ե գրանց շուրջը արտահայտվել: Մշակման ընթացքում մասնակիցները կուտակել են վորոշ նյութ և միշտ ել կենդանի մասնակցություն ցույց կտան հարցերի քննությանը: Յուրաքանչյուր առանձին հարց վերլուծելոց հետո, դեկավարը ամփոփում ե յեզրակացությունները (իր խոսքերով կամ հեղինակավոր փաստաթղթերից քաղաքամեջքերութիւններով) և անցնում հաջորդ հարցին: Այնուհետև կողմեկտիվ կերպով քննվում և գնահատվում ե յենթախմբակների կողմից կատարված գործնական աշխատանքի արդյունքները, և միատեղ ուղղվում սխալները: Վերջում, դեկավարը ընդհանուր ամփոփումներ և կատարում, գրականություն և հանձնարարում ինքնուրույն ընթերցման համար և ծանուցում ե հետեւյալ պարապմունքի թեմայի մասին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Մի քանի խոսք աշխատանքի ժամանակի բաշխման մասին: Ցանկալի յի, վորպեսզի ամբողջ մշակելու ընթացքը—ներսուծականից մինչև յեզրափակիչ զրույցը՝ տեղի ունենախմբակի մի պարագմունքի ընթացքում: Այդ գեպքում ներածական զրույցին պետք ե հատկացնել 10—15 ըոպե, յենթախմբակների աշխատանքի համար—40—60 ըոպե: Յեթե մի պարագմունք չի բավականացնում, աշխատանքը կարելի յե բաշխել և 2 պարագմունքի վրա, բայց դրանից պետք ե հնարավորին չափ խռուսափել:

## ԽՆԴՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

Մի քանի դեպքերում խմբակի աշխատանքը կարելի յի շատ հաջող կառուցել խնդիրներ լուծելու վրա: Այդ միջոցը հատկապես կարելի յի գործադրել ռազմական խմբակներում (տակտիկայի, տեղագրության և այլ հարցերի վերաբերյալ): Ընդհանուր կրթական խմբակներում (թվաբանության, յերկրաչափության), քաղաքական վորոշ խսրակներում (այն խմբակներում, վորոնք աշխատում են թվական տվյալների հետ, որին նակ, զյուղատնտեսական հարկով են զբաղվում) և այլն: Ընդունենք, որինակ, վոր վաշտային հրաձգարանում աշխատող խմբակը խնդիր է գրել իր առաջ վարժվել մինչև հրաձգային

նշաններն ընկնող տարածությունները սահմանելու մեջ, Խըմ-  
րակի պարապմունքը կիրառվում է, որինակ, այս կերպ, Պա-  
րապմունքը տարիում կամ զորանոցի բակում Յե-  
թե խմբակի մասնակիցները ծանոթ չեն նշված հարցին, ապա  
միտնամից խնդրի լուծմանն անցնելու անհնարին Աւկավարը  
նախ 15—20 րոպե տևող նախնական զրույց և տանում, զորի  
ժամանակ մասնակիցներին հայտնում և մի շարք անհրաժեշտ  
տեղեկություններ և կանոնները Մեր վերցրած օրինակում զե-  
կավարը նշելով տարածության չափելու անհրաժեշտությունը  
ճիշտ հրաձգության համար, բացատրում և տարածությունը չու-  
փելու միջացները և ցույց տալիս տարածությունը աշխով չա-  
փելու յերեք-չորս հասարակ ձև, Զափազանց կարենը ե, զոր-  
պեսզի մասնակիցները վոչ միայն մերենայորեն յուրացնեն չա-  
փելու տեխնիքական ձևերը, այլ հասկանան նրանց եյությունը  
Յեթե խմբակի մասնակիցները քիչ թե շատ յուրացնում  
են հիմնական տեղեկությունները, զեկավարը առաջարկում և  
լուծել մի շարք կոնկրետ խնդիրներ։ Վոչ մի կերպ չի կարելի  
խնդիրը տալ ամբողջ խմբակին, Խըմակը փոքրաթիվ լինելու  
դեպքում ևս անհրաժեշտ արգյունքները չեն առացվի, յերբեք  
չեն հայտարարվի խմբակի բոլոր անդամների, մասնավանդ ազե-  
լի թույլերի ինքնազործունելու թյունը։ Անսպատակահարմաք  
և առանձին մասնակիցներին խնդիրներ առաջարկելու։ Ամե-  
նից լավ և խմբակը բաժանել յենթախմբակների, և աշխատան-  
քը բաշխել նրանց միջև։ Պետք ե աշխատել յենթախմբակներին  
միենույն աշխատանքը չտալ Յուրաքանչյուր խմբակ աշխա-  
տում և ինքնուրույն, զեկավարը հետեւում և յենթախմբակների  
աշխատանքին և անհրաժեշտ դեպքերում տալիս և խորհուրդ-  
ներ և ցուցումներ։ Յենթախմբակի մասնակիցները լու-  
ծում են միասին, խորհրդակցելով մեկը մյուսի հետ։ Վոչ մի  
կերպ չպետք և արգելել յենթախմբակի մասնակիցներին խըն-  
դիրներ լուծելիս ոգտվել այս կամ այն ձեռնարկներով, Ազելին,  
զեկավարը պետք և հանձնարարի այդ ձեռնարկներն ու խրա-  
խուսի և իրենից և ձեռնարկներից, աղյուսակներից ու կանո-  
նազրքերից անհրաժեշտ տեղեկանք ստանալու ցանկություն-  
ները։

Հաջող կիրառման դեպքում, խնդիրների լուծումը—խմբա-  
կային աշխատանքի ամենալավ ձեռքից մեկն եւ Անհրաժեշտ և  
միայն, զորպեսզի զեկավարը կիրառի այդ ձեր վոչ զորպես ըս-

տուզում, այլ կարողանաւ տալ նրան գրավչություն և մասնաւ-  
կիցների մեջ հետաքրքրություն առաջացնի: Հակայական նշա-  
նակություն պես եւ ունենա խնդիրների ճիշտ կազմելը կամ  
ընտրություն կատարելը: Կերացական, չար, սիեմատիկ խնդիրը  
յերբեք չի հետաքրքրի կարմիր բանակայիններին: Իոն կրեա,  
զործական, գրավիչ ձեռվ տրված խնդիրը միշտ կտա անհրա-  
ժիշտ արդյունքները: Կարևոր ե, ի գեպ, նշել, վոր լուրջ խընդ-  
րին զուգութաց միշտ կարելի լինի՝ ոգտազործել հանաքի ձե-  
ռնեցագ (թվարանական, սաղմական և այլն) խնդիրները: Վատ-  
չի լինի, յեթե զեկավարին հաջողվի խնդրի լուծման պրոցեսի  
մեջ տառողջ մբցուկցության վորոշ տայր մացնել, ինարկել, վըն-  
ուապես չթուլլատրելով, վորոշեսղի աշխատանքը, պրիմիտիվ խո-  
ղի վերած լի: Առաջարակ խմբակայէն աշխատանքի մեր վեր-  
լուծած այդ բազմազան ձեհերի մեջ շատ բան կախված է ձեռ-  
ներկցությունից, հնարազիտությունից և խմբակի իրեն զեկա-  
վարից:

### ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԵԼԸ

Մի քանի խմբակներում, վորոնք տեսական ընույթ են կր-  
րում, մասնակիցներին կարելի լի հանձնաբարել սիստեմատիկ  
աշխատանք—ժողովել և կարգավորել այս կամ այն նյութերը:

Արբինակ կարող է ծառայել «լիազոր ներկայացուցիչների»  
խմբակը, վորոն իր առաջ խնդիր և գնուռ ծանօթանալ միջադ-  
գային գրությանը: Եման խմբակի մասնակիցները բաժանում  
են իրենց միջև առանձին յերկրներին վերաբերող լրագրական  
նյութերի ժողովելու և ուսումնասիրելու աշխատանքը:—մեկը  
«վերցնում» և Անգլիան, մյուսը Ֆրանսիան, յերբորզը Սմերի-  
կան, և այլն: Մասնակիցներից յուրաքանչյուրն «իր» յերկրի  
համար տեսր (այլրում) և վարում, վորոնել և փակցնում ե թեր-  
թերից կտրած ամենից հետաքրքրի թղթակցությունները, հոգ-  
վածները, նկարները և այլն: Ժամանակ առ ժամանակ հրավիր-  
վում ե խմբակի պարագմունք, —«կոնֆերանսներ», վորոնից  
մասնակիցները ուսումնասիրված նյութերի հիման վրա տեղե-  
կություն են տալիս այս կամ այն յերկրի գրության մասին:  
Խմբակի զեկավարը կանոնավոր հետեւմ և մասնակիցներից  
յուրաքանչյուրի աշխատանքին, մատնանշումն այն հոգվածնե-  
րըն ու թղթակցությունները, վորոնք պետք ե կարգալ և կրտ-  
քել, ոգնում ե լուծել ծայր առած խնդիրները, զեկավարում և  
«լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսները»:

## Ե Գ Ս Կ Ո Ւ Ր Ս Ւ Ա Ն Ե Ր Ը

Խմբակային աշխատանքի ամենագրավիչ և ոգտակար ձևերից մեկն ել եքսկուրսիաներն են: Զկա խմբակի և վոչ մի տեսակ, վորի համար եքսկուրսիան այս կամ այն չափով ընդունելի չէինի: Արդյունաբերության զրության հարցերով գրաղվող խմբակը կարող է եքսկուրսիա կազմակերպել գեպի մոտակա զործարանը: Խորհրդային շինարարության հարցերն ուսումնասիրով խմբակը — խորհրդների հերթական համագումարի առթիվ գումարված ցուցահանդեսը կամ թե խորհրդային վորեն հիմնարկություն: Խագոմական տեխնիկայով զբաղվող խմբակի աշխատանքը լրիվ չինի տռանց հաճախելու մոտակա մասնագիտական զորամասը կամ ՊԱԶԲ-Ավիաքիմի թանգարանը (յեթե կա): Բնագիտական խմբակը, հատկապես ամառը, պետք է իր ամբողջ աշխատանքը կասուցի եքսկուրսիաների վրա: Թատերական խմբակի համար ավելորդ չի լինի տեղական թատրոնին ծանօթանալը և այլն: Կուրեսոր և միայն, վորպեսպի երսկուրսիան խնամքով նախապատրաստված լինի և ամեն կերպ ոգտագործվի այն, վորպես խմբակի հետուգա ամրող աշխատանքի լավագույն իւլյուստրացիա:

Մենք քննեցինք խմբակային աշխատանքի միայն ամենատարածված, զործածական, տիպիկ ձևերը և իսպառ մի կողմը թողինք նեղ, մասնագիտական բնույթ կըող ձևերը (որինակ գեղարվեստական և այլն խմբակների աշխատանքը): Նա, ով ուշադիր կարդա մեր խորհուրդներն ու ցուցումները, կկարողանա ողտագործել նրանց իր հետագա աշխատանքի ընթացքում՝ գտնելու համար լավագույն ձևեր ու մեթոդներ մեր այնքան բազմատեսակ ու բազմակողմանի աշխատանքի համար, վորպիւրին և խմբակային աշխատանքը:

## ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏՐԱՍՎԵԼԸ ՅԵՎ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Դիմենք վերջին հարցին, զեկավարի պատրաստվելը խըմբակի պարապմունքի համար: Այդ հարցը ձեռք է բերում արտակարգ կարեռ նշանակություն: Վորքան ուզում ես լավ առաջարկներ ու խորհուրդներ առաջադրիր խմբակի աշխատանքի համար, նրանք բոլորն անօգուտ կլինեն, յեթե զեկավարն իր աշխատանքին և պարտականություններին մատենա առանց ան-

հրաժեշտ պատասխանատվության գիտակցության, յեթև նա լուրջ և խորը չմոռենա նրանց և ուշադիր չմշակի իրեն հանձնված խմբակի գործնական բոլոր հարցերի կազմակերպումը:

Խմբակի աշխատանքի մանրազննին և լուրջ պատրաստությունն ամենից լաւը աշխատանքն ե՝ խմբակի ղեկավարի պարտականությունը, և նրա աշխատանքի հաջողության և արդյունավետության միակ հաստատուն գրավականը:

## ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԻՐ ՎՐԱ

Քաղղակն ու լենանկյան խորհուրդը նշում են խմբակի հերթական աշխատանքի թեման, ղեկավարը համապատասխան ցուցումներ և ստանում: Նա առաջին հերթին ուշադիր գըրուցում և քաղղակի, հրամանատարի և կուսակցական քիչի հետ այն խնդիրների շուրջը, վոր առաջադրվում են նրա խըմբակի համար և ստացված ցուցումների հիման վրա դիմում աշխատանքի մանրազննին պատրաստման: Ինչից պետք ե սկսել այդ պատրաստությունը: Ղեկավարի համար սխալ կիներ, յեթե նա, խմբակի համար թեմա նշելուց հետո անմիջապես անցներ գործնական հարցերի մշակմանը: Մինչև պլանի կազմելը, մինչև ունկնդիրների համար կոնկրետ նյութեր ընտրելը և այլն, ղեկավարը անպայման պետք ե ինքը ուսադիր ուսումնասիր և մօսակի այն հարցը, վորի վրա պետք ե աշխատի խմբակը: Նույնիսկ, յերբ այդ հարցն իրեն ծանոթ ե, յերբեք ավելորդ չի լինի վերականգնել և թարմացնել հիշողության մեջ իր նախկին գիտելիքները: Վատ ե, յերբ ղեկավարը պետք ե պատրաստվի պարապմունքներին այն գրքույկներով, հոդվածներով և նյութերով, վորը հետո նա պետք ե տա իր խմբակին՝ մշակելու համար: Վորպես կանոն, ղեկավարն իր մոտ պետք ե ուսնենա ավելի շատ նյութ, քան նա յենթադրում է տալ կարմիր բանակայինին: Նա պետք ե ուսնենա վորոշակի ոժանդակ, վորից, նայած պայմաններին, մասնակիցների կողմից առաջադրած հարցերին, թեմայի մշակման ընթացքին, նա կկարողանա քաղել անհրաժեշտ լրացուցիչ նյութը:

Ուստի, դիմելով պատրաստման, ղեկավարը պետք ե նշի իր մոտ նյութի թեկուզ և մինիմալ ցանկը, վորը նա պետք ե կարդա և ուսումնասիրի: Ամենից լավն ե, համապատասխան կոնսուլտացիայի և ցուցումների համար դիմել քաղղակին, վաշտի: Հրամանատարին, գնդային գրադարանի վարիչին, քաղցրա-

պիտության դպրոցի զեկավարին, կամ վերջապես անձամբ աչքի անցկացնել աեղեկատու գրքերը, հանձնարարական ցուցակները, Անհրաժեշտ ցուցութիւններն ստանալով և նյութեր ձեռք բերելով, զեկավարը պետք և սկսի մշակել ժողոված նյութը, սիստեմատիվացիայի յէնթարկել իր զիտելիքները տվյալ թիմայի շուրջը, ուշադիր քննել բոլոր վոչ պարզ գրությունները և գրված հարցն իր համար պարզեցնել ամրողապես և դուզին: Միաժամանակ, այդ աշխատանքի պրոցեսում, անհրաժեշտ ե գրի առնել ամենակարենոր յեզրակացությունները, ընդգծել մեծրերութիւնները և նշանակել այն փաստերը, վորոնք կարող են ոգտագործվելիքի խմբակի պարագաների համար, ընտրել անհրաժեշտ թվերը և այլն:

Նախնական այդ ուշադիր և խորացրած մշակումը հնարավորություն կտա զեկավարին իր խմբակի աշխատանքի ճիշտուղղությունը նշել: Ամենից առաջ կարենոր և հաշվի առնել, թե ինչ են ուղղում ստանալ խմբակից նրա մասնակիցները, նրանք ինչ զիտելիքներով և տրամադրություններով են զարիս խմբակը, ինչ հարցեր են նրանց հուզում և զրավում: Մյուս կողմից հարցերի ամբողջ այն գումարից, վոր պետք և մշակի խմբակը, պետք և ստացադրել ամենազլիսավոր հանգույցային գրությունները, վորոնց շուրջը պետք և կէնտրոնացնել կարմիր բանակայինների հասուկ ուշադրությունը, վորոնք պետք և հասուկ խնամքով պարզաբանվեն: Բացի այդ, պետք և ճշգրիտ նշել այն տեղեկությունները, վորոնք պետք և հայտնվեն խմբակի մասնակիցներին: Մատճելով այս ամենը, զեկավարը պետք և պարզ ձեռքիրպի իր համար, թե ինչի պետք և ձգտի նա խմբակի աշխատանքում, և պարզ ու վորոշ նպատակ դնի իր աշխատանքի համար:

## ՊԱՐԱՊՈՒԽԻՆՔԻ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Միայն այս ամենից հետո կարելի յե ձեռնարկել խմբակի առանձին պարապմունքների պլանի կազմելուն և մշակմանը: Ամենից առաջ, հաշվի առնելով խմբակի մասնակիցների կազմը, ընդհանուր մակարդակը և ձգտութիւնները, յէլնելով հարցի եյությունից և ծավալից, անհրաժեշտ ե քիչ թե շատ մոտավորապես նշել խմբակի աշխատանքի անողությունը և նրա պարապմունքների քանակը: Դեկավարը պետք և թիման բաժանի միքանի առանձին հարցերի այնպես, վորպեսզի յուրաքանչյուր

պարտպմունքի ընկնեն մեկ—յերկու միանգամայն ամբողջացած հարցեր, Այնուհետև պետք ե նշել, թե ինչ ճանապարհով, ինչ ձեռքով պետք ե մշակվի այդ հարցերից յուրաքանչյուրը—արդյոք, խմբակը պետք ե աշխատի տպագիր վոր և ե նյութի վրա, թե պետք ե պատրաստի այս կամ այն ձեռնարկը, կարելի յե եքսկուրսիա կազմակերպի, գործադրել խաղը և այլն, վերջապես անհրաժեշտ ե այստեղ իսկ վորոշել, թե ինչ ձեռվ կարելի կլինի հայտարերել խմբակի աշխատանքի արդյունքները, ինչ միջոցներով կարելի կլինի խմբակը շաղկապել լենինյան անկյան ամբողջ աշխատանքի հետ:

Այդ պլան—կմարդի շուրջը պետք ե նյութ ժողովել, վարի հիման վրա և պետք ե ծափալվի աշխատանքը խմբակում: Մասնակիցների ինքնուրույն աշխատանքի համար նյութ ջոկելը— զեկավարի ամենաբարզ և պատասխանառու անհիմքն և զեկավարը պետք ե վոչ միայն նշի խմբակում ընթերցվելիք զրքույցի կը կամ հողվածը, պլանը կազմի, ընտրի այն խողիրը, վոր պետք ե լուծեն մասնակիցները և այլն,—այլ նա պետք ե այդ ամբողջ նյութը խնամքով փերանայի և մշակի: Յեթե խոսքը վերաբերում է զրքույցին կամ հողվածին, առա պետք ե գեն զցել մի շարք յերկրորդական և խրթին մասեր, թողնելով միայն ամենազլխավորները, կազմել անհասկանալի խոսքերի բառարան: Յեթե պլանը բարդ է, պետք ե գծել այնպես, վորպեսզի մասնակիցները հեշտությամբ գլուխ հանեն նրանից: Յեթե պատրաստի թվեր են, պետք ե ընտրել նրանցից ամենակարենը և կազմել զիազրամներ: Առանց այդպիսի մշակման, անդամ հաջող ընտրած նյութը բավարար չափով պետքական չե լինի աշխատանքի համար:

Խմբակի աշխատանքի համար նյութը ընտրելուց բացի, զեկավարը պետք ե նշի և այն նյութը, վորը նա պետք ե հանձնարարի մասնակիցներին՝ ազատ ժամանակը կարդալու և անհատական մշակման համար:

## ՀՐԱԿԱՆԳՉԱԿԱՆ ՊԱՐԱՊՈՒՆԵՔ, ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՅԵՎ ՓՈՐՁԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Խմբակի զեկավարին պարապմունքների պատրաստման պրօցես մեծ ողնություն ցույց կտան հրահանգչական պարապմունքները: Այդ պարապմունքները կարող են լինել յերկու կարգի—կամ վաշտում, քաղցեկի զեկավարությամբ մի շարք

գործնական խնդիրների շուրջը՝ խմբակային աշխատանքի բովանդակությունը, մեթոդիկան և կաղմակերպումը վաշտում, կամ թե զնդի մասշտաբով միտեսակի խմբակների համար (որինակ ռազմական խմբակների կամ ընդհանությունութական խմբակների զեկավարների համար): Հրահանգչական այդ պարագամունքներում խմբակի զեկավարը կոտանա անհրաժեշտ ցուցումներ, այսուղ նա կարող է փոխանակել իր փորձը ուրիշ զեկավարների հետ, հաշվի առնել նրանց նվաճումները և դրանց հիմուն վրա ուղղել նկատված բացերը:

Իր աօխատանիքի պլանը, նշան կոնսոլեկտը և այլն, խմբակի զեկավարը պետք է ներկայացնի վաշտի քաղղեկի հաստատության: Անհրաժեշտության դիպքում նա պետք է այդ անենը համաձայնեցնի և վաշտի հրամանատարի հետ (յեթի խոսքը վերաբերում է առաջմական խմբակին): Բոլոր գծվարությունների դեպքում, բոլոր հարցերի լուծման համար զեկավարը պետք է զիմի վաշտի քաղղեկին և ստանա նրանից անհրաժեշտ ցուցումներ: Վաշտի քաղղեկը լինինյան անկյան խորհրդի հետ միասին պետք է ստուգի խմբակի զեկավարի աշխատանքը, հրահանգի նրան, ցույց տա նրա սիստեմերը, նշի նրանց վերացման միջոցները և այլն:

Վերջում աօխատանիքի փորձի հաշվառման մասին:

Վորքան խմբակային աշխատանքի հարցերը համեմատարար քիչ են մշակված, այնքան այդ աշխատանքի իմբ գումարած փորձ դեռ չկա, այնքան ել խմբակի աշխատանքի փորձի հաշվառման հարցը բացառիկ նշանակություն և ձեռք բերում: Շատ հաճախ այդ գործին ձևական վերաբերմունք են ցույց տալիս, խմբակի աշխատանքի հաշվառումը վեր են ածում ձևական և վոչինչ չսսող տեղեկությունների ներկա յեղողների քանակը, պարագամունքների թիվը և այլն: Դրանից պետք է վճռապես խուսափել: Ի՞նչ ուղղություններով պետք է ընթանա խմբակի աշխատանքի փորձի հաշվառումը:


**Առաջինը**՝խմբակի յուրաքանչյուր պարագամունքնից հետո զեկավարը պետք է լինինյան անկյան որատեարի մեջ մըտցնի իր տպավորությունները պարագամունքի մասին, յերբեք չսահմանափակվելով պաշտոնական տեղեկություններով, այլ մանրամասն մատնանշել տարած պարագամունքը, այն հարցերը, վոր տվիլ են կարմիր բանակայինները պարագամունքի ժանառակ, պատամի, թե ինչ մեթոդներով և տարել պարագամունքը,

ինչպես և կազմակերպվել մտանակիցների ինքնուրույն աշխատանքը, վորոնք են աշխատանքի արդյունքները և այլն:

**Յերեսորդ**, — չափազանց կարևոր և, վորպեսզի զեկավարնիր համար որատեար պահի, վորի մէջ իմի կզումարի ամբողջ այն նյութը, վոր մշակել և նա խմբակի պարապմունքների համար—պլան, կոնսոլիդ, մասնակիցներին տրված հանձնարարություններ և այլն: Դեկավարն իր որատեարում կմտցնի և իր տպավորությունները տարած աշխատանքի վերաբերյալ:

**Յերեսորդ**, — զեկավարը պետք և ամեն կերպ փոխանակի իր փորձը հրահանգչական պարագաներում, իր ընկերների համանձնական խոսակցությունների ժամանակ, լենինյան անկյան խորհրդի ժողովներում և այլն:

**ՏԵՐՈՐԴ** — խմբակի ակտիվը և լուրջ զեկավարը պետք և լայն փոխանակի իր փորձ թերթում և ժուրնալում, առա համապատասխան թղթակցական նյութեր, և իր հերթին, ոպտազօրձի թերթն ու ժուրնալը իր մեթոդական փորձը ընդլայնելու համար:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220025201

A 25 201  
11

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

---

|||